

562

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԽԱՆՃԵԱՆԻ

ԳԵՂՐԳ ԴԱՐՁԻ

ՍԻԱՀՈՒՇ ԵՒ ՍՈՒԴԱԲԵ

ԴՐԱՄԱ.

ՄԻ ՊԱՏԿԵՐՈՎ, ԵՒ ԶՈՐԾ ԱՐԱՐՈՎ,

891.99

Դ-28

89L-99

Դ-28 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ԽՍԵՑԵԱՆԻ ՇՆՈՐՀԱԿԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Առաջնային Գրադարան
ՏԻ ՔԵՐԵՏ ՇԽՈՎԵԼԻ
L I B R A R Y
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵԼԱԿԱ
ARMENIAN PRELACY

ԳԵՂԳ ԳԱՐԳԻ - Կ

Ճիկում 12/2
1936թ.

ՍԻԱՀՈՒՇ ԵՒ ՍՈՒԴԱԲԵ

ԴՐԱՄԱ

ՄԻ ՊԱՏԿԵՐՈՎ ԵՒ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՎ

(Նիւթն առնեած է Ձերդովսու Շահ-Նամեից)

Տպարան «Մոդերն» Թևիրան

1936

Ամեն իրաւունք վերապահուած է հեղինակին

Այս թատերգութիւնն առաջին անգամ բեմադրւել է Նոր-Զուղայուս

1935 թ. յունիո 15-ին:

INTRODUCTION

L'œuvre immense de Ferdowci est un domaine considérable. C'est une source inépuisable d'inspirations, une véritable encyclopédie de l'âme humaine, d'où des générations entières peuvent puiser des compositions de premier ordre. On peut y trouver des quantités considérables de sujets de romans et de drames. Le Shah-Nameh est avant tout une œuvre dramatique par excellence. Ce n'est pas une simple épopée. On y voit toutes les faces de la vie humaine. Les personnages sont plutôt des êtres humains qui ont peu de choses prodigieuses. C'est une épopée réaliste si on peut la définir ainsi.

Le romantisme n'y est introduit que pour donner de l'attraction à l'ensemble de l'ouvrage. On y remarque même des passages qui sentent le symbolisme.

Le poète national de l'Iran est un véritable connaisseur de la mentalité de l'homme, c'est un observateur remarquable et un psychologue pratique. Il a lu l'âme humaine à livre ouvert.

Pour interpréter les passages de cette œuvre immense le meilleur moyen est d'y chercher des sujets de drames dans le genre de celui que Monsieur Guévork Darfi fait paraître dans ces feuilles sous le titre de «Siavoush et Soudabeh».

Ce drame est tiré du meilleur épisode du Livre des Rois,

on y voit un cas de conscience des plus curieux: l'amour et le devoir. Le héros répond à l'appel du devoir et sacrifie son amour.

Mais pour interpréter un grand poète comme Ferdowci il faut être un véritable écrivain de talent, ce qui n'est pas donné à tout le monde. Il faut une connaissance parfaite de la langue presque archaïque du poète, de son génie producteur, de son don d'observation. Il faut savoir combler les lacunes que les nécessités de l'art poétique ont laissées. Il faut des expériences de dramaturge, de régisseur et de metteur en scène. Bref, il faut toutes les connaissances du métier. Monsieur Guévork Darfi possède toutes ces qualités et c'est ce qui rend sa production digne du grand nom de Ferdowci.

Je remercie M. Guévork Darfi de m'avoir donné l'occasion de lire ce drame avant son apparition et je suis heureux de pouvoir dire ici que son œuvre est le meilleur essai de ce genre qu'on a si souvent essayé de développer.

Je suis certain que le public lui réservera le meilleur accueil et je souhaite qu'il veuille bien représenter avec les mêmes qualités d'autres épisodes remarquables de l'œuvre immortelle du plus grand poète de l'Iran.

Saïd Naficy

MEMBRE DE L'ACADEMIE IRANIENNE

ՅԱՐԱՋԱԲԱՆ

Ֆերդովսու գործը գրական մի ընդարձակ անդաստան է, ներշնչման մի անսպառ աղբիւր, մարդկային հոգու մի ճշմարիտ հանրագիտարան, որից ամբողջ սերունդներ կարող են առաջնակարգ երկերի, վէպերի և գրամաների համար առատօրէն նիւթեր քաղել: Շահ-Նամէն ամենից առաջ մի սքանչելի գրամատիկ երկ է. նա միայն մի պարզ գիւցազներգութիւն չէ: Այստեղ երևան են գալիս մարդկային կեանքի բոլոր երևոյթները: Անձնաւորութիւններն աւելի շուտ մարդկային էակներ են, որոնք արտակարգ շատ բան ունեն: Դա մի իրապաշտական գիւցազներգութիւն է, եթէ կարելի է այգպէս որակել: Ռոմանտիզմն այդտեղ մացրւած է գրւածքի ամբողջութեանն աւելի գրաւչութիւն տալու համար: Նրա մէջ խորհրդապաշտութիւնը ցուցադրող որոշ մասեր ես կան:

Իրանի ազգային բանաստեղծը մարդկային մտայնութեան իսկական ճանաչողն է, մի ականաւոր նշմարող և մի գործնական հոգեբան: Նա կարողացել է մարդկային սիրաը կարդալ բաց գըրքի պէս:

Այդ ընդարձակ գրւածքի որոշ մասերը մեկնաբանելու համար ամենալաւ միջոցն է գրամայի նիւթ վերցնել՝ այն եղանակով, ինչպէս պ. Դէորգ Դարբին ներկայացնում է այս էջերում «Սիաւուշ և Սուլաբէ» խորագրի տակ:

Այս գրամայի նիւթը Շահ-Նամէի լաւագոյն մի գրւագն է,

ուր խղճի խնդրի ամենահետաքրքրական մի ձեն է ցուցադրւած՝
Սէր Եի ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Եւ հերոսը պատասխանում է պար-
տականութեան կանչին, զոհաբերելով իր սէրը:

Բայց Ֆերգովսու նման մի մեծ բանաստեղծի երկը մեկ-
նաբանելու համար պէտք է ճշմարիտ տաղանդաւոր գրող լինել
մի շնորհք, որ ամէն մարդու արւած չէ: Պէտք է կատարելապէս
տիրապետել բանաստեղծի գրեթէ վաղնջենական լեզւին, պէտք է
ըմբռնել բանաստեղծի արտադրող հանձարն ու զննող ձիրքը:
Պէտք է իմանալ լրացնել այն բոլոր բացերը, որոնք առաջանում
են բանաստեղծական արւեստի անհրաժեշտութիւնների բերմամբ:
Պէտք է դրամատուրգի, բեմադրի և բեմայարդարի փորձառութիւն-
ներ ունենալ: Մի խօսքով՝ թատերական արւեստի բոլոր ծանօ-
թութիւններն ունենալ: Պ. Գէորգ Դարֆին տիրապետում է այդ
բոլոր յատկութիւններին և այդ է պատճառը, որ նրա այս գըր-
ւածքը արժանի է Ֆերգովսու մեծ անւան:

Ծնորհակալ եմ պ. Գէորգ Դարֆուց, որ ինձ առիթ տւեց
կարգալու իր դրաման՝ լոյս ընծայելուց առաջ և ես երջանիկ եմ,
որ կարող եմ այստեղ ասել, որ նրա այս գործը լաւազոյնն է այդ
տեսակի գրւածքների մէջ, որ այնքան յաճախ փորձել են կազմել
ուրիշները:

Ես համոզւած եմ, որ ընթերցող հասարակութիւնը նրան
լաւազոյն ընդունելութիւնը ցոյց կը տայ: Յոյս ունեմ, որ պ.
Գէորգ Դարֆին կը բարեհաճի միենոյն յատկութիւններով ներ-
կայացնել իրանի մեծ բանաստեղծի անմահ գրւածքից ուրիշ
նշանաւոր գրւագներ ես:

ՍՍՅԻՒ ՆԱՅԻՍԻ

ԻՐԱՆԵԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆԴԱՄ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- ՍԻԱՀՈՒՇ — Իրանի թագաժառանգը
- ՍՈՒԴԱԲԻ — Իրանի թագուհին
- ՌՈՍՏԱՄ — Իրանի ազգային հերոս
- ՔԷՅ ՔԱՀՈՒՄ — Իրանի գահակալը
- ԲԱՀՐԱՄ — Իրանցի երիտասարդ զինւորական
- ՑԱՐԱՆԳԻՄ — Թուրանի արքայագուստը
- ԱՅԲԱՍԻԱԲ — Թուրանի թագաւորը
- ԳԱՐՄԻԼԱԶ — Թուրանի թագաւորի եղբայրը
- ՀՐՊԵՏ — Քէյ Քաւուսի պալատի մոդպետ
- ԹԷՅՄՈՒՐ — Թուր. սպայ, Գարսիլազի գործակից
- ՓԵՐԻՆԵՐ — Հարեմի աղջկներ

ՆԱԺԻՇՏՆԵՐ

- ԱՆԽՕՍ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ — Իրանցի և թուրանցի
պալատականներ, զինւորներ և սպասաւորներ

ՊԱՏԿԵՐ

ՊԱՏԿԵՐ

ՔԵՑՀԱԻԽՆԻ ԱՓին

Լայն եւ ընդարձակ մի դաշտ, խորքով բարձրադիր ըլուրներ. աջ կողմը, հեռուն, երեւում է յորդառաստ Ջէյնունը. ճախ կողմում մի քանի ծառեր ստեղծ են ծգել կանաչ խոտերի վրայ. Դրսում հնչում են իրանական փողերը եւ թիւ յետոյ երեւում են Ռոստամը եւ Սիստաշը:

1.

ՌՈՍՏԱՄ ԵՒ ՍԻՍԻՇ

ՌՈՍՏԱՄ Այս կանաչ բլուրի լանջից մենք ազատ կերպով կարող ենք դիտել հպարտ Ջէյնունը, որ բաժանում է յաւէտ թշնամի երկու երկրներ՝ իրանն ու Թուրքանը:

ՍԻՍԻՇ Ես սքանչացումով եմ դիտում այս ընդարձակ տարածութիւնը, որ մեծ ու հսկայ բախումների արիւնոտ ու զմադաշտն է եղել: Այստեղ ես դու տարել քո փառաւոր յաղթանակները: Գերեզմաններով հարուստ այս դաշտը քո անպարտելի արիութեան անխաք վկան է: Պատմիր ինձ նորից թէ ինչ խիզախ հարւածներով դու գետին էիր գլորում Թուրքանի համբաւաւոր հերոսներին:

ՌՈՍՏԱՄ Ո՞չ, պատմել չեմ կարող, այս վայրերի տեսքն իմ հոգին լցնում է վշտով ու զառնութեամբ:

ՍԻԱՀՈՒԾ Գիտեմ, ամէն անգամ երբ զու մտարերում ես Թուրանն ու իր արիւնոռուշտ մարտիկներին, սիրտդ զայրոյթով է լցում, վրէժի կատաղի բոցը խանձում է հոգիդ... և ուղում ես...

ՈՌՍՏԱՄ Ես ոչինչ չեմ ուզում... կրծքիս տակ մի անբուժելի վէրք կայ, հին ու միշտ թարմ մի վէրք... Այստեղ, Եազդանից անիծւած այս դժբախտ վայրում, մի անիծակուռ օր ես սպանեցի իմ որդուն, հայրական սուրս նրա կողը պատռեց և ձեռներս կարմրեցին իմ հարազատ զաւակի արիւնով:

ՍԻԱՀՈՒԾ Ներիր ինձ, սիրելի Ռոստամ, ես չէի նախազգում, որ այս վայրերը քո հոգու մէջ պիտի արթնացնէին այդ դառն ու մորմոքիչ յիշողութիւնը: Քո ախոյեանը՝ արլութեամբ քեզ հաւասարող քո որդին՝ ընկել է հերոսական մահով և այդ կորուստն արժանի է քո լացին ու արցունքներին:

ՈՌՍՏԱՄ Եթէ նա ապրէր, եթէ չար բախտը նրա կեանքի արել գեհենական խաւարում չը թաղէր վազաժամ, մեծ, շատ մեծ էր լինելու նա: Աֆրասիաբն հպարտ էր, որ մի այդպիսի անվեհեց ուզմիկ էր գտել: Վստահելով Սոհրաբի կամքին ու հանճարին, Թուրանի արքան նրան յանձնեց իր զօրքի հրամանատարութիւնը:

ՍԻԱՀՈՒԾ Եւ, իրանի որդին, թուրանական բանակներն էր առաջնորդում դէպի յաղթանակ, բախտի ինչ անհեթեթ խաղ...

ՈՌՍՏԱՄ Այս. և հին հերոսները հլու, հնազանդ, եկել էին նրա հրամանի տակ կուելու: Ես, սկ նախազգացումը կըրծաքիս տակ, գնում էի իմ արժանաւոր ախոյեանի դէմ

կուելու: Ո՞վ չարագուշակ օր: Ի՞նչ կը լինէր, եթէ այդ մի հատիկ օրն աշխարհին պակասէր: Թշնամի բանակներն ահա շարքով կանգնած, լարւած, մտահոգ, մեր կոփւն են դիտում: Այդ երիտասարդ ուզմիկը, որի անցեալին ու համբաւին ծանօթ չեմ, գրգռում է ինձ... Կրքի փոթորիկը եռում է կրծքիս տակ, մթագնում է իմ հոգու երկինքը, մոռանում եմ Եազդանն ու բարին և անողոք հարւածով նրա կողն եմ պատռում... հոսում է կարմիր յորդառատ արիւնը, մի տարօրինակ դողոց է անցնում մարմնովս, բոնում եմ նրա ձեռքը... Օ՛հ, զարգանդ ու սարսափ... տեսնում եմ այն ոսկէ ապարանջանը, որ ես նւիրել էի իր մօրը՝ իմ կնոջը՝ Թահմինէին... բացում է աչքերը և իմ լացն է տեսնում, ճանաչում է ինձ: «Հայր, զու իմ հայրն ես», ասում է նա, «ինչու ինձ սպանեցիր, հայր...»: (արցունը լսեղում է նրան): «Քէյ Քաւուս արքան եթէ ցանկանար... մի երկու կաթիւ կեանքի ջրից...» (լաւլիս է): Է՛հ, ներիր արքայազնն, թոյլ տուր բարձրանպմ այս բլուրի գագաթը և այնաեղ՝ իր հողաթմբի վրայ արցունքներս թափեմ, որ հոգիս հովանայ (հեռանում է):

2.

ՍԻԱՀՈՒԾ

ՍԻԱՀՈՒԾ Ծանր է հուժկու հերոսի լացը տեսներ: Ո՞վ ամենակարող Եազդան, միիթարիր Ռոստամի դառնացած հոգին: (Մտածկոտ) Այսօր լրանում է իմ քսան տարին.

մոգպետների ասելով այսօր մի մեծ գուշակութիւն է արևելու ինձ համար: Սակայն այս դաշտում ոչ մոգպետ կայ, ոչ աստղագէտ... Սիրտս ախուր է. գուցէ Ռուտամի վշտիցն է: (Երազուն) Բայց այս ինչ սարսուռ է անցնում մարմնովս և թմրեցնում իմ գլայարանները... Այս սքանչելի բնութեան տեսքն է կախարդում ինձ իր հմայքով: (Նստում է ծառի տակ, մի քարի վրայ, զլուխը ծեռների մէջ) Քսան տարի... քսան տարիս լըրացաւ այսօր... (Գլուխը բարձրացնում է եւ նայում դէպի Ձէյնունը) Այդ ինչ եմ տեսնում, Ձէյնունի ափից կարծես մի կախարդական էակ է ոլանում դէպի ինձ. արդեօք նա է, որ պիտի գուշակութիւն անի... (Բլուրի բարձրունքին, արեւի շողերի մէջ, թուրանցի մի աղջիկ է պատկերանում, իշխանունու հագուստով, աղամանդէ ու ոսկէ ապարանջաններով ու վրզնոցվ: Սիասուշը, որ նորից աշքերը փակել էր, վեր է նայում, տեսնում է հրաշագեղ տեսիլը եւ կանգնում է ոտքի): Ո՞վ ես դու, ո՞վ լուսաւոր տեսիլք, մի հերոս իրանցու ոգին, թէ ցեղիս թշնամի մի դեկի պատկերը, որ եկել է հոգիս զարգանդով լցնելու. կամ թէ երկնից իջած այն բարի պատգամարերն ես, որ պիտի գար իմ ապագան գուշակելու: Խօսիր, ով խորհղաւոր ոգի:

3.

Տեսիլք եի ՍիԱՀՈՒԾ

Տեսիլք (Քաղցր եւ մեղմ ճայնով) ես այն եմ, ինչ որ դու տեսնում ես:

ՍիԱՀՈՒԾ Յո գոյութիւնն իրական է ու երկրային: Տեսիլք ես ոչ տեսիլք եմ և ոչ ստւեր: ՍիԱՀՈՒԾ ինչու ուղեցիր ինձ երևալ: Տեսիլք Որովհետեւ Եազդանը հրամայեց որ երեամ: ՍիԱՀՈՒԾ Եազդանը. Իրանի, թէ Թուրանի: Տեսիլք Բախտի Եազդանը: Դու ես խնդրել Նրանից, գու ես ինձ կանչել: ՍիԱՀՈՒԾ Դու անծանօթ ես ինձ և ես քեզ չեմ կանչել: Տեսիլք Մենք իրար մարմնական աչքերով չենք տեսել բայց հոգով միշտ: Ու կանչում ենք մենք իրար, գու՝ ինձ, ես՝ քեզ: ՍիԱՀՈՒԾ Զեմ յիշում. Երբ եմ կանչել քեզ: Տեսիլք Դու ինձ կանչել ես երազանքիդ և անորոշ պրապտումներիդ ժամերին, ամէն արշալոյս դու ինձ որոնում ես արկի ոսկեզօծ ճառագայթների մէջ, ամէն զիշեր հեռաւոր աստղերի լոյսերի մէջ ես որոնում ինձ: Որոնում ես և չը գիտես, որ որոնում ես, ճանաչում ես և չը գիտես, որ ճանաչում ես: ՍիԱՀՈՒԾ Որոնում եմ քեզ, ճանաչում եմ քեզ, բայց դու ով ես: Տեսիլք Մեր հոգիները քոյրեր են. դու իմ բախտն ես, ես՝ քոնք: ՍիԱՀՈՒԾ Մեր հոգիները քոյրեր են. բայց դու թուրանցի ես երևում. հարազամ է կերպարանքդ արդեօք: Տեսիլք Իմ կերպարանքը հարազամ է և իսկական: ՍիԱՀՈՒԾ Ուրեմն դու իմ բախտը չես, ոչ էլ ես քո բախտը: Մեր հոգիները քոյրեր չեն: Մեր ցեղերն ատում են իրար և արիւնահոս Ձէյնունը բաժանում է մեզ յաւէտ: Տեսիլք Յո մայրն էլ թուրանուհի է: ՍիԱՀՈՒԾ Այս, բայց նա փախել է իր հօրից, իր երկրից:

ՏԵՍԻԼՔ Դու էլ մի օր կը փախչես քո հօրից, քո Կըկո՞ից:
ՍԻԱԽՈՒՇ Եւ ուր կը գնամ:

ՏԵՍԻԼՔ Թուրան: դու կը դաս Թուրան:

ՍԻԱԽՈՒՇ Բայց ես իրանի գահաժառանգն եմ:

ՏԵՍԻԼՔ Դու չես ցանկանայ թագաւորել:

ՍԻԱԽՈՒՇ Եթէ դու մի պարզ ոգի ես և ոչ թէ եաղդանի հոգին,
ինչպէ՞ս ես գուշակում ապագան:

ՏԵՍԻԼՔ Քո բախտը կարդացել եմ գիշերով, աստղերի պայծառ
ցոլքի մէջ:

ՍԻԱԽՈՒՇ Կարսղ ես դու բոլոր մարդկանց բախտը գուշակել. եւ
թէ կարող ես, ուրեմն կախարդ ես:

ՏԵՍԻԼՔ Ինձ յայտնի է միայն երկու բախտ՝ մեր երկուսի ա-
պագան: Մենք կապւելու ենք միմեանց հետ բախտով,
սիրով ու վշտով: Դու ինձ կը սիրես, ես՝ քեզ և մեր
հայրերը մեզ կատեն:

ՍԻԱԽՈՒՇ Ուրեմն ես մի ապերախտ հայրուրաց կը լինեմ:

ՏԵՍԻԼՔ Դու արդար և ազնիւ ես լինելու: Զարերը դաւելու են
քո դէմ, բայց անունդ զերծ է մնալու արատից:

ՍԻԱԽՈՒՇ Քեզ չեմ հաւատում, գերն են քեզ ուղարկել, որ դաս
և հոգիս լիցնես կասկածով: Ես սիրում եմ իմ հօրը և
իմ հայրն էլ զուրգուրում է ինձ: Նա իմ տէրն է, ես
նրա հնագանդ հպատակը: Արքայիս կամքը կը կատա-
րեմ և երբեք չեմ հակառակի նրան:

ՏԵՍԻԼՔ Արդարութեան համար մի օր դու նրա դէմ անհնա-
զանդ կը լինես, հոգիդ կը ծառանայ նրա բոնութեան
դէմ և դու կապաստանես Թուրան:

ՍԻԱԽՈՒՇ Ո՞հ, լոիր, լոիր և անյայտացիր, չարագուշակ տեսիլը:

ՏԵՍԻԼՔ Միայն ես կը լինեմ քեզ պատսպարողը, ես կը բաժա-

նեմ քո վիշտն ու տառապանքը, թշւառութեանդ ժա-
մերին իմ սիրոյ մէջ կը գտնես քո հոգու միսիթարանքը:

ՍԻԱԽՈՒՇ Բայց ով ես դու, ով:

ՏԵՍԻԼՔ (Հեռանլով) Ֆարանգիսը, Թուրանի արքայադուստ-
րը (անյայտանուժ է):

ՍԻԱԽՈՒՇ Սպասիր, սպասիր, (աշքերը շփելով) չը կայ, էլ չը կայ,
ֆարանգիս... Թուրանի արքայադուստրը...

4.

ՍԻԱԽՈՒՇ

ՍԻԱԽՈՒՇ (Սթափւելով) Երազում եմ ես, օրը ցերեկով, աչքերս
բաց: Ճիշտ է, որ իմ հոգու խորքում փառաւոր ապա-
գայիս սպասնացող մի վտանգ եմ զգում, սակայն ինչը
կարող է իմ հզօր կամքը խորտակել: Հեռու ինձնից
թուրութիւն և կասկած: Ռոստամը վերադառնում է.
ցոյց տամ նրան ճակատս հանդարտ ու պայծառ և հո-
գիս՝ պատրաստ ամէն տեսակ պայքարի:

5.

ՈՂՈՏԱՄ ԵՒ ՍԻԱԽՈՒՇ

ՈՂՈՏԱՄ (Վարադառնալով) Ի՞նչ ես կարծում, սիրելի իշխան,
Նիմրուզ վերադառնալու ժամանակը չէ՝ արդեօք:

ՍԻԱԽՈՒՇ Նիմրուզ և այնտեղից էլ էսթամբ:

ՈՂՈՏԱՄ Էսթամբ... մի գուցէ ձանձրացել ես արդէն իմ ընկե-
րակցութիւնից և անտանելի եմ դարձել պատերազմնե-
րի մասին արած իմ պատմութիւններով:



ՍԻԱՀՈՒԾ Սիրելի Ռոստամ զու գիտես, որ ապերախտութիւնն իմ
հոգու մէջ տեղ չունի: Ես չեմ ուզում քեզնից բաժան-
ւել. կը գնանք Էսթախը և զու կը մնաս ինձ մօտ:

ՌՈՍՏԱՄ Էսթախըն ինձ համար հմայք և գրաւչութիւն չունի:

ՍԻԱՀՈՒԾ Գիտեմ, այստեղ յաճախ են քո հանդէպ անարդար եղել:

ՌՈՍՏԱՄ Ես անկիրթ ու կոշտ մի զինւոր եմ. պալատի աղմուկն
ու խրախճանքն ինձ հաճոյք չեն պատճառում: Խա-
ղաղութեան օրերին սիրում եմ ժամանակս հանգստի և
առանձնութեան մէջ անցկացնել:

ՍԻԱՀՈՒԾ Դու որդեգրել ես ինձ և յաճախ ես ինձ կրկնել. որ
Սոհրաբի տեղն եմ զբաւում քո սրառում: Շրջապատիր
ինձ նոյն ջերմ զուրգուրանքով, որ ունէիր դէպի նա:

ՌՈՍՏԱՄ Դժւարանում եմ հակառակել. կը հետեւ քեզ մինչև
Էսթախը:

ՍԻԱՀՈՒԾ Արդէն մի անգամ արքային ցոյց եմ տւել ուազմական
այն բոլոր յատկութիւնները, որ քո դաստիարակու-
թեան շնորհիւ ժառանգել եմ քեզնից. ուազմական իմ
ընդունակութիւնները միայն քեզ իմ պարտական:

ՌՈՍՏԱՄ Ես միայն իմ պարտքն եմ կատարել:

ՍԻԱՀՈՒԾ Ժամանակն է, որ գաս և արքայից ստանաս ինձ հա-
մար կրած տառապանքիդ և նեղութեանդ վարձատրու-
թիւնը:

ՌՈՍՏԱՄ Արքան ոչինչ պարտական չի իր հպատակին:

ՍԻԱՀՈՒԾ Ազնիւ ու հայրենանուէր հպատակը արքայի թագի լու-
սարձակ ադամանդն է:

ՌՈՍՏԱՄ Հպարտ եմ ու երջանիկ, որ վաղւայ իմ արքան զու ես
լինելու:

ՍԻԱՀՈՒԾ Ես անհունօրէն գոհ իմ ու բախտաւոր, որ դու իմ

դաստիարակն ես և ուզեցոյցը:

ՌՈՍՏԱՄ Միայն ժամանակն ու պարագաները կարող են գնա-
հատել իմ դաստիարակչութեան արժանիքը: Զէյհունի
այս դաշտում ընկած մեր բիւրաւոր հերոսները թող
վկայ լինեն իմ երդումին. երբ էլ որ լինի, ուր էլ որ
լինի, ով դիւցազն Սիաւուշ, իմ փորձւած բազուկը կը
ծառայի քեզ: Քո վիշտը իմ վիշտն է լինելու, քո ել-
ջանկութիւնը՝ իմ երջանկութիւնը: Դու իմ զաւակն ես:

ՍԻԱՀՈՒԾ (Նետւելով նրա գիրկը) Դու իմ հայրն ես:

ՌՈՍՏԱՄ Զաւակս, սիրիր եազգանին, Նրա կամքը կատարիր:
Սիրիր քո ժողովուրդը, սիրիր իրանը մի անհուն սիրով:

ՍԻԱՀՈՒԾ Կաշխատեմ իրազործել իրանի մեծ հերոսի խելացի
պատէրները:

ՌՈՍՏԱՄ Հաւաքենք զինւորներին և շարունակենք մեր ճամբան:

ՍԻԱՀՈՒԾ Թոյլ տուր առաջ անցնեմ և քո հրամանը հազորդեմ
նրանց (մեկնումէ):

6.

ՌՈՍՏԱՄ

ՌՈՍՏԱՄ Մեծանոգի՛ արքայազն... (կամացուկ) թշւառ, վատա-
բախտ արքայազն: Եթէ տստղագէտների գուշակու-
թիւններն իրականանան, ուրեմն զարունդ կարձ է
լինելու և վախճանդ ահաւոր: Դու երբեք արքայ չես
լինելու... (յուզմունքը ինեղուում է նրան): Սակայն
քայլենք անտրառունջ այն ճամբով, որ ամենակարող

Եազդանն է որոշել մեզ համար: (Արցունքը ողողում է
նրա դէմքը. դուրս է գնում Սիատոշի մեկնած կող-
մով: Դրսում հնչում են փողերը):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Թ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն
ST. NERSES SHNORHALI
Ա Ր Ա Զ Ի Ն Ա Ր Ա Ր LIBRARY
ARMENIAN PRELACY

ԷՍԹԱԽՆԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Ընդարձակ ու շքեղ պատշգամ։ Խորքում դրւած է արքայական մի բարձրադիր զան, որի խրաքանչիր կողմում գտնում են երկու տրիշ եւ աւելի ցածր զաներ։ Այդ բազմասիւնանի պատշգամը զարդարւած է տօնական հանդիսաւորութեամբ։ Առաւոտ է. նորածագ արշալոյսի շողերը խաղում են զարդարանքների ուկիների հետ։

1.

ՍՈՒՐԲ

ՍՈՒՐԲ (Դուրս է զալիս խորքի մի սենեակից եւ մտահոգ առաջանում է դէպի քեմ)։ Կասկածն ու մտահոգութիւնն ինձ անհանգստացնում են։ Ո՞վ է այդ օտարականը։ Վերջին վայրկեանին ինձ չի խարելու։ Արգեօ՞ք իր դամբանի մէջ խեղդեց Խուբչէնը։ (Զարախինդ ժպիտով) Խուբչէնը... իր մահւան սուզը վերջացաւ և նա գեռ կենդանի է։ Ցցւել էր իմ ճամբին։ Խոկ հս չեմ սիրում երկրորդը լինել և ոչ մի պալատում։ Ոխն ու խանդն իմ հոգու մէջ վրէժի մի անմարելի կը բակ են վառել։ Մեր կրքոտ պայքարը վերջանալու էր

իմ պարտութեամբ, երբ այն մարդը, որին սպասում եմ այժմ, ներկայացաւ ինձ և խոստացաւ Խուրչէհրին կործանել... Ահա գալիս է. իր խօսքը կենդանութիւն կամ մահ է ինձ համար: (Երեւում է Գարսիվազը հնդկական մոգակետի տարազով, խորհրդաւոր հայեացը է նետում իր շուրջը եւ մօտենում Սուղարէին):

2.

ՍՈՒԴԱԲԵ ԵՒ ԳԱՐՄԻՎԱԶ

ՍՈՒԴԱԲԵ Ո՞Վ դու խորհրդաւոր պատգամաբեր, ի՞նչ լուր ես բերում:

ԳԱՐՄԻՎԱԶ Ազնւափայլ Սուդաբէ թագուհին այլոս մրցակից չունի:

ՍՈՒԴԱԲԵ Դու ինձ լաւ ծառայեցիր, գոհ եմ քեզնից: Անյագ վերէժիս յագուրդ տալու համար պատմիր ինձ նրա վերջին վայրկեանները:

ԳԱՐՄԻՎԱԶ Դեղերի այն զօրեղ բաղադրութիւնը, որ խմցրի նըրան քառասունհինդ օր առաջ, մեռցըել էր նրա զգայարանները, առանց նրա հոգին մարմնից բաժանելու:

ՍՈՒԴԱԲԵ Գիտես, մենք երկու հանճարներ ենք. դու՝ հնդկական մոգակտ, ես՝ համաւերանցի կախարդ:

ԳԱՐՄԻՎԱԶ Այն, թագուհի, իրար լրացնող երկու հանճարներ:

ՍՈՒԴԱԲԵ Դու մահւան մանգաղը, իսկ ես՝ հնձւորը:

ԳԱՐՄԻՎԱԶ Խոհուն, խելացի ու հեռատես հնձւորը:

ՍՈՒԴԱԲԵ Սխալ ու վտանգաւոր էր միանգամից մեոցնել Խուրչէհրին: Եթէ արքան սպասնար կեանքիս, կը գնայինք Խուրչէհրին կարթնացնէինք իր մահւան անկողնուց և

դա հրաշք կը լինէր, իմ ձեռքով կատարւած մի հրաշք և ժողովուրդն ինձ կը պաշտէր, իսկ արքան կը դառնար իմ գերին:

ԳԱՐՄԻՎԱԶ Իզուր է այդ մտահոգութիւնը: Արքան նրան շուքով տաճար տանելուց յետոյ, երկրորդ օրը նրան մոռացաւ: Եւ գիտե՞ս ինչու:

ՍՈՒԴԱԲԵ (Արհամառհանքով) Որովհեակ ստոր ծագում ունէր:

ԳԱՐՄԻՎԱԶ (Ատամների արանքից) Այդպէս...

ՍՈՒԴԱԲԵ Ի՞նչպէս:

ԳԱՐՄԻՎԱԶ Այդպէս են վարւում իրանի իշխանները Թուրանի իշխանուհիների հետ:

ՍՈՒԴԱԲԵ Այս վայրկեանին Թուրանի իշխանուհիներն ինձ չեն հետաքրքրում. պատմութիւնդ շարունակիր:

ԳԱՐՄԻՎԱԶ Եթէ նրա մահւան պարագաները նկարագրեմ, դու կը սարսուս ահից:

ՍՈՒԴԱԲԵ Մի վայրկեան իսկ չեմ գունատւի:

ԳԱՐՄԻՎԱԶ Ի՞նչ արգանդ է քեզ սնուցանել. միթէ դու կնոջ ծնունդ չես:

ՍՈՒԴԱԲԵ Ես մի էդ վագրի ստինքներն եմ ծծել երբ երեխայ էի. շարունակիր:

ԳԱՐՄԻՎԱԶ Լսիր ուրեմն: Այս գիշեր ես նրա դամբանումն էի. սպասում էի որ արթնանար, երբ սկսեց շարժել, ես ջահը վառեցի: Կամացուկ աչքերը բացեց, մի քանի կաթիլ կեանքի ջրից խմցրի նրան:

ՍՈՒԴԱԲԵ Անտեղի բարեսրտութիւն:

ԳԱՐՄԻՎԱԶ Ես ուզում էի նրա հետ խօսել, նա պիտի լսէր իմ ձայնը, իմ անէծքը:

ՍՈՒԴԱԲԵ (Զարմացած) Նրան անիծէիր, բայց ինչու:

ԳԱՐՄԻՎԱԶ Մի շտապիր: Երբ ոյժերը վերստացաւ, բարձրացաւ, նստեց, նայեց ինձ. նայեցի նրան... Մենք իրար համացանք, սակայն լոռութիւնը չը խզւեց: Զգալով, որ կարող է յանկարծ գութը ոճրի նման իմ սիրտը քանդել և ինձ մոռացնել տալ իմ պարտականութիւնը, ջան հանգցրի և գերեզմանային լոռութեան մէջ գաշոյնս քաշեցի (խոպոտ ծայնով) ու խաւարի մէջ փայլող իր զոյգ աչքերը հանեցի... և յետոյ սիրտը...

ՍՈՒԴԱԲԻ Տեսնում եմ, դեռ արեան հետքեր կան ձեռներիդ վրայ: ԳԱՐՄԻՎԱԶ (Նայելով ծեռներին) Այս, իմ արեան հետքերը: ՍՈՒԴԱԲԻ Քո արեան հետքերը. դու հնդիկ մոդպետ, իսկ նա թուրանցի...

ԳԱՐՄԻՎԱԶ (Դիւային ծայլով) Խմացիր, այն հնդիկ մոդպետը, որ քեզ հետ միասին այս դաւադրութիւնը սարքեց և որին դու խոստացել ես սադրանքներով քանդել այս պետութեան հիմքերը, մի բնածին վագր է, մի ահեղ թուրանցի. Խուրչէնը հայրն է նա, Աֆրասիարի եղբայր Գարսիվազը...

ՍՈՒԴԱԲԻ (Սաոր դաժանութեամբ) Դու ինձ գերազանցում ես քո ոխով: Ի՞նչն էր քո այդ կատաղի քինախնդրութեան պատճառը:

ԳԱՐՄԻՎԱԶ Ի՞նչ, անպատել իր հօրը, փախչել իր երկրից, գալ այստեղ և իր հոգին ու մարմինը ծախել իրանի արքային՝ Թուրանի ոխերիմ թշնամուն և մնալ անպատիք... Եւ յետոյ դու ուզեցիր: Իմ կատաղութիւնն աւելի բոցավառեց, Երբ քեզ տեսայ: Վերցըու մէջտեղից Քաւուսին ու իր ժառանգին, գարձիր տէրն Իրանի: Երբ որ էլ ես ուզեմ, իմն է Թուրանը, քոնն է Թու-

րանը: Սուրս քո ոտների տակ, կը պաշտեմ քեզ արեի փոխարէն: Սիրիր ինձ, եղիր իմը, զու այդ արդէն խոստացել ես ինձ...

ՍՈՒԴԱԲԻ (Դարսիվազի զազակային այեացքից շշմած) Այս, խոստացել եմ, բայց ոչ հիմա, ոչ այժմ... Երբ տէրը կը լինես Թուրանի և Իրանի, այն ժամանակ ես կը լինեմ քո թագուհին: Այժմ վերադարձիր, լծւիր աշխատանքի և դրդիր Աֆրասիարին Իրանի վրայ յարձակւելու:

ԳԱՐՄԻՎԱԶ (Մտածկոտ) Ի՞նչ պատճառ տամ նրան, ի՞նչ առիթ ստեղծեմ:

ՍՈՒԴԱԲԻ Հնարագէտ ես, մի հնարք գտիր:

ԳԱՐՄԻՎԱԶ (Յաղթական) Գտայ, ի՞նչ սքանչելի գիւտ:

ՍՈՒԴԱԲԻ Եւ ի՞նչ գիւտ է այդ:

ԳԱՐՄԻՎԱԶ Խուրչէնը մահը:

ՍՈՒԴԱԲԻ Խնչպէս թէ Խուրչէնը մահը:

ԳԱՐՄԻՎԱԶ Կասեմ, որ Քաւուսին է սպանել Խուրչէնըին, Խուրչէնը իմ աղջիկն էր, իսկ զու իմ եղբայրն ես, Աֆրասիար. առ աղջկաս վրէժը Քաւուսից:

ՍՈՒԴԱԲԻ Եւ նա կը հաւատանի:

ԳԱՐՄԻՎԱԶ Նա միշտ էլ հաւատում է ինձ:

ՍՈՒԴԱԲԻ Բայց Խուրչէնը գիակը ի՞նչ արիր:

ԳԱՐՄԻՎԱԶ Հրպետն այրել տեց և աճիւնը ոսկէ անօթի մէջ ուզարկեց տաճար:

ՍՈՒԴԱԲԻ Այդ լաւ է, շատ լաւ: Դէհ, մեկնիր այժմ և վերադարձիր յաղթանակով:

ԳԱՐՄԻՎԱԶ Զալի որդուն չը մոռանաս, քանի նա կենդանի է, մենք յաղթական չենք կարող լինել:

ՍՈՒԴԱԲԻԵ Նա իմ թշնամին է և ես կը կարողանամ նրան ու Քառուսին թշնամացնել իրար հետ:

ԳԱՐՄԻՎԱԶ Գնում եմ: Մեր դաշինքն անխախտ պիտի պահեի: Ես քեզ ծառայեցի, իսկ այժմ մեր նպատակն իրագործելու համար պէտք ունեմ քո աջակցութեան:

ՍՈՒԴԱԲԻԵ Ես կաջակցեմ քեզ:

ԳԱՐՄԻՎԱԶ Հաղորդիլ ինձ բանակի և պալատի գաղտնիքները: Մնաս բարով, թագուհի: միշտ յիշիլ իմ ամենազօր տաղանդը: Աղջկաս զոհեցի քո շահերի համար: Կրկին կը ծառայեմ քեզ: Եղիր իմ դաշնակիցը և ես քեզ կը դարձնեմ երկու ընդարձակ երկրների թագուհին: Ես այդ կարող եմ, միայն թէ սիրիր ինձ: (Երկար ու խորը հայեացը է նետում Սուդաբէի վրայ եւ հեռանում է):

3.

ՍՈՒԴԱԲԻԵ

ՍՈՒԴԱԲԻԵ Լինել երկու ընդարձակ կայսրութիւնների առաջին թագուհին... Իմ փառասիրութիւնը շոյելու համար ի՞նչ գեղեցիկ խստում է այս: Գնա և ուրախացիր իմ խոստումով, որը խոստում է միայն: Ես ուրիշ կայսրութիւն եմ որոնում, իմ հոգին ուրիշ կայսրութիւն է ցանկանում: Սիրոյ ու հեշտանքի կայսրութիւնը... Ես երիտասարդ եմ, գեղեցիկ, լսկ թաւուսը՝ ծեր. նրա փաղաքանքներն ինձ զգեցնում են: Վաղուց եմ որոնում ես մէկին, որ արժանի լինի իմ հմայքներին, ինձ պէս գեղեցիկ, զղայուն և երիտասարդ լինի: Եւ

այդ մէկը դու չես, ժանաատեսիլ Գարսիվազ: Դու կը ծառայես ինձ որքան որ ես կը ցանկանամ, իսկ յետոյ կը փշրեմ քեզ, որպէս հնացած մի գործիք: (Յենում է սիւնին): Զը կայ իմ ախոյեանը, ազատւեցի նրանից և ուրախացայ մի վայրկեան... յետոյ ի՞նչ... Ա՛խ, այս կրակը, որ այրում, խանձում է իմ սիրտը. սիրոյ անյագուրդ տենչն է, որ զգայարաններս է լափում... Ո՞ւր է ճարը, ի՞նչ է հնարը, ում սիրել, ում... (Կրօստ աշքերը կիսախոտի, մնում է յենած սիւնին: Իր սենեակից դուրս է զալիս Քէյ Քաւուար եւ առաջանում դէպի Սուդաբէն):

4.

ՔԵՅ ՔԱԽՈՒՍ ԵՒ ՍՈՒԴԱԲԻԵ

ՔԱԽՈՒՍ Շտապել ես, որ ամենից առաջ դու ողջունես ինձ այս պալատում:

ՍՈՒԴԱԲԻԵ (Ժունկի է զալիս) Իմ բարեգութ արքայ:

ՔԱԽՈՒՍ Բարձրացիր և առաւօտեան այս գեղեցիկ մենութեան մէջ ցոյց տուր ինձ քո գեղեցկութիւնը, որ հեշտանքի գինիով իմ զգայարաններն է արքեցնում: Վերցրու շզարշդ և ցոյց տուր ինձ քո մերկ ուսերը: (Սուդաբէն կատարում է թագաւորի ցանկութիւնը): Մարմինդ վարդագոյն է, զգայուն ու նուրբ, մորթիդ դողում է մատներիս տակ... Այս հաճոյքը, որ ես վայելում եմ, մի վայրկեան է տեսում: Եթէ դու մարմարից լինէիր, տիեզերքի առեղծւածային սիրոյ ամենագեղեցիկ արձանը կը լինէիր:

ՍՈՒԴԱԲԵ ԻՆՉ որ կամ, ևս իմ արքայինն եմ. եթէ այդ արձանը
վրդովում է քեզ, փշբիր, նա քոնն է:
ՔԱԽՈՒՄ Պիտի պահեմ այդ արձանը, որ ամէն երեկոյ փշբեմ
նրան իմ կրծքի վրայ:
ՍՈՒԴԱԲԵ Քո սիրոյ համար անարժան մի արարած եմ ես:
ՔԱԽՈՒՄ Առաջին անգամ երբ ես քեզ տեսայ քո հօր պալա-
տում, ու հայքը կախարդեց ինձ: Գեղեցկութիւնդ
փրկեց Համաւերանի թագաւորի կեանքը:
ՍՈՒԴԱԲԵ Ես եղայ իմ հօր պալատութեան առւզանքը:
ՔԱԽՈՒՄ Դու եղար իմ յաղթանակի գրաւականը:
ՍՈՒԴԱԲԵ Դու շատ բարի ես գէպի ինձ, տէր արքայ:
ՔԱԽՈՒՄ Իսկ դու իմ հանգէպ անկեղծ չես, Առւզա-
գէտներին պատւիրել էի, որ քո սիրու կարգան, բայց
նրանցից ոչ մէկը չը կարողացաւ հոգուդ գաղտնիք-
ները կորզել:
ՍՈՒԴԱԲԵ Ի՞նչ գաղտնիք կարող է ունենալ ստրուկը:
ՔԱԽՈՒՄ Մի անթափանց ստւեր խորհրդաւոր շղարշի պէս պա-
տում է քեզ: Ուզում եմ կրծքիդ տակից դուրս քաշել
սիրտգ, առնել ձեռներիս մէջ, զննել, իմանալ, թէ ինչ
չից է կազմւած:
ՍՈՒԴԱԲԵ (Շոյող ծայնով) Դու միայն իմ մարմինն ես սիրում,
էլ ինչու. ես հետաքրքրուում քո ստրկուհու հոգով:
ՔԱԽՈՒՄ Ստրուկների հոգին անասունի հոգի է՝ թոյլ և հլու,
իսկ քո հոգին տարբեր է, սիրելիս:
ՍՈՒԴԱԲԵ (Կախարդանքով) Որովհետեւ իմ հոգին սիրում է քեզ
մի անհուն, յանգուգն ու նախանձուս սիրով: Որովհե-
տեւ ես քեզ սիրում եմ այնպէս, ինչպէս քո կանանցից
և ոչ մէկը չի սիրել քեզ: Ահա թէ ինչու դարմացնում

եմ ես քեզ, ահա իմ սրտի գաղտնիքը:
ՔԱԽՈՒՄ (Հմայլած) Բառերդ շոյում են հոգիս: Դու ճշմարիտ
ես ասում, միւսները ստում են: Դու ես միայն ինձ ան-
կեղծօրէն սիրում:
ՍՈՒԴԱԲԵ (Ծոյն կախարդանքով) Որովհետեւ անկեղծ եմ, դրա
համար էլ առեղծւած եմ թւում: (Տիուր) Եւ զրպար-
տիչ պալատականներն ուզում են իմ վեհափառ տիրոջ
մօտ ինձ վարկաբեկել:
ՔԱԽՈՒՄ Հպարտացիր քո գեղեցկութեամբ և արհամարհիր բո-
լորին: Կը հըամայնմ քեզ չարախօսողների բերանները
կարել:
ՍՈՒԴԱԲԵ Քո արքայական շուքի տակ ես ապահով եմ բոլոր գա-
ւերից ու հալւածներից: (Շոյանքով) Մեծ է իմ ար-
քան, գեղեցիկ և ամենազօր:
ՔԱԽՈՒՄ Այդպէս, ինչ անուշ է քո ձայնը: Նայիր հեռուն, այդ
ի՞նչ փոշի է բարձրանում:
ՍՈՒԴԱԲԵ (Որ տարածել էր Քատոսի ոտների տուաջ եւ նրա
ծնկները գրկել, արագ բարձրանում է ու նայում հե-
ռուն) Իրանական սուսների խուրձերն են պապում
արեի ճառագայթների տակ:
ՔԱԽՈՒՄ (Քարձացել է տեղից, մօտեցել եւ նայում է) Տղա-
է, նա այսօր պիտի հասնի: Լրացել է իր քսան տա-
րին. արքայական թագ եմ բաշխելու նրան: Նա գեղե-
ցիկ է՝ գեղեցկութեան աստծուց առաւել և հզօր՝ Ուս-
տամի չափի:
ՍՈՒԴԱԲԵ Ուրեմն աշխարհը նախանձելու է նրան:
ՔԱԽՈՒՄ Եազդանն էլ կը նախանձի նրան: (Ցուզած քայլում է)
Սիաւուշի սիրու զգայուն է, Խուրչէրի մահւան լուրը

վշտացրած կը լինի նրա հոգին. գուրզուրիր նրան,
Սուդարէ, եղիր նրա մայրը, իսկական մայրը:
ՍՈՒԴԱԲԷ ՌԱԿԻ անօթի մէջ պահել եմ նրա մօր աճիւնը:
ՔԱԽՈՒՄ Խուզէհրի հանդէպ քո ցոյց տւած յարգանքը ամբողջ
պալատին զարմացըեց:
ՍՈՒԴԱԲԷ Նա մի առաքինի թագուհի էր:
ՔԱԽՈՒՄ Եւ մեռաւ հակառակ քո ունեցած խնամքին ու թափած
ջանքերին: Սիաւուշը կուղենայ տեսնել նրա աճիւնը:
ՍՈՒԴԱԲԷ Ցոյց կը տամ:
ՔԱԽՈՒՄ Հէնց այսօր:
ՍՈՒԴԱԲԷ Արքայի կամքը թող լինի:
ՔԱԽՈՒՄ Մենակ եղէք երկուսդ և միսիթարիր նրան:
ՍՈՒԴԱԲԷ Ոչ, արքայ, դու ցոյց տուր, դու միսիթարիր:
ՔԱԽՈՒՄ Ես չեմ կարող, ես կը յուզեմ: Նրան ամէն վիշտ մու-
ռացնել տալու համար ընդունիր հարեմ և թող ընտրի
իրեն համար ամենազեղեցիկ փերին:
ՍՈՒԴԱԲԷ Կընդունեմ՝ երբ համայում ես և երբ անպատեն չէ:
ՔԱԽՈՒՄ Ոչ մի անպատեհութիւն, նա իմ զաւակն է և հարեմն
էլ իմ հարեմն է:
ՍՈՒԴԱԲԷ Բայց աճիւնը ցոյց տալ չեմ կարող, ուրիշին յանձնիր:
Չեմ կարող, արտասուքն ինձ կը դաւաճանի, յուզմուն-
քը կը մատնի ինձ:
ՔԱԽՈՒՄ Քո ձայնը քաղցր է և ձեերդ քնքոյշ, հմայիր նրան
քո նազանքով և վիշտն արմատախիլ արա նրա հոգուց:
ՍՈՒԴԱԲԷ Արքայ, ես քո հնազանդ ստրուկն եմ:
ՔԱԽՈՒՄ Գնանք ծածկենք մեր ադամանդակուռ թագերը: Երբ
ես կը բաժանեմ նրանից, այն ժամանակ դու կերե-
ւաս (զնում է):

ՍՈՒԴԱԲԷ (*Մեկուսի*) Նա գեղեցիկ է, երիտասարդ և արի, ես
պիտի գուրգուրեմ նրան, փաղաքշեմ նրան... Գուցէ և
սիրեմ, գուցէ հենց նա է իմ որոնած սիրոյ կայրը,
քսան տարեկան զիւցազնը... (Յուզմունքով բռնած
զնում է Քատուսի յետեւից: Բեմը մնում է դատարկ:)
Հեռում լսում է փողերի ծայնը եւ սրինգների ու
բամբիոների մեղեղին: Սինակիր զինսորները գալիս
եւ շարում են պատշաճի ծայրերին: Դրսում բա-
նակը երգում է իրանական քայլերզը.

Մենք որդիքն ենք վեհ իրանի,
Պաշտում ենք մենք լոյս ու բարի.
Հայրենիքում մեր գեղանի,
Իշխում է մեզ արքան բարի:

Հին դարերից հայրերը մեր
Աւանդել են ոսկի երգեր,
Աւանդել են սէր, զօրութիւն,
Ոսոխի դէմ կատաղութիւն:

Հերոսները մեր անբասիր,
Փառքի գաշտում անծայրածիր,
Դափնին գրկած հպարտանքով,
Նիրհում են լուռ և անլրդով:

Մի սէր ունենք՝ սէր հայրենի,
Մի երգ ունենք՝ գովեն իրանի.
Ազատ, անկախ մեր մեծ երկրում,
Ապրում ենք մենք գոհ, անտրտում:

Մի վայրկեան ամէն ինչ լուռ է եւ յանկարծ լըս-
տում են որոտընդուս ծափեր եւ կեցցէներ. Երեսում
են Սիաւուշը եւ Ռոստամը):

5.

ՈՂՍՏԱՄ ԵՒ ՍԻԱԽՈՒԾ

ՈՂՍՏԱՄ Ժողովուրդը քեզ տեսնելով ուրախութիւնից խելագարւում է:

ՍԻԱԽՈՒԾ Քեզ են մեծարում, սիրելի Ռոստամ: (Ժողովուրդը դրսից. Արևոյ շատ լինի, մեր ազնիւ արքայազն, միշտ հզօր ու յաղթող լինես: Կեցցէ մեր դիւցազնը. մենք ուզում ենք Սիաւուշին տեսնել):

ՈՂՍՏԱՄ Քեզ են կանչում, տէր իմ, ժողովուրդն ուզում է քեզ տեսնել: Բաւարարութիւն տուր նրանց ցանկութեան: (Սիաւուշը մօտենում է պատշզամի և նկինին): Քառուս արքան նախանձելու է իր որդուն:

ՍԻԱԽՈՒԾ Ողջյն, իրանի ժողովուրդ. քո արքայազնը շնորհակալ է քեղանից և թող եազդանը քեզ շնորհի հազար բարիք: Եւ դու, իրանի հզօր բանակ, որ բոլոր պատերազմերից պատւով ու յաղթական ես դուրս եկել, ողջյն ու փառք քեզ: (Փողիը հեշտում են դրսում եւ լսում է ցնծագին աղաղակներ):

ՈՂՍՏԱՄ Տէր իմ, պարտականութիւնս լրացաւ, այժմ թոյլ տուր ինձ հեռանալ:

ՍԻԱԽՈՒԾ Հեռանմել, առանց արքային տեսնելու: Ի՞նչ կասի նա, եթէ քեզ այստեղ չը տեսնի: Զէ՞ որ նա քեզ նշանակել է իմ խնամակալը:

ՈՂՍՏԱՄ Մինչև այսօր:

ՍԻԱԽՈՒԾ Մինչև իմ կեանքի վերջը: Այդպէս վարւելով չես կարծում, որ արքան կը վիրաւորւի քեղանից, նա, որ այնքան սիրում ու յարգում է քեզ:

ՈՂՍՏԱՄ Արքան իմ տէրն է և կարող է ինձ հրամայել յանուն իմ երկրի ու ժողովրդի, սակայն արդար չէր լինի, որ նա ինձ ստիպէր յարգել դաւադիր պալատականներին: **ՍԻԱԽՈՒԾ** Առանց քեզ ի՞նչ եմ դառնալու այս պալատում:

ՈՂՍՏԱՄ Պալատից հեռանալով քեղանից չեմ հեռանում: Զէյհունի դաշտում երդեցի և հաւատարիմ կը մնամ իմ երդումին: Սակայն իմ հոգին... ի՞նչ ասեմ քեզ իմ հոգու մասին, լեցուն է վշտով և արդար ցասումը սիրտս է փոթորկում:

ՍԻԱԽՈՒԾ Ո՞վ է այստեղ քո ատելութեան առարկան:

ՈՂՍՏԱՄ Հայրդ գալիս է. մի ուրիշ անգամ: (Երեսում է Քէյ Քաւուսը, ըրջապատաժ պալատականներով: Ներկաները ողջոյն են տալիս: Դրսում շեփորներն արքայական քայլերզն են նշեցնում, Քաւուսը եւ Սիաւուշը գոկախսուում են):

6.

ՔէՅ ՔԱԽՈՒԾ, ՈՂՍՏԱՄ, ՍԻԱԽՈՒԾ, ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ,
ՍՊԱՆԵՐ ԵՒ ԶԻՆԽՈՐՆԵՐ

ՔԱԽՈՒԾ Իմ ընտիր գաւակ, այս թագի ու գաճի ազնիւ ժառանգորդ: Քո գեղեցիկ ճակատն ստեղծւել է ազամանադակուութագ կրելու: Դու կը լինես իմ պալատի պարծանքն ու երջանկութիւնը: (Պալատականներից մէկին) Թող մունետիկները յայտնեն ժողովրդին, որ երեք օր ուրախութիւն է լինելու ի պատիւ Սիաւուշի, որն այսօրւանից դառնում է թագակիր գահաժառանգ: (Արձակում է Սիաւուշի ճակատի վարսակալը, մի

պալատականի ծեռքից վերցնում է թագը եւ դնում
Սիաւուշի զլիսին: Բոլորը խոնարհում են: Քաւուն
ու Ռոստամը համբուրում են Սիաւուշի ճակատը):
Զաւակ, ի՞նչ ես ցանկանում քո հօրից, ասա և ստացիր:
ՍԻԱԽՈՒԾ Մեծահոգի տէր իմ, արքայական նւէրներով վարձա-
տրիր իշխան Ռոստամին, որ իմ խնամական է և զէն-
քի վարպետը: (Պալատականները նախանձու հա-
յեցը են նետում իրար):

ՔԱԽՈՒԾ (Ռոստամին) Առաջացիր, արքաների դու հաւատարիմ
եւ ազնիւ սպասաւոր: Շնորհակալ եմ իմ որդու սիրոյն
քո կրած նեղութիւնների համար: Հրամայում եմ գան-
ձապետին, որ տասներկու զորու բեռ ոսկի արւի քեզ:
Սիաւուշ, դու էլ քո կողմից վարձատրիր նրան:

ՍԻԱԽՈՒԾ Ես անկարող եմ իմ ծանր պարտքը վճարել... եթէ իմ
արքան ինձ թոյլ է տալիս...

ՔԱԽՈՒԾ Ասա և թող կատարւի:

ՍԻԱԽՈՒԾ Յանուն արքայի և իմ ժողովրդի ես քեզ նւիրում եմ
ազգային հերոս և ուզմիկների իշխան տիտղոսները.
ինձնից կը ստանաս նաև մի ոսկեպատեան սուր:

ԹՈԽՏԱՄ Վեհափառ արքայ և դու, իմ ասպետ իշխան, ես այս-
տեղ չեմ ներկայացել նւէր ու տիտղոս ստանալու:
Տասներկու բեռ ոսկին նւիրում եմ երկրի չքաւորնե-
րին: Տիտղոսներն ընդունում եմ, որպէսզի ժողովուր-
դը դարեր շարունակ պաշտամունքով յիշի մեծահոգի
Սիաւուշին: Այժմ, քանի որ էլ անելիք չունեմ, թոյլ
տւէք ինձ հեռանալ:

ՔԱԽՈՒԾ Թող եազդանը քեզ օրհնի քո հաւատարմութեան հա-
մար: (Ռոստամը ողջունում է արքային ու Սիաւու-

շին եւ հեռանում է): Նրա նայւածքը խրոխտ է ու
արհամարհական և կեցւածքը հպարտ (Սիաւուշը դժ-
գոհում է), բայց սիրտն ազնիւ է: Գնացէք, իշխան-
ներ, գնացէք պատրաստեցէք այս գիշերւայ խնջոյքին:
ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ Արքայազն Սիաւուշ, բախտդ գեղեցիկ ու պայ-
ծառ լինի արեկի լուսաւոր շողերի պէս: (Այդ վայր-
կեանին Սիաւուշը անզգուշութեամբ զուիսը շարժում
է եւ թագը զլիսից վայր է ընկնում: Բոլորը գունատ-
ում են եւ մնում ապշած: Պալատականները փընթ-
փընթալով հեռանում են: Սիաւուշն անփոյթ կերպով
վերցնում է թագն ու նորից ծածկում զլիսին):

7.

ՔԵՅ ՔԱԽՈՒԾ ԵՒ ՍԻԱԽՈՒԾ

ՔԱԽՈՒԾ (Անտրամադիր) Այդ վատ նշան էր:

ՍԻԱԽՈՒԾ Ի՞նչը, հայր:

ՔԱԽՈՒԾ Քո թագն ինչո՞ւ վայր ընկաւ:

ՍԻԱԽՈՒԾ Փոքր էր, գլուխս անզգոյշ կերպով շարժեցի, թագն
ընկաւ: Պատճառը բնական էր և բնական պատճառը
գերբնական հետևանք չի կարող ունենալ:

ՔԱԽՈՒԾ Այդպէս է, որդիս. մենք հաւատում ենք շատ բաների,
որոնց չը պիտի հաւատանք և չենք հաւատում շատ
բաների, որոնց պիտի հաւատանք: Ես էլ իզուր յուզ-
ւեցի: (Հեռուն կանգնած սպասաւորին) Յայտնիր թա-
գունուն, որ գայ իշխանին բարի գալուստ մաղթելու:

ՍԻԱԽՈՒԾ Ես պիտի գնայի նրան ողջունելու, ես իշխան եմ, իսկ
նա թագուհի:

ՔԱԼՈՒՄ Պէտք է բոլորը խոնարհեն քո առջև, ինչպէս իմ առջև են խոնարհւում:

ՍԻԱԼՈՒԾ Դու արժանի ես նրանց պաշտամունքին, իսկ ես գեռես ոչ:

ՔԱԼՈՒՄ Դու արժանի ես, քանի որ ես արժանի իմ: Պահակներ, կարող եք ցած իջնել: (Պահ ոկները զնում են): Իսկ դու առ իմ վերաբերուն և ձգիր ուսերիդ, ճամբից ես եկեք, յոգնած ես և այստեղ օդը զով է:

ՍԻԱԼՈՒԾ Շնորհակալ եմ, տէր արքայ, ես արժանի չեմ:

ՔԱԼՈՒՄ Վերցրու: (Վերարկուն ձգում է Սիանուշի ուսերին եւ ապա զմայլանքով նայում նրան): Թեզ շատ է վայելում այս վերաբերուն. նմանը կը նւիրեմ քեզ: Եազդանը քեզ հետ: (Քաւուսը հեռանում է իր երկու թիկնապահների հետ):

3.

ՍԻԱԼՈՒԾ

ՍԻԱԼՈՒԾ Հայրս ինչո՞ւ է ցանկանում, որ ես Սուդաբէի հետ մենակ տեսնեմ: Մենակ եմ ես այս պալատում. Ռոստամը հեռոցաւ, մայրս էլ չը կայ... Հոգիս ճնշուում է այստեղ, ուզում եմ թողնել հեռանալ այս պալատից, բացդաշտ իջնել ազատ թողնել սեաթոյր նժոյգիս սանձը և հերարձակ սլանալ, սլանալ անվերջ... Իզուր է եազդան ինձ այս զգացումներով արքայադն ստեղծել: Ես պէտք է լինէի Ռոստամի պէս ազատ, անկաշկանդ: Սակայն արքայազն լինեմ, քանի որ արքայազն իմ ժնւել: (Կանգնում է պատշզամի մի անկինում, ծեռ-

ըը յենում է սիւնին եւ երազկոտ նայում հեռուն: Երեւում է Սուդաբէն երկու նաժիշտների հետ, որոնք մնում են խորքում: Սուդաբէն, գեղեցիկ շղարշըն ուսերին ձգած, ձեռքին բռնած ունի Խորչէնի աճինը պարունակող ոսկէ անօթը: Տեսնում է Սիանուշինը եւ հմայում է նրա առնական գեղեցկութեամբ):

9.

ՍՈՒԴԱԲԷ, ՍԻԱԼՈՒԾ եւ երկու ՆԱԺԻՇՏՆԵՐ

ՍՈՒԴԱԲԷ Նա է, երկար տարիների իմ երազանքի ու տենչանքի առարկան, իմ ուզած և որոնած սիրոյ կայսրը... Նա իմը պիտի լինի, իմը, եթէ ոչ... (Յուզմոնքից սկսում է դողալ):

ՍԻԱԼՈՒԾ (Յետ է նայում եւ նկատում Սուդաբէին) Ներիր ինձ, աղնիւ թագուհի, քո զալը չեմ նկատել:

ՍՈՒԴԱԲԷ (Չեռքի ոսկէ անօթը դնում է գանի վրայ) Ներիր ինձ, իշխան, որ քո երազանքը խանզարեցի: Տխուր է իմ այսօրւայ կատարելիք պարտքը, տխուր ու ծանր միանգամայն: Ահա քո թանկագին մօր աճիւնը, որ երկիւղածութեամբ հաւաքել ու լցրել եմ այս ոսկէ անօթի մէջ: Թող եազդանը քո վիշտն ամոքի: Այս է բոլոր մահկանացուներիս վախճանաց վախճանը:

ՍԻԱԼՈՒԾ (Յուզած մօտենում, չոգում է գանի առաջ, վերցնում է անօթը եւ համբուրում) Մայր, ահա թէ ինչ է մնացել քո գեղեցկութիւնից ու փառքից. մի բուռ

մոխիք:

ՍՈՒԴԱԲԵՆ Նրա թարմ աճիւնի առաջ ընդունիր ինձ նրա փոխարէն. խոստանում եմ քեզ սիրել սիրել իմ ամբողջ հոգով:

ՄԻԱԽՈՒՇ (Անօթը տեղաւորում է գահի վրայ) Դու վշտացած ես, թագուհի. լսեցի, որ երկար ժամանակ արցունք ես թափել և սուգ ես պահել. դա վայել էր քո ազնւութեան. շնորհակալ եմ:

ՍՈՒԴԱԲԵՆ (Տենչանքից բորբոքած) Դու իմ զաւակն ես, Միաւուշ, թող այս մայրական համբոյը մեր սիրոյ գրաւականը լինի (համբուրում է Միաւուշի ճակատը):

ՄԻԱԽՈՒՇ (Ծիսթում ու կարմրում է) Շնորհակալ եմ, թագուհի: ՍՈՒԴԱԲԵՆ Կաշաստեմ բոլոր վշտերդ մոռացնել ատլ քեզ, տանջանքիդ ժամերին կը սփոփեմ, կը միսիթարեմ քեզ:

ՄԻԱԽՈՒՇ Ես էլ, թագուհի, կը լինեմ քո հնազանդ զաւակը, կը յարգեմ, կը պատւեմ քեզ, ինչպէս յարգում ու պատւում էլ իմ մօրը:

ՍՈՒԴԱԲԵՆ Մոռացիր վշտերդ, տիրութիւնը չի վայելում քո գեղդիցիկ դէմքին: (Նաժիշտներից մէկը մատուցարանի վրայ մի բաժակ զինի է ներկայացնում Միաւուշին): Խմբիր, դա կը հանգստացնի քո յոգնած ջղերը: (Միաւուշը խմում է զինին): Թոյլ տուր իշխան, որ այդ թանկագին աճիւնը տանին և դնեն եազդանի մարմարակերտ տաճարը:

ՄԻԱԽՈՒՇ Թող տարւի: (Սուդաբէն անօթը յանձնում է նաշիշտներին, որոնք վերցնում են անօթն ու բոլորն էլ հեռանում):

10.

ՄԻԱԽՈՒՇ ԵԼ ՍՈՒԴԱԲԵՆ

ՍՈՒԴԱԲԵՆ ԷԼ մի՛ մտածիր, իշխան, այսուհետեւ ձեռք ձեռքի տւած, իրար սփոփելով մեր ճամբան կը քայլենք: Ի հարկէ, եթէ ընդունես...

ՄԻԱԽՈՒՇ (Մոլորածի նման) Ես ընդունում եմ:

ՍՈՒԴԱԲԵՆ Տուր ինձ քո ձեռքը (բռնում է նրա ձեռքն ու շոյում): Իմ գեղեցիկ, իմ արի ոազմիկ, այս գիշեր գու ներկայ պիտի լինես խնջոյքին. արքան ուզում է, որ ուրախ լինես: Ինձ հրամայեց, որ դամ և քեզ տրամադրեմ ուրախութեան:

ՄԻԱԽՈՒՇ Հայրս շատ ուշագիր է դէպի ինձ:

ՍՈՒԴԱԲԵՆ Նա քեզ շտա է սիրում:

ՄԻԱԽՈՒՇ Ես պաշտում եմ նրան: Ներիր, թագուհի, ինչու չես նստում, յոգնած ես կարծեմ:

ՍՈՒԴԱԲԵՆ Այս, մի փոքր: (Միաւուշի ձեռքը միշտ բռնած) Ա՛խ, այնքան կուգէի... (Նստում է): Դու էլ նստիր:

ՄԻԱԽՈՒՇ Ո՛չ, ես կանգնած կը մնամ:

ՍՈՒԴԱԲԵՆ (Ուսերից կամացուկ սահնեցնում է շղարշը, նազանքով կանգնում է ոտքի, ուսերը մերկ, դէմքը գեղեցիկ ու կախարդող, ամբողջովին կիրք է, սէր ու տարփանը): Ես էլ կանգնած կը մնամ, երբ իմ արքայազնը չի ուզում նստել, երբ իմ պաշտելի դիւցազնը կանգնած է մնում:

ՄԻԱԽՈՒՇ (Մի վայրկեան մոլորած ու կախարդած նայում է նրա մերկ ուսերին, կիրքը եռում է երակների մէջ, երիտասարդ արկնն սկսում է բորբոքւել ապա խըլ-

ծից խայթած այլայլում է եւ դէմքն առնում ձեռ-
ների մէջ)։ Սուդաբէ, Սուդաբէ...

ՍՈՒԴԱԲԵ (Մօսեցել է Նրան. ջերմագին ու անոյշ ճայնով)
Իմ սիրոյ դիւցազն, իմ պաշտելի Սիաւուշ...

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ռ

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

ԵՐԿՐՈՒԴ ԱՐԱՐ

ՀԱՐԵՄ

ՀԱՐԵՄԻ ԸՆԴՈՒՆԱՐԱՆԸ

Աջ կողմը մետաքսէ բարձերով ծածկած երկու շքեղ
բազմոցներ են դրաած, որոնց շուրջը շրջանակածն
շարւած են ուրիշ աւելի ցածրատիր բազմոցներ: Խոր-
թի երկու անկիններում կախւած են մետաքսէ փայ-
լուն վարագոյրներ, որոնք հարեմի զանազան մասե-
րը բաժանում են այդ ընդունարանից: Խորթում երե-
տմ՝ է զիխատը մուտքը, որի իրաքանչիւր կողմում
գտնում է վարագոյրով ծածկած մի պատունան:
Մի բարձր պատանդանի վրայ դրաած է ոսկէ մի
մատուցարան՝ զինիքվ լեցուն կուժն ու արծաթէ բա-
ժակները վրան: Պատերը զարդարւած են: Ամբողջ
ընդունարանը փայլում է արքայական շքեղութեան
ու ճոխութեան մէջ:

1.

ՍՈՒԴԱԲԵ

ՍՈՒԴԱԲԵ (Անուշանոտ բուրմունք է շաղ տակիս զահի եւ բազ-
մոցների վրայ) Կընդունեմ նրան այստեղ և կարբեց-
նեմ անուշ բուրմունքով: Կարբեցնեմ նրան իմ սիրոյ

ու գլւանքի, իմ կրքի ու շոյանքի հզօր ու կախարդիչ բուրմունքով: Իմ աչքերի ու շուրթերի ամենազօր կրակով նրա պարկեցտութիւնը կը յաղթանակեմ: Ի՞մը պիտի լինի նա, իմը: Իսկ եթէ մերժի, եթէ չուզենայ... Օ՛հ, այն ժամանակ էք վագրը կարթնանայ իմ մէջ և ես կը փշրեմ, կը խորտակեմ նրա գեղեցիկ երիտասարդութիւնը: Իմ մարմնի և Սիաւուշի հոգու պայքարն է լինելու այսօր. և վստահ եմ, որ իմ մարմնի գեղեցկութեան առաջ նա կը պարտէի: Բայց կը գայ արդեօք... (Ներս է գալիս հալեմի սպասարորն ու խոնարհում): Գալիս է (սպասարորը զլխով դրական պատահան է տալիս, խոնարհում է ու հեռանում): Կանչեմ իմ փերիներին (երեք անգամ ծափ է տալիս, փերիները յայտնում են վարագոյըների յետերից եւ սիզանեմ գալիս շրջապատում են Սուդաբէին):

2.

ՍՈՒԴԱԲԵ ԵՒ ՏԱՄՆԵՐԿՈՒ ՓԵՐԻՆԵՐ

ՍՈՒԴԱԲԵ Թարմ ու գեղեցիկ էք բոլորդ էլ և արքայազնը բոլորիդ էլ կը հաւանի:

Ա. ՓԵՐԻ Քո գեղեցկութիւնից մեզ բաժին ես տւել:

Բ. ՓԵՐԻ Քո շուրթերից քաղցրութիւն:

Գ. ՓԵՐԻ Քո աչքերից զօրութիւն:

Դ. ՓԵՐԻ Սէր, կախարդանք քո ժպտից:

ԲՈՂՈՐԾ Անուշ գգւանք քո ձայնից:

ՍՈՒԴԱԲԵ Սուս, գալիս է:

ՓԵՐԻՆԵՐ Երգ ու ժպտով ողջունենք, սիրտն ու հոգին գրաւենք:

(Դուսը քացում է եւ չրպետի առաջնորդութեամբ ներս է գալիս Սիաւուշը: Բոյորը խոնարհում են. Սիաւուշը քաղցր ժպիտով ողջունում է նրանց: Հրպետը խոնարհում է եւ հեռանում):

3.

ՄԻԱԽՈՒՇ, ՍՈՒԴԱԲԵ ԵՒ ՓԵՐԻՆԵՐ

ՍՈՒԴԱԲԵ Ողջոյն, իշխան զօրաւոր,
Փառք անունիդ փառաւոր.
Արեդ միշտ վառ լինի,
Արքայորդի իրանի:

(Սուդաբէն գալիս է Սիաւուշին ընդառաջ, ճակատը համբուրում է եւ նրա ծեռքից քոնած տանում նըստեցնում է գաճի վրայ. Ա. Բ. Գ. եւ Դ. փերիները առաջ են գալիս ու երգում. Մնացածները Սուդաբէի հետ կիսաթեք երկարացել են բազմոցների վրայ):

Ա. ՓԵՐԻ Ոյժը քո մեծ, յաղթական,
Մեր թշնամին ոտքեդ տակ.

Եւ կամքովդ արիական,

Տաս իրանին լոյս պսակ:

Բ. ՓԵՐԻ Անվախ, արի, քաջ ուազմիկ,
Երգում ենք մենք ցնծագին,

Զգացումով սրտագին,

Փառքիդ գովքը գեղեցիկ:

Գ. ՓԵՐԻ Հոգիդ ազնիւ, սիրտդ վեհ,
Դու արքայազն աննման.

Եւ թագուհին Սուդաբէ,

Ժպտաց դէմքիդ անվարան:

Դ. ՓԵՐԻ Կտրուկ սուրդ առնական
Շահէ անվերջ, անդադար,
Դափնէ պսակ պատւական,
Գոհարակուռ քո գահին:
(Չորսը միասին պարում են եւ գնում են իրենց տե-
ղերը Ե. Զ. Է. Ե. Հ. Վերիները բարձրանում են եւ
առաջ են գալիս):
ՍՈՒԴԱԲԻ Սիրեցիր դու, մը մէկին:
ՍԻՄԻՈՒԾ Հաւանեցի բոլորին:
ՍՈՒԴԱԲԻ Քո ճաշակին յարմար,
Ո՞րն ես ընտրում քեզ համար:
ՍԻՄԻՈՒԾ Թող դեռ ժպտան նրանք մեզ,
Որ մէկն ուզեմ՝ կասեմ քեզ:
(Ա. Վերին գինին լցրել է բաժակները եւ մասուցա-
րանովներկայացնումէ Սիաւուշին, Սուղարէին եւ փե-
րիներին, Բոլորը բաժակները ծեռներին կանգնում են):
ՍՈՒԴԱԲԻ Գինին ահա բաժակով,
Լոյս արևոտ օրհնելով,
Խմում ենք մենք, ով իշխան,
Ոսկի օրերդ բազմանան:
ՍԻՄԻՈՒԾ Ո՞վ ազնւաշուք Սուզաբէ,
Եւ դուք, չքնաղ վերիներ,
Զեր մաղթանքը, իղձը վեհ,
Սիրտս է յուզում մինչ խորքեր:
(Բաժակները դատարկում են ու նստում):
Ե. ՓԵՐԻ Նազանքն ու պար հարեմի,
Բուրմունքն անուշ գինիի,
Ծիծաղ, ժպիտ, արքեցում,

Թող առն հոգուդ գոհացում:
Զ. ՓԵՐԻ Կեանքիդ գարնան ընթացքում,
Քաղցր բերկրանք, մէր, խմգում,
Զեփիւռը միշտ ականջիդ,
Հնչէ անվերջ երգ ու խինդ:
Է. ՓԵՐԻ Սիրոյ խօսք են ասում քեզ
Սեր շուրթերը թարմ, կարմիր.
Սեր սրտերը վեհ ու հեզ
Բաշխում հոգուդ հուր գրգիռ:
Ը. ՓԵՐԻ Հուրիները գեղեցիկ,
Սարուկներդ են երջանիկ.
Փերիների փաղանգից
Հնտրիր քեզի սրտակից:
(Պարում են եւ գնում իրենց տեղերը):
ՍՈՒԴԱԲԻ Խմենք նորից մի բաժակ,
Վառենք տենչը մեր անյագ:
(Ե. Վերին գինի է մատակարարում):
ՍԻՄԻՈՒԾ Քո արևին, թագուհի,
Զեր կենացը, վերիներ:
Փերիներ Քո արևին, թագուհի,
Մեր կենացը, վերիներ:
(Թ. Ժ. ԺԱ. եւ ԺԲ. Վերիներն առաջ են գալիս)
ՍՈՒԴԱԲԻ Հարեմի մէջ գունագեղ,
Գգւանք, մրմունջ սիրագեղ,
Անուշ երազ ջերմագին,
Քեզ են շոյում կաթոգին:
Թ. ՓԵՐԻ Դու հերոսը իրանի,
Դու սարսափը Թուրանի,

Դու քաջարի ձիաւոր,
Արդար, բարի, զօրաւոր:
Ժ. ՓԵՐԻ Երբ ուզենաս սլանաս,
Նժոյգիդ վրայ բաշարձակ
Աֆրամիարի սանձարձակ
Բանակները հողմին տաս:
ԺԱ. ՓԵՐԻ Պատերազմի նախճիրից,
Վերադառնաս երբ յոգնած,
Գաս հարեմը զարդարւած,
Լսես երգեր բերկրալից:
ԺԲ. ՓԵՐԻ Գարնան բացւած վարդի պէս,
Փերիները ժպտերես,
Ենեն գէմդ երգելով,
Ճամբէդ ծածկին վարդեռով:

(Պարում են շորսը միասին եւ ապա թոլորը պարելով
անյայտանում են հարեմի վարագոյրների յետեւը):

4.

ՍԻԱՀՈՒԾ ԵՒ ՍՈՒԴԱԲԵ

ՍՈՒԴԱԲԵ Ո՞ր մէկին սիրեցիր:
ՍԻԱՀՈՒԾ Սևաչեայ մի աղջիկ կար՝ ոսկեհեր:
ՍՈՒԴԱԲԵ Նրան սիրեցիր, որովհետև ինձ շատ էր նման:
ՍԻԱՀՈՒԾ Իսկակէս: Լաւ ուշագրութիւն չը դարձրի:
ՍՈՒԴԱԲԵ Նա իմ դուստրն է, իմ պատկերն է իսկական: Ուզմւմ
ես յետ կանչեմ:
ՍԻԱՀՈՒԾ Ուշ է արդէն. եթէ թոյլ տաս, կը գնամ:

ՍՈՒԴԱԲԵ Այսքան շնւտու Երբորդ անգամն է, որ դու գալիս ես
այստեղ և երկար չես մնում: Ուրիշ բան չունեմ ինձ
ասելու, թագուն մի վիշտ, մի իղձ, մի փափագ:
ՍԻԱՀՈՒԾ Շնորհակալ եմ, դու շատ ազնիւ ես ու բարի:
ՍՈՒԴԱԲԵ Կուզես խմենք մենք նորից:
ՍԻԱՀՈՒԾ Երկու գաւաթն ինձ բաւեց:
ՍՈՒԴԱԲԵ Ես եմ մատակարարում, մի մերժիր:
ՍԻԱՀՈՒԾ Թագուհին թող ինձ ների...
ՍՈՒԴԱԲԵ Կը վշտանամ քեզանից:
ՍԻԱՀՈՒԾ Երբ այդպէս է, կէս բաժակ:
ՍՈՒԴԱԲԵ Մի բաժակ, կէսը քեզ, կէսն ինձ: (Լցնում է բաժակն
ու տալիս է Սիաւուշին): Կուզես բոլորը դու խմիր,
իսկ յետոյ ես կը խմեմ (ժպտում է):
ՍԻԱՀՈՒԾ (Կարմրելով) կէսը ես կը խմեմ, կէսը՝ դու:
ՍՈՒԴԱԲԵ (Այնքան է մօտեցել Սիաւուշին, որ նրանց շնչերը
խառնում են իրար: Բոնել է Սիաւուշի ծեռքը եւ շու-
յում է): Բոլորը դու խմիր, կէսը՝ ես: (Սիաւուշը նո-
րից կարմրում է): Ինձնից ինչնւ ես քաշւում: Հաս-
կանում եմ քեզ, դու մեծացել ես որսի և ուզմի դաշ-
տերում, պալատի կեանքը քեզ խորթ է թւում, քո ա-
կանջին չեն հնչել կնոջ ձայնի անուշ մեղեղիները:
ՍԻԱՀՈՒԾ Այն, ես ուզմի մարդ եմ, ուզմի պէս կոպիտ: Խնդրում
եմ ասես արքային այն ոսկեհեր վիերի մասին...
ՍՈՒԴԱԲԵ (Աւելի ու աւելի սեղմւելով Սիաւուշին) Շատ լաւ,
կասեմ, բայց...
ՍԻԱՀՈՒԾ Գուցէ նա ինձ չը սիրի՞:
ՍՈՒԴԱԲԵ Ո՞չ, նրանք բոլորն էլ սիրում են քեզ, Բայց նրանց
մէջ կայ մէկը, որ խելագարի պէս է սիրում քեզ: Նրա

շրթունքներն անվերջ քո անունն են տալիս: Էսիր իմ
խորհուրդն ու նրան սիրիր: Թանի անդամ տեսել եմ
նրան հարեմի վարագոյների յետևից քեզ նայելիս, երբ
դու քո ու նժոյգի վրայ նստած, սլանում ես բաց
գաշտի միջով: Երբ քեզ էլ չի տեսնում ժամերով տե-
ղում մնում է կանգնած և լալիս է անվերջ:

ՍԻԱՀՈՒԾ Իսկ եթէ ես չը կարողանամ նրա հետ կապել...

ՍՈՒԴԱԲԻ Կը կապւես. նրա տենչերը քո տենչերը կը լինեն: Իր
գեղեցիկ մարմնով նա կը գալարւի քո ոտների տակ:

ՍԻԱՀՈՒԾ Իմ ընտրածը քո աղջիկն է, արիւնը քո արիւնի. տնուր
ինձ դու նրան և ես միայն նրան կը սիրեմ: Խօսք եմ
տալիս ես քեզ, խօսքս ասպետի խօսք է. պայմանս
երբեք չեմ խախտի:

ՍՈՒԴԱԲԻ Բայց ես քեզ ուզում եմ տալ աւելին, ուզում եմ տալ
մէկին, որ հոգով ու սրտով քո գերին կը լինի:

ՍԻԱՀՈՒԾ Ասա, ով է այդ մէկը:

ՍՈՒԴԱԲԻ (Կը քոտ փարում է նրան) Ես...

ՍԻԱՀՈՒԾ (Գունաթափ, արագ ոտքի է կանգնում) Դժւ...

ՍՈՒԴԱԲԻ (Միաւուշի ծեղողն ոժեղ քոնել է) Այս, ես, որ գի-
շերները քուն չունեմ, որ տարիներ ու տարիներ սպա-
սել եմ քեզ, սպասել եմ քո արբունքին: Աիրում եմ քեզ
իմ մարմնով, իմ ջղերի սարսուսով; բորբոքած արեանս
կատաղի եռացումով:

ՍԻԱՀՈՒԾ Եւ այդ խօսքերն ասողը դժւ ես, դժւ, իմ հօր կինը,
իմ կենդանի հօր կինը:

ՍՈՒԴԱԲԻ (Բորբոքած) Իո հօր կինը, որ չի սիրում, որ երբեք
չի սիրել քո հօրը, ես յանցաւոր չեմ, այս կատաղի
կրակը ես չեմ գրել իմ կրծքի տակ, ես չեմ վառել այս

հրդեհւող բոցն իմ սրտի մէջ, այլ...

ՍԻԱՀՈՒԾ Այլ հվ...

ՍՈՒԴԱԲԻ Դու... դու՝ քո գեղեցկութեամբ, քո հրապոյրով ինչնեւ
եկար, ինչնեւ երևացիր ինձ, իմ սրտի, իմ մարմնի մէջ
տենչանք ես վառել, յագուրդ տուր այդ տենչանքին:
Եղիր վայելքի մարդ, սիրիր ինձ և թողոր սիրեմ քեզ:
ՍԻԱՀՈՒԾ Ես սիրեմ քեզ, ես սիրեմ իմ հօր դաշաճան և անպար-
կեշա կնոջը:

ՍՈՒԴԱԲԻ Անւանիր ինձ ինչ ուզում ես, միայն թէ սիրիր ինձ,
տուր ինձ քո երիտասարդութիւնը: Տես, ես էլ գեղեցիկ
եմ, արքաներ են ծունկի եկել իմ առաջ:

ՍԻԱՀՈՒԾ Թո՞ղ թո՞ղ ձեռքս:

ՍՈՒԴԱԲԻ Սպասիր, ձեռքդ չը քաշես, թէ չէ կաղաղակեմ:

ՍԻԱՀՈՒԾ Փրկիր ինձ այս դժոխքից, ով եազդան:

ՍՈՒԴԱԲԻ Դժոխքը կը գառնամ քեզ համար, եթէ չը սիրես ինձ:
Մի զունատւիր, դու մի անվեհեր ասպետ ես և վայել
չէ քեզ գունատւել մի կնոջ առաջ:

ՍԻԱՀՈՒԾ Եազդանն էլ կը գունատւի զեկի անպարկեշտութիւնից:

ՍՈՒԴԱԲԻ Անւանիր ինձ դւ, Ահրիման, ինչ փոյթ, քաշիր պող-
պատակուու սուրդ, իրիր կուրծքս, դուրս քաշիր սիրտս
և ձգիր ոտներիդ տակ:

ՍԻԱՀՈՒԾ Ես մարդասպան չեմ. ճամբայ տուր հեռանամ, կորչեմ
այստեղից, ովը նեխւած է այստեղ:

ՍՈՒԴԱԲԻ Ճամբայ տամ որ գնամս, գնաս ու պատմես հօրդ, պատ-
մես Ռոստամին: Ես չեմ ուզում, որ դու ինձ խայտա-
ռակես: Երդւում եմ արևոլդ, երդւում եմ քո եազդա-
նով, որ եթէ դու իմը չը լինես, ես մարդասպան կը
դառնամ: Կը հետևեմ քեզ ուր որ գնաս, չեմ թողնի, որ

դու ուրիշնը լինեա, երջանիկ լինեա: Նախանձից ու
սիրուց սպանել կը տամ քեզ:

ՍԻԱՀՈՒԾ Դեւ, ի՞նչ եմ արել ես քեզ, դև... Դուրս պիտի ելնեմ
այստեղից և թող բացի քո խայտառակութիւնը: (Ու-
զում է գնալ, բայց Սուղաբէն արգելում է):

ՍՈՒԴԱԲԷ Ուզում ես իմ սէրը հրապարակել, անպատճել ինձ,
բայց չէ՞ որ ես թագուհի եմ... Նայիր ինձ. եթէ այդ-
պէս է, միայն մէկ անգամ ձեռքդ գիր կըծքիս, այր-
ող սրտիս վրայ, մէկ անգամ խորը նայիր աչքերիս
մէջ, էլ ոչինչ, ոչինչ չեմ ուզում... (Ուժեղ քոնում է
Սիաստշին, սեղմում իր կրօքին եւ սկսում է աղաղա-
կել): Այս, օգնութիւն, օգնութիւն. ի՞նչ ես ուզում
ինձանից, ես քո հօր կինն եմ, ի՞նչո՞ւ ես ուզում ա-
նարգել արքային... (Սիաստշը շփոթել է, ծեռը մը-
նացել է Սուղաբէի զգեստի մէջ: Սուղաբէն ճարպի-
կորէն պատեանից դուրս է քաշում Սիաստշ սուրը:
Փաթաթիել են իրար, Սիաստշն աշխատում է սուրը
նրա ծեռքից խել, Սուղաբէն դիմակրում է): Հայր-
ատեաց, հայրագաւ... (Այդ խօսքերի վրայ ներս է
մտնում Քատարը, տեսնում է Սիաստշի ծեռը կնջ
կրօքին. հարեմի վարագոյրների յետեւից փերիները
նայում են ու թագնուում: Քատարի աչքերից կայծեր
են թափուում: Սիաստշն ու Սուղաբէն բաժանուում են):

5.

ՔԵՅ ՔԱՀՈՒԾ, ՍԻԱՀՈՒԾ ԵՒ ՍՈՒԴԱԲԷ

ՔԱՀՈՒԾ (Դրան սեմին) Ի՞նչ է կատարւում այստեղ:

ՍՈՒԴԱԲԷ (Չնալով ղէպի Քատարը) Դու տեսար . արքայ, քը
պարզ աչքերով տեսար, թէ ինչ է կատարւում:

ՍԻԱՀՈՒԾ Դու էականը չը տեսար, հայր, դու լսեցիր միայն այս
համաւերանցի կնոջ խաբերայ կանչերը:

ՔԱՀՈՒԾ Ես տեսայ և տեսածս բաւական է: Արքայական պատ-
ւիս դէմ կատարւած այս ոճրի համար պէտք է երկուսդ
էլ մեռնէք խայտառակ մահով: Այս, երկուսդ էլ, գելա-
րանի վրայ, կամ բանակի ձիերի ոտների տակ: (Յուզ-
ւած շրջում է): Բայց ես ուզում եմ արդար լինել...
պատժել միայն յանցաւորին:

ՍՈՒԴԱԲԷ Այս, միայն յանցաւորին, ես պահանջում եմ այդ:

ՔԱՀՈՒԾ (Սուղաբէին) Խօսիր, ի՞նչ անուն տամ քո այս արարքին:

ՍՈՒԴԱԲԷ Ի՞մ, թէ այս մարդու արարքին: Քո հրամանով ես նը-
րան ընդունեցի այստեղ, ցոյց տւի իմ գեղեցիկ փերի-
ներին և ինպրեցի, որ նրանցից մէկին ընտրի իրեն
համար, բայց նա յամաօրէն մերժեց: Երբ փերիներին
հեռացրի, աչքերը յառեց վրաս, կոպտարար բռնեց իմ
ձեռքը. «քեզ եմ սիրում», ասաց, «քեզ եմ ընտրում»:
Ես մերժեցի, նախատեցի նրան, իսկ նա սուրը մեր-
կացրեց և սպառնաց: Սարսափած օգնութիւն կանչե-
ցի. դու ներս եկար և տեսար քո աչքերով: Ես իմ պա-
տիւն եմ պահանջում. նա գողացել է իմ պատիւը: Թու-
րանցու արիւն և կատարութիւն կայ նրա մէջ: Մի՛ հա-
ւատա նրա կեղծ համեստութեան: Պատժիր յանցաւո-
րին (հեծկլուում է), եթէ ոչ, ես լուր կը տամ իմ հօրը...

ՔԱՀՈՒԾ (Կատաղի) Դաւաճան որդի, այդպէ՞ս ես փոխարինում
իմ հայրական սէրը, գութն ու բարիքները: Ստոր, ա-
նարգ, հայրագաւ... Կրակը միայն կարող է լափել ու

մաքրել այս պիղծ ոճիրը: Է՛հ, Թվ կայ այդտեղ, թող ներս գայ, (Ներս է մտնում մի սպայ): Անմիջապէս այս ընդարձակ հրապարակի վրայ հազարաւոր գերաններ դարմակ տւէք, մի ահաւոր կրակ պատրաստեցէք, որի բոցերն ամպերը լիզեն: Էսթախիրն ու իմ բանակը խայտառակւած են: Շնուտ: (Սպան դուրս է նետում): (Միասուշին) Եւ դու խօսքեր չես գտնում ամօթից սեւացած հոգիդ արդարացնելու համար:

ՍԻԱԽՈՒԾ Քո վճիռը, ով հզօր արքայ, շատ անարդար է: Ես քո հպատակն եմ և ենթարկում եմ, թէկուզ քո վճիռը մի ոճիր էլ լինի:

ՔԱԽՈՒԾ Իմ վճիռը մի ոճիր: Իսկ ի՞նչ է քո լրբենի արարքը, այն արարքը, որ ես տեսայ բաց աչքերով: Եթէ յանցաւորը նա լինէր... (Նայում է Սուրբաբէին) Բայց ոչ, ես քեզ տեսայ ձեռքդ նրա կրծքին և մերկացրած սուրբդ ձեռքիդ:

ՍԻԱԽՈՒԾ Այն, ի՞նչ դու տեսար, արքայ, անմեղութիւնն էր, որ առաջին անգամ ոճիր տեսնելով շշմել ու կարկամել էր: Յանցանքը խօսքով մի սրտից մի ուրիշ սիրտ չի փոխադրւում: Եթէ ես լոեցի, երբ այս կինն ինձ ծածկում էր իր անառակութեան սև շղարշով, պատճառն այն էր, որ ես չէի ուզում քո արքայական սրբութեան առջև պղծութեան ծալքերը բացել: Մի վայրկեան միայն քննիր իմ կեանքը, թէ հեմ մօտ եմ ես դաստիարակւել, Թվ է մարզել ու կուլ իմ հոգին: Երբ քսան տարւայ ընթացքում յանցանքի առաջին աստիճանին դեռ ոտք չեմ դրել, ինչպէս կարող եմ առաջին վայրկեանից ոճը գաղաթնակէտին հասնել: Եթէ հզօր եազդա-

նը կարող է Անքիման դառնալ, ապա ես էլ կարող եմ յանցաւոր լինել: Հոգիս նոյնքան պայծառ է, որքան արեկ լոյսը, որին մինք պաշտում ենք:

ՔԱԽՈՒԾ (Տատանումով) Ի՞նչ անարգ գոռողութիւն: (Գլուխն առնում է ծեռների մէջ) Այս ի՞նչ անզօրութիւն է, ով հզօր եազդան: Ոճիրը տեսնես բաց աչքերով և չը կարողանաս հաստատել: Վճիռս վճիռ է, եթէ չը գործադրեմ, ես էլ նոյնչափ յանցաւոր կը լինեմ... (Ժափ է տալիս, ներս է մտնում հարեմի սպասարորը) Բաց արա այս պատուհանները: (Սպասարոր կատարում է հրամանը):

ՍՈՒՐԱԲԵ (Սարսափով) Հարեմի պատուհանները...

ՔԱԽՈՒԾ Հարեմ, էլ հարեմ չի այսակոյ: (Սպասարորին) Կանչիր այստեղ այս պղծւած հարեմի մոգպետին: Թող հարեմի Աստւածը մատնանշի ոճագործին և որոշի նրա պատիժը: (Սպասարոր գնում է: Երկար լութիւն: Գաւլիս է չրպետը. Սուրբէն վճռական եւ հրամայող հայիացքով նայում է նրան):

6.

ՔԱԽՈՒԾ, ՍԻԱԽՈՒԾ, ՍՈՒՐԱԲԵ եկ ՀՐՊԵՏ

ՍՈՒՐԱԲԵ (Հրապիտին, որ անցնում է իր մօտով) Կրակը, Սիաւուշին կրակը...

ՀՐՊԵՏ (Խոնարհելով Քառուի առաջ) Աղջոյն, զօրաւոր արքայ:

ՔԱԽՈՒԾ (Գլուխը բարձրացնելով) Աղջոյն, Հրպետ, այդպէս ես հսկում իմ հարեմին: (Սիասուշին եւ Սուրբաբէին) Գնաւ-

ցԵ՛ք: գնացԵ՛ք և հագԵ՛ք կրակի պաշտամունքի ձեր
զգեստները, մինչև որ հարեմի Աստւածն ինձ յայտնի
իր կամքը: (Սիաւուշը տիսուր դուրս է գնում մուտքի
դռնով: Սուղարբէն նայում է Հրաթին եւ գնում է
հարեմ):

7.

ՔԱԽՈՒՄ ԵՒ ՀՐՊԵՏ

ՔԱԽՈՒՄ Առա, Հրաթետ, ի՞նչ է իմ անելիքը:

ՀՐՊԵՏ Ի՞նչ է պատահել, արքայ, ես տաճարումն էի, ոչինչ
չը դիտեմ:

ՔԱԽՈՒՄ Աշխարհն այսօր քանդւեց իմ գլխին. իմ հարազատ որ-
դին և իմ կինը այստեղ, չար ողիների պէս փաթաթ-
ւել էին իրար:

ՀՐՊԵՏ Փրկիր մեզ, ով եազդան: Եւ ի՞նչ ես կարծում, տէր իմ,
ո՞ր մէկն է մեզաւորը. գուցէ երկնումն էլ:

ՔԱԽՈՒՄ Ո՞չ, մէկն է միայն, մէկը: Տեսայ ոճիրը, Հրաթետ, ու,
անարդ ոճիրը, եղեռնը շնային... Բայց ես մարդկանց
սրտերը կարգալ չեմ կարող, քեզ կանչել եմ, որ դռւ
կարգաս, դռւ ասես ինձ:

ՀՐՊԵՏ Բայց դրա համար երկար լսորհել է ալէտք:

ՔԱԽՈՒՄ Երկար, ինչու երկար: Ժամանակը կարող է ամէն ինչ
աւերել: Արտաշը պէտք է շուտ լանալ, ապա թէ ոչ,
հետքեր կը թողնի: Գնա հարեմի տաճարը, հարցրու քո
Աստծուն, քո դիտութեան և շուտ վերադարձիր: Եթէ
ուշանաս, վլէժս կարող է իսկնթութիւն գործել:

ՀՐՊԵՏ (Խոնարհելով) Իսկոյն, տէր արքայ: (Գնում է):

8.

ՔԱԽՈՒՄ

ՔԱԽՈՒՄ Իինել մի հզօր կայսրութեան արքայ և անզօր լինել...
Երկուսից որ մէկին էլ հարւածելու լինեմ, սիրտ ար-
իւնոտելու է: Է՛հ, անառակ որդիի, քո գլխին ոսկէ թագ
դրի, որ այսօր քեզ կրամկն ուղարկեմ: Այն օրը մար-
գարտաշար թագն ընկաւ քո գլխից և չար գուշակու-
թիւնը կատարւեց: Ո՞ր մէկն է մեզաւորը, ո՞ր մէկին
պատժել... Մէկը գեղեցիկ, միւսը՝ մինչև այսօր անմեղ...
Է՛հ, ոչինչ չեմ ըմբռնում, ես տեսայ Սիաւուշին ձեռքը
Սուդաբէի կրծքին՝ վերջացաւ: Հարեմի Աստւածն ինչ
որ որոշի, ես այն էլ կանեմ: (Մտնում է Սիաւուշը
սպիտակ հագնած, սպիտակ վարսակալը ճակատին):

4.

ՔԱԽՈՒՄ ԵՒ ՍԻԱԽՈՒՄ

ՍԻԱԽՈՒՄ (Վեհանձն կեցւածքով) Ես պատրաստ եմ. կրակն էլ
վառում է արդէն: Երբ դու, արքայ, կասկածեցիր իմ
անմեղութեան վրայ, այլև ինձ համար ապրելն աւե-
լորդ է: Սուդաբէի մէջ է քո երջանկութիւնը, թող այդ
երջանկութիւնը մնայ քեզ: Աւելի լաւ էր հազար դը-
ժուքներ ապրած լինէի, քան թէ իմ հայրն ինձ ոճ-
րագործ անւանէր: Պատրաստ եմ. ուզում եմ գնալ և
խանձել կրակի մէջ: (Ներս է մտնում Հրաթիւր, տես-
նում է Սիաւուշին եւ ընկնաւմ է):

10.

ՀՐՊԵՏ, ՔԱԽՈՒՄ ԵՒ ՍԻԱԽՈՒՇ

ՔԱԽՈՒՄ (Հրպետին) Խօսիր, ինչու ես այդքան գունատել. յայտնիր պատգամը:

ՀՐՊԵՏ Պատգամն ահաւոր է, տէր արքայ:

ՔԱԽՈՒՄ Պատգամդ համապատասխան է իմ վճռին:

ՀՐՊԵՏ Եազդանը քեզ ներշնչեց:

ՍԻԱԽՈՒՇ (Հեղնական) Որ Բս անցնեմ կրակով. ես արդէն իմ կամքով եմ գնում:

ՀՐՊԵՏ (Հանդիսաւոր կերպով) Յանցանքը մութ էր ու պըղտոր. վերջում մի լոյս երևաց և Եազդանն ասաց ինձ. «Թող նա անցնի կրակով, ով առաջինը կը ցանկանայ. եթէ անմեղ է, կազմատի և իր փառքը կը մեծանայ»: (Քաւուն ու Սիամուշը նոյում են իրար):

ՍԻԱԽՈՒՇ Բոլորդ էլ ձեր սրտում իմ մահն էք ցանկանում: Ես եմ եղել առաջին խնդրողը և գնում եմ առանց վախենալու: Երբ դուրս կը գտմ կրակից և արքան կը հաւատայ իմ անմեղութեան, ցանկանում եմ, որ հենց այդ վայրկանին Եազդանի հզօր կայծակն ինձ շանթահարի մեր պալատի առջև: Մնամ բարով, արքայ, դէպի կրակը ուացող քո որդին ողջունում է քեզ: (Խրոխտ ու անվախ ուիմում է դէպի դուրս):

11.

ՀՐՊԵՏ ԵՒ ՔԱԽՈՒՄ

ՔԱԽՈՒՄ (Մտորումներից սթափւելով) Գնաց... Եւ ես նրան

ոչինչ, ոչինչ չասացի, ոչ մի խօսք չասացի... Խսկապէս

մյէ էր Եազդանի պատգամը:

ՀՐՊԵՏ Այս, տէր արքայ:

ՔԱԽՈՒՄ Իմ միակ որդին, իմ ժառանգը, վաղւայ թագաւորը... Ոչ, նա թագաւոր չի լինելու. այդպէս են գուշակել աստղագէտները նրա ծննդեան օրից: Գնաց, գնաց դէպի կրակը. և եթէ այլուր...

ՀՐՊԵՏ Ուրեմն նա մեղաւո՞ր էր...

ՔԱԽՈՒՄ Զը գիտեմ, չը գիտեմ... (Ծնորուածի պէս քայլում է):

ՀՐՊԵՏ (Մօտեցել է պատուհանին) Նայիր, արքայ...

ՔԱԽՈՒՄ Ի՞նչը...

ՀՐՊԵՏ Ինչպէս է ալանում:

ՔԱԽՈՒՄ (Մօտեցել եւ նայում է. աղաղակով) Մօտեցաւ...

ՀՐՊԵՏ Այդ շէնքը անկիւնը խանգարում է:

ՔԱԽՈՒՄ (Հարքածի նման) Գնանք դուրս, պատշգամ, այնտեղից նայենք: (Գնում են. քիչ յետոյ հարեմի վարագոյրի յետելից դուրս է գալիս Սուղաբէն):

12.

ՍՈՒԴԱԲԷ

ՍՈՒԴԱԲԷ (Յուզաւած նայում է շուրջը եւ մօտենում պատուհանին) Ուղարկեցի նրան կրակը, նրան կրակը նետեցի:

(Աշքերը շփելով) Սլանում է նա կրակի վրայից, բոցերի միջով... (Բացւած պատուհաններից երեսում են հրդեհի ահռելի բոցերը եւ Սուղաբէն լուսաւորած է հրդեհի լոյսով): Հպարտ ժպտում է ամենքին և կրակը չի լափում նրան... Օ՛հ, նա կազմատի, դուրս կը գայ:

Կրքի ու յանցանքի թշնամի Եազդանը նրա հետ է:
Բոցերը բաժանուում են և ճամբայ են տալիս նրան:
Ուզում եմ որ այրւի և չեմ ուզում որ այրւի...
(Դրսում լսում է կրակի պաշտամունքի երգը.

Անմեղութեան ապաստան,
Արդար, հզօր, ով Եազդան,
Այս կրակը հրեղէն,
Քո պատկերն է լուսեղէն:
Եւ դու, կրակ լուսաւոր,
Կարմիր գուր հուր փառաւոր,
Հրեղէն գիրկդ սլացող,
Սիաւուշին խնայիր,
Բոցերիդ մէջ արշաւող,
Արդար զոհին պահպանիր,
Ողջյն, աղօթք, պաշտամունք,
Ամենազօր Եազդանին.
Զօնենք զոհեր ու բուրմունք,
Փառքի, սիրոյ սեղանին):

ՍՈՒԻՇԱԲԷ Նա յաղթանակելու է, Սիաւուշը յաղթանակելու է...
(Ծում է) Օ՞հ, գուրս եկաւ... կրակից գուրս եկաւ...
(Մի վայրկեան մնում է մտածմունքի մէջ թաղուածապա յաղթական շեշտով) Դուրս եկաւ, բայց կընկնի
մի ուրիշ կրակի մէջ: Աֆրասիաբն արդէն Գարսիվազի
գրումով արշաւում է իրանի վրայ և հենց այսօր
Հրպետը Եազդանի անունից Սիաւուշին կընտրի, որ-
պէսզի նա գնայ Թուրանի դէմ կուելու... (Հասում են
շեփորների ձայներ): Գալիս են այստեղ, գուցէ հենց
նա է... (Արագ անցնում է հարեմ, Գալիս են Քէյ
Քառու, Հրպետ, թիշ յետոյ Սիաւուշ եւ Ռոստու):

13.

ՔԱՀՈՒՍ, ՀՐՊԵՏ, ՅԵՏՈՅ ՍԻԱՒՈՒՇ ԵՒ ՌՈՍՏԱՄ

ՔԱՀՈՒՍ (Ուրախ, բայց ընկճած) Տեսար, Հրպետ:
ՀՐՊԵՏ Փառք Եազդանին, իր պատգամը կատարւեց:
ՔԱՀՈՒՍ Սիաւուշը մի սուրբ է: (Ներս են մտնում Սիաւուշը եւ
Ռոստում. վերջինս մնում է մուտքի մօտ):
ՍԻԱՒՈՒՇ Ողջյն, հզօր արքայ իրանի:

ՔԱՀՈՒՍ (Գնում է ընդառաջ իւ զրկում է Սիաւուշին) Ողջյն,
զաւակս, իմ արդար զաւակ, ներիր, ներիր ինձ (հե-
կե՛՛ում է):

ՍԻԱՒՈՒՇ Ես քո դէմ ոխ չունեմ, հայր: Սակայն ինձնից անկախ
մի բան փշրւեց իմ կրծքի տակ. կեանքիս ու երջան-
կութեանս անօթը փշրւեց և ոչ մի յաղթանակ այդ ա-
նօթը վերստեղծել չի կարողանալու: Յաղթանակներն
իմ թագին փառք և շքեղութիւն են բերելու, իսկ իմ
հոգուն ոչինչ: Ներիր, հայր, այս օթևանը նեղում է
ինձ:

ՔԱՀՈՒՍ Ել այստեղ հարեմ չէ, հարեմի սրահը չէ... (Նկատելով
Ռոստումին) Ներս եկ, սիրելի ասպետ:

ՌՈՍՏԱՄ (Ներս գոլով) Ողջյն, արքայ:

ՔԱՀՈՒՍ (Սիաւուշին) Եթէ կուզես, քանդել կը տամ, այրել կը
տամ այս սենեակը:

ՌՈՍՏԱՄ (Խիստ) Այրիր յանցաւորին, արքայ, վառիր յանցա-
ւորին:

ՔԱՀՈՒՍ (Տառապանքով) Ես նրան կը պատժեմ, ես նրան
կայրեմ:

- ԹՈՍՏԱՄ** հսկոյն, քանի դեռ կրակը չի հանգել:
ՍԻԱՀՈՒԾ (Նայում է խեղճացած Քատուսին) Ո՞չ, ես չեմ եկել
 այստեղ վրէժ պահանջիլու: Եազդանը թող առնի իմ
 վրէժը:
- ՀՐՊԵՏ** Արքայ, քո որդին իմաստուն է. այս օրերին, երբ Աֆրամիաբը...
- ՔԱԼՈՒԾ** Աֆրամիմբը...
- ԹՈՍՏԱՄ** Այն, տէր իմ, ես եկայ քեզ յայտնելու, որ Աֆրամիաբը
 հարիւր հազար զինուրներով անցել է Զէյնունը և
 մեր երկիրն է աւերում:
- ՔԱՀՈՒԾ** Ե՞րբ հասաւ այդ լուրը:
- ԹՈՍՏԱՄ** Երբ Սիաւուչն անցնում էր կրակով:
- ՔԱՀՈՒԾ** Կրակ այստեղ և կրակ այնտեղ: Այս անզամ կատաշութիւնս սահման չի ունենալու: Կը գնամ և մոխիր
 կը դարձնեմ Աֆրամիաբի բանակն ու երկիրը: Ինքս
 եմ առաջնորդելու իմ բանակը:
- ՍԻԱՀՈՒԾ** Այսօրւայ փորձութիւնից յետոյ ես իրաւունք ունեմ
 իմ արքայից մի շնորհ իննորելու: Թոյլ տուր ինձ, հայր,
 գնամ և չափւեմ Աֆրամիաբի հետ:
- ՀՐՊԵՏ** Արքայ, գու շատ յաղթանակներ ևս շահել, այս պատերազմի դափնիները թող քո որդուն. պէտք է, որ
 նա էլ վարժւի:
- ՔԱՀՈՒԾ** (Քիչ խորհելուց յետոյ) Գնա, զաւակս, քեզ եմ յանձ-
 ամբողջ բանակը: Յաղթող եղիր, անողոք եղիր, Ցոյց
 տուր Աֆրամիաբին ու աշխարհին, որ քո առաջին
 հարւածը հմուտ ուազմիկի հարւած է:
- ԹՈՍՏԱՄ** Ես էլ եմ գալիս քեզ հետ՝ իմ ծերացած ոչքերով քո
 փառքի արշալոյսը տեսնելու:

ՔԱՀՈՒԾ (Ոտստամին) Յայտնիր բանակին, որ Սիաւուշն է աւ-
 ոաջնորդելու նըան: (Ոտստամը ողջունում է եւ դուրս
 է գնում: Հրապետն անցնում է հարեմ):

14.

ՔԱՀՈՒԾ ԵՒ ՍԻԱՀՈՒԾ

ՔԱՀՈՒԾ Զը գիտեմ, մի բան ինձ ասում է, որ... (Արտասում է):
ՍԻԱՀՈՒԾ Մենք այլևս իրար չենք տեսնելու, այդ ես էլ եմ զգում:
ՔԱՀՈՒԾ (Յետ է դառնում արցունքը ծածկելու համար) Գը-
 նանք, գնանք այստեղից:

ՍԻԱՀՈՒԾ Այլևս չեմ տեսնելու էսթախը... Է՞՞ս, մնաս բարով,
 հայր, քեզ էլ չեմ տեսնելու... (Հայր ու որդի գրկա-
 խառնուում են):

ՔԱՀՈՒԾ Զաւակս, իմ արդար, իմ արի զաւակս...

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ռ

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

ԶԵՅՑՈՒԽԻ ՌԱԶՄԱԴԱՇՏ

Հնդարձակ ու գեղեցիկ մի դաշտ է, խորքում Սիա-
տւշի սպիտակ ու շքեղ վրանը, որի զլիին հրանի
արքայական դրօշն է, ծածանում: Աջ կողմը կանա-
չազարդ բլուրն է, որի լանջին յինտել են ուրիշ վրան-
ներ: Չափ կողմում կատաղի թափով հոսում է յոր-
դառատ Քէյհունը: Սպիտակ վրանի առջեւ գորգերով
ծածկւած զահանման մի քանի թումբեր կան: Վրա-
նի առջեւ շրջում են սոսերաւոր պահակներ:

1.

ՍԻՍԻՈՒԾ

ՍԻՍԻՈՒԾ (Դուրս է գալիս վրանից դանդաղ քայլերով տիսուր
է եւ մտահոգ: Զինած է եւ ճակատին կրում է մի
գեղեցիկ վարսակալ): Ո՞չ Աֆրասիաբի հետ մեր կըն-
քած պայմանը պատւարեր է ու մարդկային: Երբ թըշ-
նամին պարտւել, ծունկի է եկել և աղաչում է վերջ
տալ արիւնահեղութեան, էլ ինչու կուել: Արդեօք էս-
թախրում հաւանելու են իմ կապած դաշինքը: (Դառ-
նութեամբ) Ա՞խ, էսթախը, էսթախը... Դու իմ հոգին
այրեցիր, դէպի կեանքն ունեցած իմ ամրակուռ հա-

ւատքը փշրեցիր, կասկածի ոև ամպերով մթագնեցիր
իմ լուսաւոր իղձերը... էսթախը... Սուդաբէ... (Դէմքը
մոայլում է եւ սկսում է քայլել մոլորւած եւ յուզ-
ած: Խորքից երեսում է երիտասարդ զօրապետ
Բահրամը),

2.

ՍԻԱՀՈՒՇ ԵՒ ԲԱՀՐԱՄ

ԲԱՀՐԱՄ (Ողջունելով) Արքայազնը թող ինձ ների, եթէ խան-
գարում եմ իր խոկումները: Շատ տիսուր է իրանի
դիւցազնը:

ՍԻԱՀՈՒՇ Ոստամն ուշացաւ, Բահրամ, և այդ վատ նշան է:
ԲԱՀՐԱՄ Տէր իմ, կասկածում ես, որ արքան...

ՍԻԱՀՈՒՇ Զը հաւանի իմ կնքած դաշինքը և ստիպի ինձ դրժել
իմ խոստումը:

ԲԱՀՐԱՄ Բայց արքան ի՞նչ նպատակ և կամ դժգոհելու ի՞նչ ա-
ռիթ պիտի ունենայ այդպէս վարելու:

ՍԻԱՀՈՒՇ Արքան՝ ոչինչ, սակայն ուրիշները կարող են զրգուել
նրան, այս դաշինքը գոհացուցիչ չը համարելով:

ԲԱՀՐԱՄ Այս նենդ ու խարդախ թուրանցիների հետ էլ...

ՍԻԱՀՈՒՇ Ես թուրանցի իշխաններին չեմ խղճում, այլ դժբախտ
ժողովրդին: Ես չեմ սիրում թուրութիւնը. մենք միշտ
պէտք է զօրաւոր լինենք, սակայն մեր ոյժը չը պիտի
գործադրենք անարդար տեղն արիւն թափելու: Ես իմ
մի զինուրի կեանքն աւելի եմ գնահատում, քան ա-
նարդար զօրութեամբ շահած հազարաւոր դափնիներ:
Ես անհանգիստ եմ, Բահրամ, թոիր նժոյզիդ վրայ և

սլացիր դէպի Բալիս. եթէ պատգամաբերը հասել է, առ
նրանից պատգամը և շուտ հասցրու ինձ:
ԲԱՀՐԱՄ Սիրով, իմ աղնիւ արքայազն: (Ողջունում է եւ շուապ
հեռանում):

3.

ՍԻԱՀՈՒՇ, ԱՊԱ ԳԱՐՄԻՎԱԶ

ՍԻԱՀՈՒՇ (Նայելով Ձէյնուի կողմը) Ձէյնուն, կատաղի գետ,
իմ սիրտն այսօր աւելի պղտոր է, քան քո ոև ու պըդ-
տոր ջուրը: (Երկար եւ ուշադիր նայում է) Զօրք է
անցնում Ձէյնուով. Երեկ Աֆրասիարն է գալիս: Իսկ
այն ձիու վրայ... Ճիշտ այն տեսիլքի աղջիկը, որ ես
տեսայ այստեղ մի տարի առաջ: (Զախ կողմից երե-
տում է Գարսիվազը): Ահա Գարսիվազը. այս մարդու
հոգին մի մուժ խորհուրդ է, որ ես չեմ կարողանում
հասկանալ: Նրա կնճռոս ճակատի տակ կարծես գը-
ժոխքի պէս ահաւոր մտքեր են եռում, իսկ նրա լեզուն...

ԳԱՐՄԻՎԱԶ (Հեռուց երեք անգամ գետինն է համբուրում: Ամ-
բողջ էութեամբ նենգութիւն է: Դէմքին շարունակ
խաղում է կեղծ ու քծնող ժպիթը): Ողջոյն, արքա-
յազն, ողջոյն քո աստածային աղնւութեան և քո ա-
րեգակնային փառքին: Քո արքայական ընծաները
հասցը Աֆրասիարին և նկարագրեցի նրան քո առա-
քինի ու արդարասէր բնաւորութիւնը և քո անյաղթ
ոյժն ու զօրութիւնը: Աֆրասիարը հմայւեց քեզնով և
գալիս է քեզ տեսնելու: Թուրանցի զինուրներն էլ այժմ
քովքն են երգում:

ՍԻԱՀՈՒՇ (Զուսպ) Շնորհակալ եմ քեզանից, որ քո հնարքն ու

տաղանդը ծառայեցնում ևս խաղաղութեան գործին:
ԳԱՐՄԻՎԱԶ Այդ իմ պարտքն է, աէր իմ:
ՍԻԱԽՈՒԾ Եւ շնորհակալ իմ Թուրանի արքայից, որ բարեհաճում
 է ինձ պատել իր այցելութեամբ:
ԳԱՐՄԻՎԱԶ Այդ էլ նրա պարտքն է, աէր իմ:
ՍԻԱԽՈՒԾ Ես պիտի նրան տեսութեան գնայի:
ԳԱՐՄԻՎԱԶ Դու յաղթողն ես, աէր, և փառքը միշտ յաղթողինն է:
ՍԻԱԽՈՒԾ Յաղթութիւնը շատ շուտ է բանակներ փոխում: Շատ
 կուշանայ Թուրանի արքան:
ԳԱՐՄԻՎԱԶ Ո՞չ, նա արդէն Զէյնունն անցել է:
ՍԻԱԽՈՒԾ Ուրիշ թանկազին հիւրեր էլ կան նրա հետ:
ԳԱՐՄԻՎԱԶ Իր ազջիկն է միայն:
ՍԻԱԽՈՒԾ Ինչո՞ւ է նա արքայակատրին այդ նեղութիւնը պատ-
 ճառել:
ԳԱՐՄԻՎԱԶ Արքայադուստրը շատ էր լսել քո գովքը և ցանկա-
 նում է ռազմի գաշտում տեսնել քեզ, աէր իմ:
ՍԻԱԽՈՒԾ Շնորհակալ եմ, այդ էլ երկի քո շնորհիւ է եղել: Նե-
 րի ինձ, ես գնում եմ պատրաստեմ, արքայական
 հիւրերիս ընդունելու համար: (Չեղքի թեթեւ շարժու-
 մով բարեւում է Գարսիվազին եւ գնում է ղէպի վը-
 րանը: Գարսիվազը նորից համբուրում է հողը):

4.

ԳԱՐՄԻՎԱԶ

ԳԱՐՄԻՎԱԶ Քո առջև հողը կը համբուրեմ, մինչև որ դու իմ առ-
 առջև հողը համբուրեմ... Այս կարող ես պարծենալ,
 դեռ յաղթանակը քոնն է: Շատ չի անցնի սակայն, որ

իմ մի հնարքով իրանի թագաժառանգն իր սրտի խոր-
 քում կը սկսի ատել Քաւուս արքային: Դրանից աւել-
 իլ էլ ի՞նչ մեծ շահ մեղ համար: Սակայն արքայ դառ-
 նալու իմ ձգտումը գեռ միջոց չի գտել իրականանալու:
 Դեռ պէտք է միջոցներ ստեղծեմ, պայմաններ յարմա-
 րեցնեմ, եթէ ոչ Սուդաբէն ինձ համար կը մնայ մի
 երազ... Իսկ մինչև այդ շոյեմ ու գուրգուրեմ իրանի
 թագաժառանգին, որ յետոյ աւելի հեշտութեամբ յօշո-
 տեմ նրան: (Չախ կողմից թուրանական փողերը ող-
 ջունում են իրանական զօրքին: Միաւուշի վրանի յե-
 տեսից իրանական փողերը պատասխանում են այդ
 ողջոյնին): Քաշւեմ մի կողմ, որ արքաների շուքի մօտ
 ես մի ու կէտ չերեամ և զիտեմ թագուն այս սրտա-
 յոյզ հանդիպումը: (Քաշում է ղէպի ծախ: Միաժա-
 մանակ երեսում են Աֆրասիաթիւն ու Փարանգիսը
 վրանի մօտից Սիաւուշը: Միաւուշն ու Աֆրասիաթը
 ողջունում են իրար եւ գրկախառնում: Միաժամա-
 նակ նշում են երկու կողմերի փողերը):

5.

ՑԱՐԱՆԳԻՍ, ԱՅՐԱՍԻԱԲ ԵՒ ՍԻԱԽՈՒԾ

ԱՅՐԱՍԻԱԲ Մեր համբոյլով թող վերանայ մեր երկու երկրների
 միջև եղած քէնն ու ոլսը:
ՍԻԱԽՈՒԾ Թող Զէյնունն այլիս չը տեսնի ոչ արիւն, ոչ դիակ:
ԱՅՐԱՍԻԱԲ Մեր հաշտութիւնը քո փառաւոր յաղթանակի վարձն
 է: Թող այս հաշտութիւնը յարատե լինի:
ՍԻԱԽՈՒԾ Ես հաւատարիմ կը մնամ իմ կնքած դաշինքին:

ԱՅՐԱՍԻԱԲ ԶԵՆՔԻԴ զօրութեամբ Բալիսը գրաւեցիր, իսկ ազնիւ նկարագրով իմ և բանակիս սիրտն ես շահել:
ՍԻԱՀՈՒԾ Դու շատ բարի ես, արքայ, բարի եղիր քո արքայական շուքով իմ համեստ վրանը զարդարելու: Կամ եթէ կը ցանկանաք... (ցոյց է տալիս դրսի գահերը):

ԱՅՐԱՍԻԱԲ Այն, ճենց այստեղ, աւելի ազատ է, աւելի հանգիստ:
Ահա իմ գուստը, որին բերեցի ճետս, որպէսզի մեր անկեղծ հաշտութեան վկայ լինի:

ՍԻԱՀՈՒԾ (Նայում է Փարանգիսին ու շփոթում) Արքայագուստը թող ների, որ անկարող եմ կուի այս դաշտում իրեն վայել շուքով ընդունել: (Հրաւիրում է նըրանց նոտելու գահերի վրայ):

ԱՅՐԱՆԳԻՍ Բնութեան այս վիճաշուք պալատն ու արքայազնիդ ռազմական տարազն աւելի հաճելի են ինձ: (Սիաւուշը եւ Փարանգիսը նայում են իրար, ժպտում եւ կարմըրում են):

ԱՅՐԱՍԻԱԲ Արքայազն, գուցէ դու և էսթախըն այն համոզման լինէք, որ ես այս պատերազմն սկսել եմ միայն աւարի ու աւերի տենչով: Խակայն ճշմարտութիւնն այդ չէ. այս արինահեղութեան դրդապատճառը մի արդար վըրիժառութեան զգացում է:

ՍԻԱՀՈՒԾ Վրիժառութիւն. և ինչ բանի համար:

ԱՅՐԱՍԻԱԲ Քանի որ ես բարեկամական զգացումներով եմ եկել այստեղ, ուստի ուզում եմ, որ անկեղծ լինենք:
ՍԻԱՀՈՒԾ Ես սիրում եմ անկեղծութիւնը, անգամ եթէ այդ անկեղծութիւնը կոպիտ է: Ասմ այդ վրիժառութեան պատճառը, արքայ:

ԱՅՐԱՍԻԱԲ Իշխան, դու տեսել ես անշուշտ Խուբչէնը թագուհուն,

ՍԻԱՀՈՒԾ (Գունատուած) Անշուշտ:

ԱՅՐԱՍԻԱԲ Խուբչէնը մեր արքայական տոհմից էր, իմ հարաւ զատ արիւնակիցը:

ՍԻԱՀՈՒԾ Գիտեմ, լսել եմ:

ԱՅՐԱՍԻԱԲ Մեզ լուրեր հասան, որ Քէյ Քաւուս արքան Սուդաբէ թագուհու գրդմամբ փութացրել էր նրա մահը:

ՍԻԱՀՈՒԾ (Դողդողացող ծայնով) Քէյ Քաւուս արքան այդպիւսի սի ստոր արարք կատարելու ընդունակ չէ:

ԱՅՐԱՍԻԱԲ Ներիր արքայազն, տեսնում եմ, որ այս ինդիրը քեզ վրդովեց: Անկեղծ լինելու համար հարկ էր որ ասէի:

ՍԻԱՀՈՒԾ Հօրս անարդար տեղը մեղադրում ես և ուզում ես չը վրդովեմ:

ԱՅՐԱՍԻԱԲ Եթէ ես անիրաւացի եմ, թող Եազդանն ինձ պատժի. բայց միայն այդ է եղել այս պատերազմի դրդապատճառը: Ես ևս հաւատում եմ Քէյ Քաւուս արքայի արդարամտութեան. սակայն, որքան լսել եմ, Սուդաբէն փառասէր մի կին է. և Խուբչէնը իմ արիւնակիցն էր, ես չէի կարող անտարեիր մնալ: Այսօր ես ցանկանում եմ, որ մեր հոշտութիւնը յարատե լինի և մեր դաշինքը միշտ անխախտ մնայ:

ՍԻԱՀՈՒԾ Ես արդէն պատւոյ խօսք եմ տւել: Իմ կնքած պայմանը սուրբ է ինձ համար:

ԱՅՐԱՍԻԱԲ Եւ որպէսզի մենք կապւենք սրտով ու հոգով և ոչ թէ խօսքերով, մեր երկու երկների բախտը ձեր ձեռքն ենք յանձնում՝ քո եւ Ֆարանգիսի: Ես և Քաւուսը ծերացել ենք: Վճռէք ինքներդ: Այժմ թոյլ տուր ինձ մտնել քո վրանը հանգստանալու: (Աֆրասիաթը Սիաւուշի առաջնորդութեամբ մտնում է վրանը):

6.

ՖԱՐԱՆԳԻՍ, ԱՊԱ ՍԻՍԻՈՒՇ

ՖԱՐԱՆԳԻՍ նա գեղեցիկ է, հպարտ ու ազնիւ: Արդեօք սիրան
արդէն ուրիշի չի տես: Ես կը ցանկանայի նրանը լի-
նել բայց միայն թէ մենակ ես լինեմ: Հայրս ինձ տա-
լու է նրան, որպէս պատերազմի տուրք: Իսկ եթէ ի-
մանամ, որ նրա սրտում մի ուրիշն արդէն տեղ է գը-
րաւել և նա ինձ կը վերցնի որպէս իր հարճը և ոչ թէ
որպէս իր կինը, օ՞հ, այն ժամանակ... Զէյհունը մօտ
է, ինձ կը նեսեմ Զէյհունի գիրկը: Վերապառնում է,
ինչ խօսեմ հետը, ինչ ասեմ նրան:

ՍԻՍԻՈՒՇ (Վերադառնալով, մտածոլոր) Հոգուս ու մտքիս այս
ցաւագին ճգնաժամին գուցէ սա է փրկութեան այն
ժայռը, որին պիտի կառչեմ: (Փարանգիսին) Գեղեցիկ
արքայադուստր, ես չը հասկացայ քո հօր միտքը, ինչ
պիտի վճռենք մենք միասին:

ՖԱՐԱՆԳԻՍ Հայրս ուղում է, որ յանուն եազգանի, յանուն թափ-
ւող անմեղ արեան, մենք պատերազմը դադարեցնենք:
ՍԻՍԻՈՒՇ Բայց զինադադար է և այն էլ վաղուց:
ՖԱՐԱՆԳԻՍ Այս, միայն զինադադար, բայց չէ՞ որ կարող է պա-
տերազմը նորից վերականը:

ՍԻՍԻՈՒՇ ես չեմ լինի վերակառը:

ՖԱՐԱՆԳԻՍ Իսկ եթէ հայրդ քո կնքած պայմանը չը հաւանի:

ՍԻՍԻՈՒՇ Պայմանն իմ կողմից դարձեալ անխախտ կը մնայ:

ՖԱՐԱՆԳԻՍ Եւ դու չես հնազանդի քո հօրը:

ՍԻՍԻՈՒՇ Զը զիտեմ, դժւար է քեզ պատասխանել, սակայն չեմ
հաւատում, որ հայրս ինձ ստիպի խոստմնազանց լինել:

Այս խնդիրը կը լուծէի միայն այն ժամանակ, երբ
մենք էսթախրից պատասխան կը ստանանք: Սակայն
ինչպէ՞ս է եղել որ դու ընկերակցել ես արքային:

ՖԱՐԱՆԳԻՍ Հայրս ինձ քերեց:

ՍԻՍԻՈՒՇ Ուժնվ, ստիպելով:

ՖԱՐԱՆԳԻՍ Ո՞չ, այլ ընդառաջելով իմ ցանկութեան: Ես ցանկա-
նում էի քեզ նորից տեսնել:

ՍԻՍԻՈՒՇ Նորից, միթէ դու ինձ երբեկցէ տեսել ես:

ՖԱՐԱՆԳԻՍ Այս, և մի քանի անգամ (ժպտում է):

ՍԻՍԻՈՒՇ Մի քանի անգամ. և որտեղ:

ՖԱՐԱՆԳԻՍ Երազում:

ՍԻՍԻओՒՇ Երազում, ես կարծում էի... Մի անգամ այստեղ, հենց
այս բլուրի ստորառում, կէս քնած, կէս արթուն, քեզ
նման մի թուրանցի աղջիկ տեսայ. նա մօտեցաւ ինձ
և խօսեց (մոայլում է):

ՖԱՐԱՆԳԻՍ Բայց ինչու տիրեցիր:

ՍԻՍԻओՒՇ Որովհետև միայն տեսիլք էր ու չքացաւ. և այդ տե-
սիլքն ինձ համար շատ բաներ գուշակց:

ՖԱՐԱՆԳԻՍ Լաւ, թէ վատ:

ՍԻՍԻओՒՇ Եւ լաւ, և վատ:

ՖԱՐԱՆԳԻՍ Գու հաւատում ես այդ գուշակութիւններին:

ՍԻՍԻओՒՇ Այս օրը չը հաւատացի, իսկ այսօր հաւատում եմ, ո-
րովհետև այն օրւայ տեսիլքն իրականութիւն է դարձել:

ՖԱՐԱՆԳԻՍ Այսինքն:

ՍԻՍԻओՒՇ Իմ տեսած թուրանցի աղջիկը միանգամայն նման էր
քեզ, կարծես դու ինքը լինէիր: Նա ինձ ասաց, որ
ինքն Աֆրասիաբի աղջիկն է և իր անունն է Ֆարան-
զիս (մտածկում շփում է ճակատը):

ՖԱՐԱՆԳԻՍ (Կարեկցաբար) Քո կնճիռները նորից շատացան:
ՍԻԱՀՈՒՇ ինչն նորից վերադարձար:
ՖԱՐԱՆԳԻՍ (Ժպտալով) Ես չը գիտէի, որ դու մի անգամ ինձ
տեսել ես: Քո հոչակն ու քո արիութիւնն ինձ դիւթե-
ցին և ես ցանկացայ քեզ տեսնել:
ՍԻԱՀՈՒՇ Եւ ի՞նչ ես ուզում ինձանից, ի՞նչ նւէր ես ցանկանում,
ես պատրաստ եմ և պարտական ըստ օրինի:
ՖԱՐԱՆԳԻՍ Թող խաղաղութիւնը շարունակւի:
ՍԻԱՀՈՒՇ Եթէ ինձանից է կախւած՝ շատ լաւ:
ՖԱՐԱՆԳԻՍ Եւ ըստ օրինի փոխադարձ ի՞նչ նւէր ես ցանկանում,
որ ընծայեմ յաղթական ուազմիկող:
ՍԻԱՀՈՒՇ (Մտամոլոր) Դժւար է... վախենում եմ, որ մերժես...
(Սայում են իրար):
ՖԱՐԱՆԳԻՍ Զեմ մերժի, եթէ այդ նւէրն ես ունենամ և իմը լինի:
ՍԻԱՀՈՒՇ (Յուզած) Արքայագուստը, ես ուզում եմ, որ դու քո
սիրտը տաս ինձ: Ես պէտք ունեմ մի աղնիւ սրտի, որ
իմ որբ սրտին յենարան դառնայ, իմ դատարկ հոգին
լցնի իր սիրով:
ՖԱՐԱՆԳԻՍ (Յուզած, դողդողաքող ծայնով) Իմ սիրտը տալիս
եմ քեզ, քեզ եմ նւիրում իմ հոգին. միայն թէ հայրդ...,
ՍԻԱՀՈՒՇ Հայր, հայր եթէ դէմ կը լինի, թող լինի. իմն է իմ
սիրտը: Իմ հոգու խորքում արդէն առանց յանցանքի
անհնազանդել եմ իմ հօրը: Ինչն թագյնեմ, զգում եմ,
որ նա դժգոհելու է իմ կնքած դաշինքի դէմ:
ՖԱՐԱՆԳԻՍ Իսկ այն ժամանակ դու ի՞նչ կանես:
ՍԻԱՀՈՒՇ Կը հրաժարեմ ինձ վրայ դրւած պարտականութիւ-
նից: Եթէ դու իմը լինես, առանց թագի էլ կարող եմ
բախտաւոր լինել:

ՖԱՐԱՆԳԻՍ Ես քոնը կը լինեմ, կը գամ քեզ հետ' ուր որ գնաս:
ՍԻԱՀՈՒՇ Անդամ...
ՖԱՐԱՆԳԻՍ Անգամ ցաւերի մէջ, անդամ թշւառութեան գերկը:
Այստեղ եկայ իմ ազատ կամքով, սիրեցի քեզ իմ ա-
զատ կամքով:
ՍԻԱՀՈՒՇ Ա՞յս էր մեր վճիռը:
ՖԱՐԱՆԳԻՍ Մեր սրտերի վճիռը, եազգանի կամքով, Զէյնունի
առաջ, այս ուազմադաշտում:
ՍԻԱՀՈՒՇ Իսկ քո հայրը:
ՖԱՐԱՆԳԻՍ Ի՞նչ պիտի ասի իմ հայրը, չէ՞ որ քո մայրն էլ...
ՍԻԱՀՈՒՇ Դու գիտես. հայրդ էլ գիտէր:
ՖԱՐԱՆԳԻՍ Բոլորն էլ գիտեն, որ դու Խուբչէրի զաւակն ես:
ՍԻԱՀՈՒՇ Հօրդ ասածը շինծու չէ՞ր:
ՖԱՐԱՆԳԻՍ Թուրանում ամենքն են ասում, որ Խուբչէրին սպա-
նել են իսթախրում: Տար ինձ քո վրանը:
ՍԻԱՀՈՒՇ Ա՞լս, էսթախր, էսթախր... (Բոնում է Փարանգիսի
ծեռքը եւ բարձրացնում դէպի երկինք) Ո՞վ եազգան,
օրհնիր գոնէ այս կապը, օրհնիր գոնէ մեր սէրը...
(Գնում են վրան: Բեմը մնում է դատարկ: Աշ կող-
մից յուզած, արագ քայլերով գալիս է Բահրամը,
նայում է շուրջը, մօտենում է վրանի առջեւ կանգ-
նած պահակին, կամացուկ խօսում է նրա հետ եւ
մետաքսեայ ծրարը ծեռքին առաջանում է քեմ):

7.

ԲԱՀՐԱՄ

ԲԱՀՐԱՄ (Տիսոր) Խեղճ արքայազն, ի՞նչպէ՞ս յայտնեմ նրան

այս լուրը։ Նա զգում էր արդէն, որ մի վաս բան է կատարւում իսթախրում։ Խօսք է տւել և յետ չի դառնայ նա իր խօսքից։ Եազգան, այդ ազնիւ ճակարին ինչ չար բախտ ես քանդակել։ (Նայում է ղէպի վրանը) Պահակը յայտնեց... դուրս եկաւ վրանից... (Սիատոշը դուրս է զալիս վրանից եւ արագ քայլիրնվ մօտենում է Բահրամին):

8.

ԲԱՀՐԱՄ ԵՒ ՍԻԱԼԻՇ

ՍԻԱԼԻՇ Ի՞նչ լուր ես բերել. գունատ ես, ինչու,

ԲԱՀՐԱՄ (Համբուրում է մետաքսեայ ծրարը եւ յանձնում է Սիատոշին) Ահա հզօր արքայի նամակը,

ՍԻԱԼԻՇ (Վերցնում է նամակը, բայց դժւարանում է բացել) Երկինքը վկայ, լաւ լուր չես բերել:

ԲԱՀՐԱՄ (Վշտով) Ինչու ինձ ուղարկեցիր, տէր իմ։

ՍԻԱԼԻՇ Իսկ Ոստամը, մուր է Ոստամը։

ԲԱՀՐԱՄ (Դառնութեամբ) Զաբոլստանում։

ՍԻԱԼԻՇ Զաբոլստանում, ինչու։

ԲԱՀՐԱՄ Պաշտօնանկ է եղել. արքան մերժել է նրա ծառայութիւնը։

ՍԻԱԼԻՇ Արքան... Ոչ թէ արքան, այլ պալատականները, այլ Սուդարէն և իր խմբակը։ Ո՞վ բերեց այդ լուրերն ու այս նամակը։

ԲԱՀՐԱՄ Արքայի յատուկ սուրհանդակը, որին հանդիպեցի Բալիսի պատերի պակ։ Նա պատմեց ինձ, որ արքան Ոստամին հրամայել է յետ վերադառնալ և դաշինքը

խախտել։ Ոստամը յանդիմանել է նրան. նա էլ Ոստամին անւանել է վախկոտ և անհաւատարիմ։

ՍԻԱԼԻՇ (Պատաղած) Ոստամը վախկոտ, Ոստամն անհաւատարիմ։ Երկինքը վկայ, եթէ Քաւուս արքան իմ հայրը չը լինէր... իրանի արքայ, դու քո այդ արարքով հաւատացնել ես տալիս ինձ Աֆրասիաբի քո վրայ գըրած մեղադրանքը... եթէ Ոստամն անհաւատարիմ է, նշանակում է ինքդ քո թշնամին ես։ Այս նամակի բովանդակութեան մասին սուրհանդակը քեզ ոչինչ չասմց։

ԲԱՀՐԱՄ Ոչինչ, տէր իմ։

ՍԻԱԼԻՇ Ձեռներս դողում են, այս ծրարը բանալ չեմ կարող։ Առ, Բահրամ, ո՞ու կարգաւ Որքան էլ ծանր լինի սրա բովանդակութիւնը, եթէ դու կարգաւ՝ ինձ այնքան էլ ծանր չի թւայ. (Ծրարը յանձնում է Բահրամին)։ Լսում եմ։

ԲԱՀՐԱՄ (Բացում է նամակն ու սկսում է կարդալ) «Փառք Եազգանին՝ բարի, ամենակարող, հզօր և մեծաշուշը։ Ոստամը տեղեկացրեց ինձ, որ դուք հաշտութիւն էք կնքել Աֆրասիաբի հետ։ Խուրանցին ձեզ խարել է։ Ոստամի վարմունքը համկանալի է. նա հարստացել է, գոռողացել, յոգնել է պատերազմից և էլ չի ուզում կուել։ Իսկ դժու. ի՞նչ եղան քո աւիւնն ու արիութիւնը։ Շուտափոյթ հաշտութիւն կնքում են միայն թոյթերը։ Լսիր ինձ, խախտիր պայմանդ և դուրս արի պատերազմելու։»

ՍԻԱԼԻՇ Շարոննակիր, դեռ ոյժերս չին գաւաճանել ինձ։

ԲԱՀՐԱՄ (Շարունակում է կարդալ) «Վերադարձու Աֆրասիաբին իր ուղարկած նւէրները։ Այն հարիւր ազնւա-

կաններին, որոնց պատանդ ես վերցրել, ուղարկեր էսթախը, որ անմիջապէս գլխատել տամ: Իսկ եթէ թուլամորթ գտնւես, չենթարկւես իմ հրամաններին և չը շարունակես պատերազմը, այն ժամանակ բանակը յանձնիր Սեփահբող Թուսին, իսկ ինքդ ամօթահար վերադարձիր էսթախը:

ՍԻԱՀՈՒԾ (Անզուսապ յուզմունքով) Կրակի բովից անցայ, հիմի էլ թշւառութեան և անարգանքի մէջ են ուզում թաղել իմ հոգին: Ուրանամ իմ տւած խօսքը, պատիւս անարգեմ, լինեմ ստախօս, լինեմ խաբերայ... Ո՞չ, ես այդ անել չեմ կարող! Գլխիկոր վերադառնամ էսթախը, որ հայրս ինձ թուլամորթ անւանի... Իմ հօր պալատում ինձ ըստ պատում են դաւեր ու սադրանքներ, պարսաւանք ու ծաղր: Իրանի հր հեռաւոր ու խուլ անկիւնն էլ գնամ, Սուդաբէի հալածանքը հասնելու է ինձ: Է՞ս, Բահրամ, թագաժառանդ եմ և իմ լայնածաւալ հայրենիքում պատսպարելու մի անկիւն չունեմ: Խորհուրդ տուր ինձ, ասա, ի՞նչ անեմ, ժլը գնամ:

ԲԱՀՐԱՄ Քո վիշտն ինձ խորտակում է, տէր իմ: Արքան գուցէ մի վայրկեան վրդովլած է եղել. մի նոր նամակ գրիր, բացատրիր իրերի վիճակը: Նամակը ես ինքս կը տանեմ, կընկնեմ նրա ոտները, կը խնդրեմ, կաղաչեմ...

ՍԻԱՀՈՒԾ Անօգուտ է. նրա վճիռը վերջնական է: Թէկուզ ես կորչելու էլ լինեմ, նա իր հրամանը յետ չի վերցնի: Ի՞նչ անենք ուրեմն, ինչպէս հակառակենք նրա արքայական հրամանին:

ՍԻԱՀՈՒԾ (Հեղնանքով) Գործադրենք այդ վճիռը, քանի որ ջընջել չենք կարող: Անպատիւ դառնանք և յետոյ՝ ոճրա-

գործ: Գնանք մեր վրանի տակ մեր հիւրերին մորթենք, մորթենք անխնայ այն հարիւր ազնւականներին, որոնք պատանդ են մեզ մօտ և դարերի անէծքն առնենք մեր ուսերին: (Լուր կանգնում է եւ խորհում մի քանի վայրկեան): Ես վճռեցի: Ազատ կարձակեմ պատանդներին, նրանց ոսկին ու նէցները կը վերդարձնեմ, կը թողնեմ, որ բոլորն էլ աղատ անցնեն Զէյհունի միւս ափը: Ինքս էլ կը գնամ, կը կորչեմ մի անկիւն, թող այսուհետև զօրավար Թուսն անի այն, ինչ որ ուզում է:

ԲԱՀՐԱՄ Ռոստամն այլու չը կայ, տէր իմ, իսկ եթէ դու էլ քաշւես, մեր ռազմիկները չեն կուի:

ՍԻԱՀՈՒԾ Աւելի լաւ: Բայց պատանդները մնացին Բալխում:

ԲԱՀՐԱՄ Ո՞չ, տէր իմ, առանց քո հրամանի ես նրանց բերել տւի այստեղ:

ՍԻԱՀՈՒԾ Իսկ Սեփահբող Թուսը:

ԲԱՀՐԱՄ Նա դեռ Բալխ չի հասել:

ՍԻԱՀՈՒԾ Ի՞նչ երեսով գնամ և հիւրերիս իմ վրանից հանեմ ու ճամբայ գնեմ: Ե՞կ, հայրս երկրորդ անգամ իմ հոգին սպանեց: (Միասին կամացուկ խօսակցելով զընում են դէպի վրանը: Այդ ժամանակամիջոցում ծախ կողմից երեւում է Գարսիվազը եւ խորազնին հայեացը է նետում վրանի կողմը):

ւում: Սուզաբէից ստացւած տեղեկութիւններն եթէ համապատասխանում են իրականութեան, պէտք է, որ մեր գործի կերպարանքը փոխենք: Սուզաբէի ջանքերով Ռոստամը զրկւել է պաշտօնից: Սիաւուշը պէտք է առանց Ռոստամի կուեի մեզ հետ, կամ թէ չէ խոռվի հօրից: Երկու գէպքում էլ մենք ենք շահելու: Պիտի շահագործեմ Սիաւուշի ներկայ վիճակը: Գուցէ նա է լինելու այն պատւանդանը, որի վրայով ես պիտի համեմ գահին ու Սուզաբէին: Վերջի վերջոյ նա ընկնելու է իմ ձեռքով, բայց երբ, ի՞նչ պարագաներում, այդ էլ կախւած է բախտից: Առիթի պիտի սպանեմ, առիթի. և այդ առիթը կը ներկայանայ մի օր: (Բահծամը դուրս է գալիս վրանից): Բահրամն այս կողմն է գալիս. երեխ բան ունի ինձ յայտնելու:

10.

ԳԱՐՍԻՎԱԶ ԵՒ ԲԱՀՐԱՄ

ԳԱՐՍԻՎԱԶ Իշխան, լսեցի, որ Ռոստամը հասել է Բալխ: ԲԱՀՐԱՄ (Սնկուսի) էլ է ձևանում՝ գարի ստանալու համար: (Բարձր) Խոկ մենք Ռոստամից գեռ լուր չենք ստացել: ԳԱՐՍԻՎԱԶ Համոզւած եմ, որ Քէյ Քաւուս արքան իր բարի համաձայնութեամբ է պսակելու արքայազնի թափած ջանքերը:

ԲԱՀՐԱՄ Սյու էլ չը գիտեմ, միայն թէ արքայազնը հրամայեց, որ դուք յետ ստանաք ձեր բերած ընծաները: ԳԱՐՍԻՎԱԶ (Ապշած) ինչու, չը լինի թէ Աֆրասիաբի հետ վիճաբանել են: Եթէ մի բան կայ, ասան, իշխան, ես իս-

կոյն կը շտկեմ: Եթէ Աֆրասիաբը մի սխալ է գործել և վիրաւորել է արքայազնին...

ԲԱՀՐԱՄ Նրանք իրար հետ շատ սիրալիր են, ինչպէս հայր և որդի: ԳԱՐՍԻՎԱԶ Այդպէս էլ պիտի լինի, քանի որ մարմնի ճամբով արդէն այդպէս է:

ԲԱՀՐԱՄ Այսինքն: ԳԱՐՍԻՎԱԶ Որ Սիաւուշն էլ մեր արիւնակիցն է, մեր շատ մօտիկ ազգականը:

ԲԱՀՐԱՄ Արքայազնը վերադարձնում է նաև ձեր հարիւր պատանդները:

ԳԱՐՍԻՎԱԶ Գիտեմ, արքայի համաձայնութիւնն ստանալուց յետոյ: ԲԱՀՐԱՄ Ոչ, հենց հիմա, խնդրում եմ արի և ստացիր:

ԳԱՐՍԻՎԱԶ Քէյ Քաւուս արքայի համաձայնութիւնն ստացւեց, պատերազմը վերջացմաւ:

ԲԱՀՐԱΜ Զը գիտեմ, Եկ և ստացիր ձեր բերած ընծաները. ձեր պատանդներն էլ այստեղ են: Եկ, իշխան: (Գնում է լէպի աջ. Գարսիվազը հետեւում է նրան):

ԳԱՐՍԻՎԱԶ Տարօրինակ է: Արդեօք Աֆրասիաբն այդ մասին տեղեկութիւն ունի՞:

ԲԱՀՐԱΜ Անշուշտ, անշուշտ: (Հեռանում են: Վրանից դուրս են գալիս Աֆրասիաբը, Փարանզիսը, Եւ ապա Սիաւուշը: Երեքն էլ տիտոր են: Սիաւուշը մնում է խորքում եւ վշտու հայեացը է նետում դէպի իր բանակը):

11.

ԱՖՐԱՆԳԻՍ, ԳԱՐԱՆԳԻՍ, ԱՊԱ ՍԻԱԼԻՒՑ

ԳԱՐԱՆԳԻՍ Հայր, ի՞նչ է անելու նա:

ԱՖՐԱՆԳԻՍ Ասաց, որ հեռանալու է իր երկրից:

ՖԱՐԱՆԳԻՍ Բայց մւր է գնալու:
 ԱՖՐԱՄԻԱԲ Զը գիտեմ, չասաց ինձ:
 ՖԱՐԱՆԳԻՍ (Լալազին) Բայց չէ որ ես ու նա...
 ԱՖՐԱՄԻԱԲ Սիրում էիք իրար:
 ՖԱՐԱՆԳԻՍ Դու էլ էիր ցանկանում, դու կապեցիր մեր սրտերը
 իրար... Հայր, մի հնարք գտիր: Լաւ չի լինի, որ նա
 փոխանակ մի օտար երկիր գնալու, գայ մեզ մօտ: Դու
 նրան հայրութիւն կանես: Առաջարկիր նրան քո պաշտ-
 պանութիւնը:
 ԱՖՐԱՄԻԱԲ Ես սիրով կը ցանկանայի նրան որդեղբել ապաս-
 տան տախ բայց վախենում եմ ինքը ընդունի: (Փա-
 րանգին արտասանելով նայում է Սիատուշին)
 ՍԻԱԽՈՒԾ (Ս'օտենալով նրանց) Ներիր, արքայ, ինչ որ կատար-
 ւեց կատարւեց հակառակ իմ կամքի: Այս խնդրում
 հայրս ինձ է անսարդում և ոչ թէ քեզ:
 ԱՖՐԱՄԻԱԲ Եւ դու, մեծահոգի արքայազն, երբ վճռել ես հեռա-
 նալ քո երկրից, ես քեզ երախտագիտութեամբ կըն-
 դունեմ ինձ մօտ: Եղիր իմ որդին, ես էլ կը լինեմ քո
 հայրը: (Դրկախառնում են):
 ՍԻԱԽՈՒԾ Սրտանց ընդունում եմ քո սրտաբուխ հրաւէրը: Թոյլ
 տուր արքայ, որ իմ հարիւր զինակիցները հետեւն ինձ:
 Ես նրանցից չեմ կարող բաժանել:
 ԱՖՐԱՄԻԱԲ Ով որ գայ քեզ հետ, բարի է եկել: Քոնն է թու-
 րանը. որ անկիւնն ուզում ես, ընտրիր քեզ համար:
 Գնանք միասին. կամ գուցէ...
 ՍԻԱԽՈՒԾ Մի վերջին պարտք ունեմ կատարելու. բանակը յանձնեմ
 Բահրամին, վերջին հրաժեշտու տամ և հասնեմ ձեզ:
 ԱՖՐԱՄԻԱԲ Թարանգիս, գո՞ն ես քո հօրից:

ՖԱՐԱՆԳԻՍ Շնորհակալ եմ, տէր: (Աֆրասիաքն ու Փարանգիսը
 գնում են դէպի ձախ: Հնչում են թուրալ ական փողերը:
 ՍԻԱԽՈՒԾ (Երկար նայում է նրանց յետելից, ապա յետ է դառ-
 նում՝ ու դիտում իր վրանը) Է՞ս, մնաս բարով, արքա-
 յական իմ սպիտակ վրան, դու այլևս իմը չես... (Փա-
 լիս է Բահրամը):

12.

ՍԻԱԽՈՒԾ ԵՒ ԲԱՀՐԱՄ

ԲԱՀՐԱՄ Ընծաներն ու պատանդներն ուղարկեցի Գարսիվազի
 հետ: Թուրտոնցիներից այլևս ոչինչ չը մնաց մեզ մօտ:
 ՍԻԱԽՈՒԾ (Վերցնում է թագը եւ դնում գահի վրայ) Բեր իմ
 սաղաւարտը, աղեղն ու նիզակը: (Բահրամը գնում է
 դուրս: Սիատուշը կողքի սուրն արծակում է): Սա էլ իմը
 չէ, սա էլ յանձնեմ նրան: (Բահրամը վերադառնում է):
 Հէ, սա էլ յանձնեմ նրան:

ԲԱՀՐԱՄ Ստացիր, տէր իմ:
 ՍԻԱԽՈՒԾ (Ժածկում է սաղաւարտը, վերցնում է աղեղն ու նի-
 զակը) Բահրամ, քեզ եմ յանձնում բանակը, քեզ եմ
 յանձնում պարէնն ու զէնքերը:

ԲԱՀՐԱՄ (Հեծկլումնըով) Արքայազն...
 ՍԻԱԽՈՒԾ Ես այլևս արքայազն չեմ. ահա իմ թագը և իմ սուրը,
 սրանք վերագարձրու իմ հօրը: Ես գնում եմ. ես այլևս
 թագածառնդ չեմ:

ԲԱՀՐԱՄ Ո՞ւր:
 ՍԻԱԽՈՒԾ Թուրան: Մօրս սպանեցին կսթախրում, ինձ էլ կը սպա-
 նեն: Զէի գնայ, բայց քանի որ հայրս իր հոգին ծա-
 նեն: Կը գնայի Զաբոլստան, Ռոստամի
 խել է Սուրբարէին... Կը գնայի Զաբոլստան, մօտ, բայց այնաեղից հայրս կարող է ինձ պահանջել,

Կարշաւի Նիմուռղի վրայ, ես էլ ստիպւած զէնք պիտի
բարձրացնեմ հօրս դէմ, հայրենիքիս դէմ: Իսկ ես եր-
բեք չեմ ուզում հայրենիքիս դէմ զէնք բարձրացնել:

ԲԱՀՐԱՄ Բայց դու կը վերադառնաս, տէր իմ...
ՍԻԱԽՈՒԾ Ոչ, մի բան ինձ ասում է, որ ես այլևս յետ չեմ գայ:
(Չոգում, համբուրում է հողը) Մնաս բարով, իմ հայ-
րենի երկիր, ես այլևս քո հողի վրայ ոտք չեմ դնելու:
Մնաս բարով, արքայական դրօշ, քեզ է՛լ չեմ տեսնելու:
Հօրս ասա, Բահրամ, որ լաւ պահի այս թագն ու սուրբ:
Ողջոյնիս խօսքը տուր իմ բանակին, իմ քաջ ուազմիկ-
ներին: Արի գիրկս, Բահրամ, համբուրեմ քեզ, համբու-
րեր ինձ, որ կարօտով չը մնամ: (Թրկախառնում են):
Մնաս բարով, իմ հայրենի աշխարհ, ես դժբախտ եմ և
անկարող, իսկ դու երջանիկ եղիր, դու հզօր եղիր...
(Արցունքուտ աշքերը մի վերջին անգամ յառում է
արքայական դրօշին եւ արագ քայլերով դիմում է դէ-
պի ծախ կողմը: Բահրամը բարձրածայն հեկեկում է):

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

ԶՈՐՅԱՆ ՐԴԻ ԱՐԱՐ

ԾԱՐՅԱՆԻ ՊԱԼԱՏԸ (ՍԻԱԽՈՒՇԿԵՐՑ)

Հոյակապ ու ընդարձակ մի սրահ, բազմաթիւ մուտքերով։ Պատերին իրանցի հեռուների նկարներ։ Մըրաճի խորքի ամբողջ ճակատը բաց է, որտեղից երեսում են պալատը շրջապատող ամուր պարիսպներն ու բուրգերը, ինչպէս նաև հեռուն ընկած բարձր բղուրների շղթան։ Մըրաճը զարդարւած է նուրբ ճաշակով եւ արքայակայել շքեղութեամբ։

1.

ՍԻԱԽՈՒՇ ԵՒ ՖԱՐԱՆԳԻՄ
(Կանգնած են իրար մօտ եւ նայում են դուրսը)

ՖԱՐԱՆԳԻՄ Որքան հոյակապ, հպարտ և անառիկ է մեր այս գղեակը։
ՍԻԱԽՈՒՇ երջանիք ես դու մեր այս խոնարհ ամբոցում,
ՖԱՐԱՆԳԻՄ Խոնմը... Սիաւուշկերտի հոչակն աշխարհն է բռնել։
Երկրի վրայ ոչ մի թագաւոր այսպիսի շքեղ պալատ
չունի։ Արևելքի բոլոր ծայրերից իշխան և իշխանունի
Շարան են գալիս, մեր այս պալատը տեսնելու համար։
ՍԻԱԽՈՒՇ Արևելքի բոլոր ծայրերից, բացի իմ հեռաւոր հայրենիքից։ Միթէ իրանում բոլորը մոռացել են ինձ և

այնտեղ ոչ ոք ինձ չի՞ մտաբերում: Կուզենայի, որ այդ
բոլոր օտար իշխանների փոխարէն, թէկուղ մի շատ
հասարակ ծիւր գար ինձ իրանից, միայն թէ իրանից:
Առնէի ես նըան իմ գիրկը, սեղմէի կրծքիս և հայրե-
նիքիս կարօտն առնէի նրա այրւած շրթունքներից:

ՖԱՐԱՆԳԻՍ Միշտ Իրանը, միշտ քո իրանը:
ՍԻԱՀՈՒԾ Այն, սլրելիս, միշտ իմ իրանը: Այստեղ ինչ որ էլ կա-
ռուցեմ, ինչ որ էլ ստեղծեմ, իմը չի լինելու:

**ՖԱՐԱՆԳԻՍ Բայց չէ՞ որ հայրս այս նահանգը նւիրեց քեզ. քոնն
է այս պալատը, քոնն են ամենագեղեցիկ ու ջրառատ
դաշտերը:**

**ՍԻԱՀՈՒԾ Հայրդ ինձ նւիրեց այս հողը, ոսկի ու արծաթ և թագ
ու գահ. շնորհապարտ եմ, բայց... Տեսնում ես այդ ա-
րելը, որ երկրին լոյս ու ջերմութիւն է տալիս, այդ
արեն օտար է ինձ, իմ հոգին չի լուսաւորում, իմ սըր-
տին տաքութիւն չի տալիս:**

ՖԱՐԱՆԳԻՍ (Ճիրում է) Դու ինչու միշտ տխուր ես, ինչու:
ՍԻԱՀՈՒԾ Ես գերի եմ գարձել մի տարօրինակ նախազգացման,
աստղագէտներն ինձ համար մի ահաւոր վախճան են
գուշակել: Զգում եմ, որ նրանց գուշակութեան օրը
մօտենում է: Ինձ վերսաին հալածելու են և այս հա-
լածանքը վերջինն է լինելու:

ՖԱՐԱՆԳԻՍ Բայց մի կը յանդգնի քեզ պէս քաջին հալածել,
զէնք բարձրացնել քեզ վրայ, երբ իմ հայրը կայ:

ՍԻԱՀՈՒԾ (Ճիրու ժպիտով) Ես իմ զօրութեան գիտակցութիւնն
ունեմ. եթէ չափւելու լինենք, ոչ մի թուրանցի ինձ չի
կարող յաղթել: Իմ պարտութիւնը կարող է գալ իմ
ներքին էութիւնից: Յիշողութեանս մէջ մի սկ կէտ կայ:

Հոգիս մի վէրք է ստացել իմ հօր պալատում, մի չար
կնոջ տեսքից: Երբ մտաբերում եմ այդ անիծակուռ
վայրկեանը, բազուկս կորցնում է իր ոյժը, հոգիս՝ իր
արկութիւնը... Իսկ ի՞նչ կարող է անել քո հայրը... Եւ
յետոյ, իմ մտավախութիւնն էլ քո հօրից է: Դու էլ
այդ գիտես արդէն:

**ՖԱՐԱՆԳԻՍ Հայրս չար չէ, նա դիւրահաւատ է և դա է նրա մի-
ակ թերութիւնը: Նրա մասին նոր բան ես լսել: Մարդ
է եկել նրա մօտից և կամ մէկը պատմել է քեզ նրա
գիտաւորութեան մասին:**

ՍԻԱՀՈՒԾ Նոր՝ ոչինչ: Վերջին անգամ Գարսիվազն էր եկել, նրա
խօսքերից հասկացայ, որ հայրդ լաւ չի տրամադրւած
դէպի ինձ: Եւ ես գիտեմ, որ երբ Թուրանում, ձմեռ թէ
գարուն, երկինքն ամպում է, կարկուտ է գալիս:

ՖԱՐԱՆԳԻՍ Գարսիվազը չասմց այդ սառնութեան պատճառը:

ՍԻԱՀՈՒԾ Զը գիտէր, խոստացաւ իմանալ և շտկել:

ՖԱՐԱՆԳԻՍ Լաւ չէ՞ր լինի, որ մենք գնայինք հօրս այցելութեան:
Անձամբ կը խօսէիր հետը և եթէ որեէ թիւրիմացու-
թիւն կայ, անկեղծ բացատրութեամբ կը հարթւի:

ՍԻԱՀՈՒԾ Ես էլ եմ ցանկանում, միայն սպասում եմ Փիրանին.
Նա Թուրանի ամենապարկեշտ մարդն է:

ՖԱՐԱՆԳԻՍ Փիրանն ազնիւ մարդ է. երանի թէ շուտ գար: Նրա
ճամբորգութիւնը շատ երկար տևեց:

ՍԻԱՀՈՒԾ Ամբողջ Հնդկաստանն ու Զինաստանը պիտի շրջէ: Նա
այսօր կամ վազն այստեղ կը լինի: Զինուրներիս մեծ
մասն ուղարկել եմ նրան ընդառաջ: (Ներս է մտնում
մի սպասարոր) Ի՞նչ կայ:

ՍՊԱՍԱՀՈՐ Զինացի մի ազնւատոհմ իշխանուհի ցանկութիւն է

յայտնում պալատը տեսնելի
ՍԻԱՀՈՒԾ Լաւ, առաջնորդիր նրան այստեղ: (Սպասաւորը գնում
է): Դու ընդունիր նրան, Ֆարանդիր, այս մելամաղձոտ
տրամադրութեամբ չեմ ուզում այժելուներին երկալ:
ՖԱՐԱՆԳԻՍ Գնա, հանգստացիր, սիրելի աէր իմ: Աշխատիր այդ
տխուր մտքերդ ցրել: (Սիրառը գնում է):

2.

ՖԱՐԱՆԳԻՍ

ՖԱՐԱՆԳԻՍ Ես էլ վերջերս մի տարօրինակ վիշտ եմ զգում: Վա-
խենում եմ իմ երջանկութեան համար, վախենում եմ
իմ երեխայի համար: Շատ մեծ է իմ երջանկութիւնը,
շատ գեղեցիկ է իմ Քէյ Խոսրովը: Հայրս կասկածու է
ու փոփոխամիտ. մէկին սիրում է, մեծարում և մէկ էլ
յանկարծ իր երեկուայ կուռքը զայրոյթով ջարդում, փըշ-
րում է: Երեխաս ծնւեց, մի տարեկան դարձաւ, իսկ դեռ
նա չեկաւ մեզ այցելութեան, դա վատնշան է: Բայց հչ,
Սիաւուշին հայրս շատ է սիրում, նրա հետ ամարդորէն
չի վարէ: Ահա մեր այցելուն: (Քալիս է Սուրաբէն,
չինական իշխանունու տարազով, դէմքը քօղով ծած-
կած: Սպասաւորները խոնարհում են ու յիտքացւում):

3.

ՍՈՒԴԱԲԷ ԵՒ ՖԱՐԱՆԳԻՍ

ՍՈՒԴԱԲԷ Ողջըն, երջանիկ արքայագուստը:
ՖԱՐԱՆԳԻՍ Ողջըն, գեղեցիկ իշխանունիր բարի եւ եկել: (Համ-
բուրում են):

ՍՈՒԴԱԲԷ Ամուսինս այցելել է ձեր հրաշակերտ քաղաքը, որի
շքեղութեան վրայ բոլորը հիանում են:
ՖԱՐԱՆԳԻՍ Նորից բարի ես եկել: Համեցիր, բազմիր այստեղ և
հանգստացիր: (Ծրկու նաժիշտներ ըմպելիք են բերում)
Համեցէք:

ՍՈՒԴԱԲԷ Դու շատ ազնիւ ես, բարի արքայագուստը: (Խմում է):
Այս գեղեցիկ պալատում դու շատ երջանիկ պիտի լինես:
ՖԱՐԱՆԳԻՍ Իմ երջանկութիւնն իմ ամուսինն է ու իմ զաւակը:
Դու հետմատ տեղից ես գալիս, իշխանուէի:

ՍՈՒԴԱԲԷ Այս, շատ հեռափց. հարիւրաւոր մղոն ճամբայ եմ եկել:
ՖԱՐԱՆԳԻՍ Եւ այդքան նեղութիւն ես կրել միայն մեր քաղաքը
տեսնելու համար:

ՍՈՒԴԱԲԷ Այս... Եւ յետոյ ամուսինս պիտի տեսնւի Աֆրասիաբ
արքայի հետ:

ՖԱՐԱՆԳԻՍ Երկի նոր գաշինք կամ համաձայնութիւն կնքելու
համար:

ՍՈՒԴԱԲԷ Այզպիսի մի բան, որ մեղ՝ կանանց չեն ասում:
ՖԱՐԱՆԳԻՍ Եւ ինչ պէտք է մեզ այդ բաներն իմանալ:

ՍՈՒԴԱԲԷ Ճիշտ ես հրամայում, արքայագուստը. մեզ մեր իշխան-
ների սիրտն է պէտք և ոչ թէ նրանց գործերը: (Նա-
յում է նկարներին) Շատ գեղեցիկ են այդ նկարները,
բայց կարծես թուրանցիներ չը լինեն:

ՖԱՐԱՆԳԻՍ Դրանք իրանի հերոսների նկարներն են:
ՍՈՒԴԱԲԷ Բայց չէ որ իրանն ու Թուրանը թշնամիներ են, ինչ-

պէ՞ս էք հանգուրժում:
ՖԱՐԱՆԳԻՍ Իյ տէրն էլ իրանի թագաժառանգն է:
ՍՈՒԴԱԲԷ Ուրեմն ձեր երկրները հաշտել են իրար հետ:
ՖԱՐԱՆԳԻՍ Ոչ, ամուսինս խոռվեց իր հօրից և եկաւ մեր երկերը:

ՍՈՒԴԱԲԵ Ուրեմն նա այլևս հայրենիք չի վերադառնալու:
ՖԱՐԱՆԳԻՍ Զը գիտեմ, իր հայրենիքում նրան շատ են հալածել:
ՍՈՒԴԱԲԵ երեխ իր հայրը:
ՖԱՐԱՆԳԻՍ Ո՛չ, Քէյ Քաւուսի կինը, մի չար, շատ չար կին:
ՍՈՒԴԱԲԵ (Ծնցում է) իր մայրը:
ՖԱՐԱՆԳԻՍ Ոչ հարազատ, այլ խորթ մայրը՝ Սուդաբէ թագուհին:
ՍՈՒԴԱԲԵ (ՄԵԿՈՒՍԻ) եթէ իմանար, որ այդ Սուդաբէն այստեղ
է... (Բարձր) ներիր, արքայադուստր, ես քեզ նեղու-
թիւն եմ պատճառում: Թոյլ տուր քո սպասաւորներն
ինձ առաջնորդեն այս գեղեցիկ պալատի զանազան
մասերը ցոյց տալու:
ՖԱՐԱՆԳԻՍ Բարի իշխանուհի, այդքան շուտ չես մեկնելու այս-
տեղից. մի քանի օր էլ կը մնաս մեղ մօտ:
ՍՈՒԴԱԲԵ Ամուսինս շտապում է. մենք պէտք է ճանապարհուենք
Թուրանի մայրաքաղաքը՝ Քենդազար:
ՖԱՐԱՆԳԻՍ Գոնէ միայն այսօր: Ամուսինս գոհ կը լինի քեզ
տեսնելով. մի փոքր անհանգիստ էր, այդ պատճառով
չը կարողացաւ գալ ձեզ դիմաւորելու:
ՍՈՒԴԱԲԵ ես էլ շատ կը ցանկանայի արքայազնին իմ յարգանքն
ու հիացմունքը յայտնել, սակայն պիտի ներես, ար-
քայադուստր:
ՖԱՐԱՆԳԻՍ Խնդրում եմ մնաս: Քեզ պէս ազնւական հիւրերը մեզ
անսահման հաճոյք են պատճառում: Սպասիր մի վայր-
կեան, ծածկեմ իմ շղարշը և ընկերակցեմ քեզ՝ պալա-
տը տեսնելու:
ՍՈՒԴԱԲԵ Օ՛հ, ոչ, արքայադուստր, դու ինձ ամաչեցնում ես, ես
արժանի չեմ...
ՖԱՐԱՆԳԻՍ (Գնալով) Զէ, չեմ թողնի, որ դու այսօր գնաս: Ես
իսկոյն կը գամ: (Պուրս է զնում):

4.

ՍՈՒԴԱԲԵ, ԱՊԱ ՖԱՐԱՆԳԻՍ

ՍՈՒԴԱԲԵ (Շղարշը ծգում է ուսերին ու նայում է իր շուրջը)
Այստեղ է նա... եթէ յանկարծ դուրս գայ և ինձ տես-
նի այստեղ... Ի՞նչպէս կարող էր երևակայել: Ի՞նչո՞ւ ես
այս խենթ քայլն արեցի, Կրծքիս տակ հրկիզող այս
կրակը մինչև մեր պիտի տանի ինձ: Քաւուս արքան
խոռվեց ինձնից և որպէս պատիժ ինձ ուղարկեց Էս-
թախրից հեռու մի խուլ ու մութ ամրոցում ապրելու և
երկու տարով զրկեց ինձ իր տեսքից: Բայց այդ հին
երկու տարով զրկեց ինձ իր տեսքից: Այս այդ հին
ամրոցում կրծքիս տակի բոցը դարձեալ բորբոքւեց և
չը կարողացայ համբերել: Օգտւեցի Քաւուսի խոռվու-
թիւնից և եկայ... Կամ պէտք է մեղնեմ իր այս եր-
ջանկութիւնը և կամ պիտի տապալւեմ իր ոտների տակ:
Այս թող մեռնեմ, միայն թէ ինքը լինի ինձ խփողը: Այս
թուրանուհին երջանիկ է ու հպարտ նրանով: (Ուորի
ծայներ են լսում. Ուղարէն ծածկում է դէմքը: Ե-
րեւում է Փարանգիսը շղարշն ուսերին ծգած, զիսին
գեղեցիկ թագը):

ՖԱՐԱՆԳԻՍ Գնանք, իշխանուհի. Հրամայել եմ, որ քեզ համար մի
սենեակ պատրաստեն, որ դու այնտեղ հանգստանաս:
ՍՈՒԴԱԲԵ Շնորհակալ եմ, գեղեցիկ արքայադուստր: (Դուրս են
գնում ծախ կողմից: Հեմը մնում է դատարկ: Քիչ
յետոյ ներս են զալիս Դարսիվազն ու Թէյմուրը,
որոնք զնում են բոլոր անկիւնները):

5.

ԳԱՐՄԻԿԱԶ ԵՒ ԹԵՑՄՈՒԻՐ

ԳԱՐՄԻԿԱԶ ՈՒՐ ԵՆ ՄԵՐՆ Ու ՄԻՐՈՒՀԻՆ:

ԹԵՑՄՈՒԻՐ Տիրուհին պալատն է ցոյց տալիս մի իշխանուհու, իսկ
Սիաւուշը հանգստանում է իր առանձնասենեակում:
ԳԱՐՄԻԿԱԶ Ուրեմն կարող ենք ազատ արտայայտել:
ԹԵՑՄՈՒԻՐ Ազատ և համարձակ, տէր իմ: Բայց ինչու այսպէս մե-
նակ ու այսքան շտապ:

ԳԱՐՄԻԿԱԶ Գործը լուրջ է, իսկ ժամանակը՝ կարճ: Նրանց պը-
տոյտը երկար կը տեկի:

ԹԵՑՄՈՒԻՐ Այդպիսի պտոյտներն երկար են տեռում:

ԳԱՐՄԻԿԱԶ Կատարել ես, ինչ որ քեզ պատվիրել էի:

ԹԵՑՄՈՒԻՐ երկար նեղութիւնից յետոյ հազիւ կարողացայ մի
գրագրի համոզել և գործը գլուխ բերել: Քո տւած ամ-
բողջ ոսկին սպառեց:

ԳԱՐՄԻԿԱԶ Այդ գրագիրն ապրում է գեռ:

ԹԵՑՄՈՒԻՐ Ոչ այս երկրի վրայ: Գործն աւարտելուց յետոյ նրա
գործն էլ աւարտեցի:

ԳԱՐՄԻԿԱԶ Նամակները Սիաւուշի անձնական մետաքսէ կտոր-
ների վրայ են գրւած:

ԹԵՑՄՈՒԻՐ Այն և իր սեփական կնիքով կնքւած:

ԳԱՐՄԻԿԱԶ Պատէրս սխալ կատարած չը լինեմ:

ԹԵՑՄՈՒԻՐ Երեք հատ են. մէկը Ռոստամին, որին հրաւիրում է
այստեղ, մէկը Քաւուսին, որ զօրք հաւաքի և Զէյրունն
անցնի, մէկն էլ Արմէն իշխանին, որին նկարագրում է
Թուրանի անառիկ կէտերը և այդ կէտերն անցնելու
գաղտնիքները:

ԳԱՐՄԻԿԱԶ Դու մեծ մարդ կը դառնաս: Մօ՞տդ են, տուր ինձ:
ԹԵՑՄՈՒԻՐ (ծոցից հանում է նամակները եւ յանձնում Գարսի-
վազին) Ստացիր, տէր իմ: Քենդազարում մի բան կա-
տարւել է:

ԳԱՐՄԻԿԱԶ Ամէն ինչ յաջող է:

ԹԵՑՄՈՒԻՐ Ի՞նձ համար:

ԳԱՐՄԻԿԱԶ Եւ քեզ համար, և' ինձ համար:

ԹԵՑՄՈՒԻՐ Արդի՞ւնքը:

ԳԱՐՄԻԿԱԶ (Շուրջը նայելով) Արդիւնքն այն է, որ Աֆրամիա-
րը գալիս է՝ Սիաւուշկերտն ու իր տիրոջը խորտակելու:
ԹԵՑՄՈՒԻՐ Սրանց յաղթելն այնքան էլ դժւար չէ: Նա իր զին-
ւորների մի մասն ուղարկել է Փիրանին ընդառաջ:
ԳԱՐՄԻԿԱԶ Ա՛լ, այդ ծեր աղւէսը: Եթէ նա շուտ հասնի, մեր
գործը կը ձախողի:

ԹԵՑՄՈՒԻՐ Նա այստեղ կը լինի ամենաշուտը վաղն առաւօտեան:

ԳԱՐՄԻԿԱԶ Եթէ այդպէս է, ուրեմն դագաղին կը հասնի: Լսիր
ինձ, դու մի քանի հաւատարիմ թուրանցիների հետ
կը թագնւես գլխաւոր բուրգերից մէկում և այնտեղից
կը յարձակում կը գործես Աֆրամիարի զօրքի վրայ: Եթէ
մի երկու զինւոր էլ սպանէք՝ աւելի լաւ: Առ այս ոս-
մի երկու զինւոր էլ սպանէք՝ աւելի լաւ: Առ այս ոս-
մի երկու զինւոր էլ սպանէք՝ աւելի լաւ: Առ այս ոս-
մի երկու զինւոր էլ սպանէք՝ աւելի լաւ: Առ այս ոս-
մի երկու զինւոր էլ սպանէք՝ աւելի լաւ: Առ այս ոս-

թԵՑՄՈՒԻՐ Շնորհակալ եմ, տէր իմ, հրամանդ անսխալ կը կատա-
րեմ: (Գնում է):

6.

ԳԱՐՄԻՎԱԶ, ԱՊԱ ՍՈՒԴԱԲԵ

ԳԱՐՄԻՎԱԶ եթէ Սուդաբէն էսթախրում կարողանար այնքան աշխատանք կատարել որքան ես եմ այստեղ կատարում... (Երեւում է Սուդաբէն. երկուսն էլ զարմանքով նայում են իրար).

ՍՈՒԴԱԲԵ (Արագ մօտենում է նրան եւ շշնջում) ես եմ, Գարսիվազ... Արի եղիր, վճռական ժամը մօտենում է. մեր յաղթանակի ժամը մօտենում է:

ԳԱՐՄԻՎԱԶ (ծունկի է գալիս) Թագուհի...

ՍՈՒԴԱԲԵ (Հեռանալով) Զը հետևեմ, չը փնտռեա ինձ, ես այստեղ եմ: Արժանի եղիր ինձ, արժանի եղիր իմ զոհաբերումին... (Գնում է):

7.

ԳԱՐՄԻՎԱԶ

ԳԱՐՄԻՎԱԶ Նա այստեղ է... Արժանի պիտի լինեմ նրան. վճռական ժամը մօտենում է: Որքան էլ Սիաւուշն իմ հարազատ արիւնից լինի, իմ աղջկայ որդին, սակայն դարձեալ ես երեք զօրաւոր պատճառներ ունեմ նրան կորցնել տալու՝ Սուդաբէն, Թուրանի գահը և այն կատաղի ոխը, որ ես ունեմ դէպի Քաւուսի սերունդը: Սիաւուշը մի զաւակ ունի... (Երկար մտածում է) է՞ն, նրա մի տարեկան զաւակն էլ կը գնայ... (Հաւում է ոտքի ձայներ) Մէկը գալիս է. նրա քայլերի ձայնն է, փոխեմ իմ գէմքը: (Քաշում է մի պնկիւն, ծեւա-

նում է տիսուր եւ ընկճած, երբեմն էլ ցաւագին հոգ է հանում: Երեւում է Սիաւուշը՝ գունատու տիսուր):

8.

ՍԻԱԽՈՒԾ ԵՒ ԳԱՐՄԻՎԱԶ

ՍԻԱԽՈՒԾ (Զը նկատելով Գարսիվազին) Ինչժու է այդ կինն այս սօր շաբունակ պատկերանում իմ աչքի առջև: Ա՛խ, այն չարագուշակ վայրկեանը, երբ հօրս պալատում առաջին անգամ հանդիպեցի նրան... Նրա կերքը, գրաւչութիւնը, նրա մերկ ուսերը, հոլանի կուրծքը... (Զեռներով ծածկում է աչքերը) Ա՛խ, Սուդաբէ, Սուդաբէ... Այդ սկ վայրկեանի վերյիշումն ամէն անգամ գալիս, պղտորում ու պղծում է իմ լուսաւոր ու անքիծ զգացումները: Այս հոգեկան վիճակով ամենայետին զինւորից էլ ես կը պարտեմ: Հոգիս սեացըին ու խոցեցին էսթախրում, սիրտս վշրեցին Զէյնունի ափին, այստեղ էլ... է՞ն, ով գիտէ, գուցէ իմ կառուցած այս շքեղ պալատն էլ իմ գերեզմանը դառնայ... (Յանկարծ հայեացըն ընկնում է անկիւնում կծկւած Գարսիվազի վրայ) Դու այստեղ ես, Սեփահրոդ Գարսիվազ, և առանց լուր տալու: (Սիաւուշը վերստանում է իր խրոխտ կեցւածքը):

ԳԱՐՄԻՎԱԶ Փախւայ Աֆրասիաբի մօտից, եկայ մենակ ու թագուն: ՍԻԱԽՈՒԾ Փախւար, բայց ինչժու:

ԳԱՐՄԻՎԱԶ Նա կատաղել է, եղբայրասպան հին հրէշն արթնացել է նրա հոգու մէջ: Ես սարսափում եմ նրա դժոխային զայրայթից, եկայ քեզ մօտ...

ՍԻԱՀՈՒԾ Ես պատրաստ եմ քեզ օգնելու. կը գնամ նրա մօտ և
կը բարեխօսեմ քեզ համար:

ԳԱՐՄԻՎԱԶ (Ժաւազին հառաջանքով) Նա գալիս է...

ՍԻԱՀՈՒԾ Մի սարսափիր, ես կը կասեցնեմ նրա զայրոյթը: Եթէ
հարկ եղաւ, կը դիմադրենք նրան, մինչև որ Փիրանը
հասնի:

ԳԱՐՄԻՎԱԶ Ա՛խ, երանի թէ ազնիւ Փիրանը շուտ համար: Նա
Աֆրասիարի վրայ մեծ աղեցութիւն ունի, նա չէր
թողնի, որ այս պատուհասը տեղի ունենար:

ՍԻԱՀՈՒԾ Ո՞ւր է, որտեղ է հասեր:

ԳԱՐՄԻՎԱԶ (Ողբազին) Նատ մօտ, էլի արեի մի փոքրիկ թեքում
և նա այստեղ կը լինի:

ՍԻԱՀՈՒԾ Բայց ինչու է նա քո գէմ կատաղել:

ԳԱՐՄԻՎԱԶ (Լալազին) Ա՛խ, երանի, երանի...

ՍԻԱՀՈՒԾ Այդպէս մի ողբա, սիրելի Գարսիվազ, քեզ սպառնա-
ցող վանդն ինձ վրայ եմ առնում,

ԳԱՐՄԻՎԱԶ Տէր իմ, վատանդն ուզզակի ինձ չի սպառնում:

ՍԻԱՀՈՒԾ Այլ ժւմ, ժւմ...

ԳԱՐՄԻՎԱԶ Գուցէ իմ այստեղ գալն իմանայ և ինձ էլ պատժի.
բայց նա աւելի թանկագին կեանք է ուզում խորտակել:

ՍԻԱՀՈՒԾ (Ապշած) Ո՞ւմ կեանքը, ով է նրա զայրոյթի առարկան:

ԳԱՐՄԻՎԱԶ (Լալով եւ դողալով) Դու, տէր իմ, դու:

ՍԻԱՀՈՒԾ Ե՞ս, ինչ եմ արել ես, ինչ առիթ եմ տւել:

ԳԱՐՄԻՎԱԶ Միթէ նա առիթ կամ պատճառ ունէր, երբ իր երկու
հարազատ եղբայրներին մորթեց: Նախանձն է պատ-
ճառը, տէր իմ, նախանձը: Նա իրենից աւելի լաւին չի
կարողանում հանդուրժել:

ՍԻԱՀՈՒԾ Բայց ես նրա հիւրն եմ, նրա հպատակը:

ԳԱՐՄԻՎԱԶ Հիւր թէ հպատակ՝ միենոյն է նրա համար: Պէտք է
հոչակ չը հանէիր. քո բարի հոչակն ամբողջ Արևելքն
է բռնել: Ի՞նչ նենգութեամբ նա քեզ հիւրընկալեց՝ աշ-
խարհի աչքին արդար երեալու համար. իր աղջկան
տւեց քեզ, երկիր տւեց քեզ, ուկի ու գահ բախշեց:

ՍԻԱՀՈՒԾ Որ ինձ սպանի մի օր...

ԳԱՐՄԻՎԱԶ (Հառաշելով) Այդպէս է, տէր իմ. Նա քեզ խարեց
հենց Զէյնունի ապիխն, հենց ձեր հանդիպման առաջին
օրը: Պատերազմն սկսելու խնդրում նա իրեն արդա-
րացնելու համար ի՞նչ պատրւակ բերեց:

ՍԻԱՀՈՒԾ Որ հայրս իմ մօրը սպանել էր տւել Սուդաբէի խոր-
հըրդով և ինքը մօրս վրէժն առնելու համար բանակ
էր շարժել իրանի վրայ:

ԳԱՐՄԻՎԱԶ Սնեւ է և ի՞նչ գարշելի սուտ: Նա ինքն է Սուդաբէի
հետ ձեռքը մէկ արած սպանել տւել Խորչէրին:

ՍԻԱՀՈՒԾ Ի՞նքը. ահ, նենգամիտ արիկայ, որքան արիւն կայ քո
ձեռների վրայ:

ԳԱՐՄԻՎԱԶ Ես վաղուց եմ ցանկացել քո աչքը բանաւ բայց վա-
խենում էի. դու նրան շատ էիր սիրում: Վախենում էի,
որ դու իմ աղջկայ զաւակը՝ չը հաւատաս ինձ:

ՍԻԱՀՈՒԾ Ք՞ո աղջկայ զաւակը, Յ՞ս:

ԳԱՐՄԻՎԱԶ (Լալով) Խորչէրն իմ աղջիկն էր:

ՍԻԱՀՈՒԾ Օ՞չ, եազգան, ինչեր եմ լսում և ինչեր պիտի լսեմ դեռ:
Զգում եմ, թէ որքան խորն է քո վիշտը: Սակայն ի՞նչ
եմ արել ես Աֆրասիարին, ինչու է արշաւում ինձ վոյա:

ԳԱՐՄԻՎԱԶ Նրան հաւատացրել են, որ դու այստեղ դաւադրու-
թիւն ես սարքում, նամակներով գաղտնի կապեր ես
պահում իրանի և Հայաստանի հետ և հրաւիրում ես

ՆՐԱՆՑ ԱՐՂԱՎԵԼ ԹՈՒՐԱՆԻ ՎՐԱ

ՍիԱԽՈՒԾ Բայց այդ սուտ է, ես այդպիսի նամակներ չեմ գրել։
Ես զուրս կը գամ Աֆրասիաբի առաջ համարձակ, ա-
ռանց զէնքի, կը գնամ նրա մօտ առանց վախենալու և
կը բացատրեմ ամէն ինչ։

ԳԱՐՄԻՎԱԶ Այդ բոլորը պատրւակ է, գաւակս, որով նա ուղղում
է արտաքին աշխարհի առաջ արդարանալ. Պատճառն
այն է, որ դու իրանցի ես, Խուզէհրի գաւակը, որին
նա ուղեց բոնութեամբ տիրանալ:

ՍԻԱՀՈՒԾ Աւրեմն մարս նրան ձեռքից էու փակեն, իռան.

ԳԱՐՍԻՎԱԶ Այն: Եւ յետոյ նա Սուդաբէի հետ կապեր ունի.
Սուդաբէն է գրդում Նրան, որ քեզ մէջտեղից վերցնի
և որպէս վարձատրութիւն խոստանում է ամուսնանալ
Աֆրասիասի հետ:

ՍԻԱՀՈՒԵԾ Ամբողջ դժոխքն է կանգնել իմ դէմ: Խակ լինչ անեմ ես
հիմա, լինչ խորհուրդ ես տայիս:

ԳԱՐՍԻՎԱԶ Փակւիր ամրոցում և պաշտպանւիր, մինչեւ որ Փե-
րանն ու քո զինառները հասնեն:

**ՍԻԱՀՈՒԾ ԵՐԲ հասնի ամրոցի պատերի տակ, կը խնդրեմ, որ
թոյ տակ իրեն հետ տեսնեմ:**

ԳԱՐՍԻՎԱԶ (Ողբագին) Ո՛չ, ոչ, դուրս չը գաս, այդպիսի յանդրդ-
նութիւն հանես: Նա տմառութեն: Եկա արանին: Ես առա-

ՍԻԱՆՈՒԾ Լառմ եմ քեզ, Գարսիվազ, դու բարի մարդ ես: Դնչ-
քան էլ չը լինի, արիւնակից ենք, թէև ես չէի ուղե-
նայ, որ իմ տոհմի մէջ թուրանական շաղախ լինէր:
Կը փակւեմ ամրոցում, գոներն ամուր փակել կը տամ
և կը սպասեմ իմ բախտին: Բազուկս էլ զեռ բաւական
զօրեղ է:

ԳԱՐՄԻՆԱՎՈՐ Զինւած ու պատրաստ եղիլ, մինչև որ ես վերադառնամ նրա մօտ, գուցէ յաջողեմ նրան համոզել, որ իր չար գիտաւորութիւնից հրաժարվի:

ՍԻԱՀՈՒԾ ԵՐԱԲՄԱՆ ԱՊԱՐԱ ԽՄ. բայց դու իմ պատճառով քո կեանքն
ես վտանգում:

ԳԱՐՄԻՎԱԶ Գնում եմ Եազդանը թող օգնի լինձ, (մեկոսի) որ
մահանդ վճիռը յաջող կերպով կնքել տամ:

Ահա ինձ գոյացությունը կամ առաջարկ կամ պատճեն կամ այլ ուժավոր գործություն է:

9.

ԱՐԱԿՈՅՈՒԹՅՈՒՆ

ՍԻԱՀՈՒՇ Աֆրասիաբ, ես կարող էի քեզ ԶԵՐՈՆՈՒՆԻ ափին փոշի
դարձնել, իմ հզօր բանակով անցնել Թուրան և ամէն
ինչ սրի ու հրի մատնել, Աչքածակ թուրանցի, իմ շը-
քեղութիւնը դու հանգուրժել չը կարողացար, Սակայն
Շարսանը քոնն էր, ես ստեղծել էի քեզ համար, վաղ
թէ ուշ պիտի յանձնէի քեզ և ինքս իմ զաւակի
ու կնոջ հետ վերադառնայի իմ երկիրը, Աւելի լաւ էր
ես իմ հայրենիքում մուրացկան լինէի, քան թէ գայի
այս իժերի երկիրը և ոսկէ թագ կրէի: (Նայում է
դուրս) Օ՞հ, փոշու ամպէ բարձրանում դէպի երկինք:
Նա գալիս է, մօտենում է: Ո՞վ կայ այդտեղ: (Ներս է
մտնում մի իրանցի զինոր) Դու ես, իմ իրանցի եղ-
բայր, ասա պալատապահ սպային, որ շեփորը հնչեցնի,
հաւաքի զինորներին, դղեակի դռներն ամուր փակել
տայ և բոլորը միասին բարձրանան բուրգերը և այն-
տեղ սպասեն իմ հրամանին: Իսկ դու պատրաստիր իմ

զէնքերն ու զբահը: (Զինորը բուրս է գնում): Եթէ
ես ընկնեմ, զաւակս մի օր իմ վրէժը կառնի: (Երկինքը
մթնում է) Երկինքն ինչու մթնեց: (Փողերը հնչում
են): Դժոխային գործ է կատարւելու և եազդանը մեր-
ժում է իր լոյսը: (Արագ, շնչառապառ ներս է մտնում
Փարանգիսը):

10.

ՍԻԱՀՈՒԾ ԵՒ ՖԱՐԱՆԳԻՄ

ՖԱՐԱՆԳԻՄ Ի՞նչ է պատահել, այս ի՞նչ իրարանցում է պալա-
տում, ինչու են բոլորը զինուում:

ՍԻԱՀՈՒԾ (Դառը ժպիտով) Փիրանը գալիս է, ուզում եմ նրա
հետ մի կատակ անել, փակել պալատիս դռներն ու
ընդունել նրան ներս:

ՖԱՐԱՆԳԻՄ Իսկ ես այնքան վախեցայ, ես կարծում էի...

ՍԻԱՀՈՒԾ Որ վտանգ է սպառնում մեզ: (Հեգնական) Ո՞վ կը
համարձակի մեզ վրայ յարձակւել, երբ քո հայրը կայ:

ՖԱՐԱՆԳԻՄ Տրամադրութիւնդ փոխւել է. ջղերդ հանգստացան,
սիրելի Սիաւուց:

ՍԻԱՀՈՒԾ Այս: Ո՞ւր է Քէյ Խոսրովը:

ՖԱՐԱՆԳԻՄ Իր դայեակի մօտ:

ՍԻԱՀՈՒԾ Եթէ քեզանից մի բան խնդրեմ կը կատարեմ:

ՖԱՐԱՆԳԻՄ Ես միշտ էլ իմ տիրոջ հրամանը կատարել եմ:

ՍԻԱՀՈՒԾ Գնա, երեխային վերցրու և մի ապահով տեղ պատըս-
պարւիր:

ՖԱՐԱՆԳԻՄ Բայց ինչու, ինչու թագնւեմ:

ՍԻԱՀՈՒԾ Որովհետև ժամանակն է պահանջում այդ:

ՖԱՐԱՆԳԻՄ Այդ ի՞նչ տարօրինակ բաներ ես խօսում:
ՍԻԱՀՈՒԾ Ի՞նչն է քեզ համար ամենից թանկը:
ՖԱՐԱՆԳԻՄ Թո և երեխայիս կեանքը:
ՍԻԱՀՈՒԾ (Բոնում է Փարանգիսի ծնողը) Յանուն մեր սիրոյ,
յանուն մեր երեխայի, լսիր ինձ առանց յուզելու: Այս,
ինչ որ քեզ պիտի ասեմ, ծանր է: Յանուն Քէյ Խոս-
րովի, դու պիտի հնազանդես ինձ:

ՖԱՐԱՆԳԻՄ Յանուն մեր սիրոյ, յանուն եազդանի, ես կը կատա-
րեմ քո կամքը:

ՍԻԱՀՈՒԾ Դեռ չը գիտեմ, թէ այսօր ի՞նչ է կատարւելու: Պահիր,
պաշտպանիր իմ զաւակին և դաստիարակիր նրան այն-
պէս, ինչպէս մի ապագայ արքայի են դաստիարակում:
Հեռու պահիր նրան ամէն նեղութիւնից, ամէն չարի-
քից: Բարի Փիրանը կօգնի քեզ այդ գործում:

ՖԱՐԱՆԳԻՄ Իսկ դժւ, դժւ ինչ ես լինելու:

ՍԻԱՀՈՒԾ Դեռ չը գիտեմ, թէ բախտն ի՞նչ է վերապահել ինձ:
Թուրանի երկինքը մթնել է իմ գլխին: Գնա և թագ-
ցրու իմ երեխային: Երբ մեծանայ, նա պիտի իր հօր
վրէժն առնի: Իսկ հիմա խնդրում եմ, որ ինչ էլ որ լի-
նի, դուրս չը գաս թուրանցիների մէջ, նրանք տմարդ
են և կարող են իրենց զայրոյթը քո գլխին թափել:

ՖԱՐԱՆԳԻՄ Ի՞նչ կայ, Սիաւուց, դու հիւմնդ ես, ի՞նչ թուրանցի:
ՍԻԱՀՈՒԾ Հայրդ կատաղած գալիս է ինձ վրայ: Տես այն զօրքը,
որոնց առաջին շարքերը սկսում են երևալ բլուրի մօտ:

ՖԱՐԱՆԳԻՄ (Սարսափահար) Ճշմարիտ է: Բայց ես կը գնամ
հօրս մօտ, դուրս կը գամ նրա դէմ, իմ կրծքին կըն-
դունեմ թուրանցիների նիզակների հարւածները...
(Հատում է թուրանցիների փողերի ահաւոր նշշինը):

Երկինքը մթնել է, կարծես զիշեր լինի: Շանթում է կայծակը. որոտի գոռոցները յաջորդում են իրար):
ՖԱՐԱՆԴԻԾ (Որ ընկճած եւ յուսահատ ընկել էր Սիատուշի գիրկը, սթափում է եւ չերմօրէն փաթաթիւում ամուսնու պարանոցով) Թող Եազդանը պահի, պաշտպանի քեզ: Զաւակա... Գնամ, թագցնեմ իմ անուշիկ զաւակին, որ գազանների բերանը չընկնի: (Հալագին, մազերը խոր դուրս է վազում: Շանթում է կայծակը, լսում են որոտի գոռոցներ: Սիատուշը մնում է քարացած, ապա ուշքի է գալիս եւ վերստանում իր խրոխտ ու արի կեցածըլ):

ՍԻԱԽՈՒԾ Պատերազմ է, ես էլ ուզմի մարդ, դիմագրաւեմ այս մէկ աղէտն էլ: (Արագ նետում է դուրս. Փողերի հնչին, կայծակ, որոտ, աղաղակներ: Երեւում է Սուղաբէն՝ այլայլած ու սարսափահար: Նա հազել է իրանունու տարագ, քոյն ուսերին, մազերն արծակ):

11.

ՍՈՒԻԴԱԲԷ

ՍՈՒԻԴԱԲԷ Այս ի՞նչ է կատարում, մի ժամւայ մէջ ի՞նչ պատահետ այս պալատում: Ո՞վ է յարձակում գործողը: Ճիշտ իմ սրտում բոցավառող կրքին է նմանում այս փոթորիկնու պատերազմը, իմ սիրոյ պէս կատաղի, իմ տենչանքի նման խառնակ: Հագայ այս տարազը, որ նրան թագուն երևամ, երևամ ինչպէս մեր հանդիպումի առաջին օրը, որպէսզի մինչեւ խորքերը ցնցեմ նրա հոգին: Եթէ նա ինձ յանկարծ տեսնի այստեղ, բազուկ-

ները կը թուլանան և նա կը պարաւի: (Կայծակը շանթում է եւ բեմի խորքը լուսաւորում): Օ՞հ, տեսայ ես նրան կրակի միջով անցնելիս, բայց այն ժամանակ նա այնքան գեղեցիկ չէր, որքան որ գեղեցիկ է հիմա՝ կայծակի լոյսի տակ նիզակ ճօճելիս... (Աղմուկը գնալով ուժեղանում է. լսում են վահաններին դիպող սրերի ձայները): Կարծես բերդի գոները բացւել են, բերդը մատնել է և թշնամին ներս է խուժել: (Ոտքի ձայներ են լսում) Բարձրանում են. քաշեմ մի անկիւն ու դիտեմ այս նախճիրը: Վտանգն էլ ինձ չի սարսափեցնում: (Քաշում է մի անկիւն, թագնեած դիտում է տեսարանը. Սիատուշը դրսից կանչելով ներս է վազում, մի ձեռքում բռնել է մերկացրած սուրը, իսկ միտում աղեղը):

12.

ՍԻԱԽՈՒԾ ԵՒ ՍՈՒԻԴԱԲԷ (ԹԱԳՆԻԱԾ)

ՍԻԱԽՈՒԾ Ա՞խ, դաւաճանութիւն. ով բացեց իմ դղեակի գոները: (Նայում է դէպի խորքը) Այդ ով է, որ արիւնարբու գազանի նման առաջ է նետում և անխնայ դիակներ է փոռում իր շուրջը: (Կայծակը շանթում է եւ Սիատուշը նկատում է Գարսիկազին) Ա՞հ, Գարսիկազ, ըստոր, խաբերայ, աւելի Ահրիման, քան Ահրիմանն ինքը: Նենզամիտ, դաւաճան, դու ինձ խաբեցիր, ել նետ չունեմ, որ քո կուրծքը խրեմ, բայց առ, ստացիր սրիս հարւածը: (Սուրը ճօճում է, ուզում է նետել, բայց յանկարծ Սուղաբէն ցցում է նրա առաջ շղարշնուաերին, մազերն արծակ):

ՍՈՒԴԱԲԵ Սիաւուշ, իմ գեղեցիկ, իմ արի ռազմիկ...

ՍԻԱԽՈՒԾ (Ձեռքը թուլանում է, չի կարողանում սուրը նետել: Իմ ի խորքից մի նետ զալիս դիպում է նրա թեւին): Ա՛հ, դու այստեղ ես, դու՝ իմ հոգու հրէշը, իմ էռւթեան խորտակիչ չար ոյժը, իմ անբիծ կեանքի սև կէտը... (Օրօրուում է, քիչ է մնում ընկնի, յենուում է պատին: Սուդաբէն աղեխարշ ծիչ է արծակում: Երեւում են թուրանցի երկու զինորներ. Սուդաբէն թագնում է: Զինորները շղթայում են Սիաւուշին եւ քարշ տալիս դուրս):

ՍՈՒԴԱԲԵ (Դուրս է զալիս թագստոցից) Ո՞ւր տարան նրան: Ոչ ոք իրաւունք չունի նրա կեանքի վրայ: Ես յաղթեցի նրան, ես էլ պիտի սպանեմ նրան իմ ձեռքով: Նայեմ նրա աչքերի խորքը, նրա ատելութիւնը ծծեմ և յետոյ սպանեմ: Բայց ոչ, չեմ կարող. ցանկանում եմ, բայց չեմ կարող: (Ներս են զալիս Աֆրասիաբը, Գարսիվազը եւ երկու զինորներ: Սուդաբէն շփոթած դուրս է գնում):

13.

ԱՖՐԱՍԻԱԲ, ԳԱՐՍԻՎԱԶ Եհ երկոՒ Զինիորներ

ԳԱՐՍԻՎԱԶ Տեսմը, արքայ, տեսմը, թէ դաւադիրն ինչպէս էր պատսպարել իր ամրոցում, ինչպէս նախայարձակ եղաւ: Դու չէիր հաւատում: Քո ընտիր զինորներից քանիսին փոեց հենց քո ոտների տակ: Նետերն ուղղում էր միշտ գէպի քեզ, քո կեանքն էր ուզում խել: ԱՖՐԱՍԻԱԲ Լաւ էր, որ իմ աչքերը շուտ բացեցիր, եթէ ոչ ես

կորած էի. կորած էր և Թուրանը:

ԳԱՐՍԻՎԱԶ Օձ էիր տաքացնում կրծքիդ վրայ:

ԱՖՐԱՍԻԱԲ Տաքացած օձն ուղեց ինձ խայթել. պիտի ջախջախեմ նրա գլուխը:

ԳԱՐՍԻՎԱԶ Տես, տես այն նամակները, որ բռնել են մեր մարդիկ: Այս նամակները գաղտնի սուրհանդակների միջոցով ուղարկում էր քո թշնամիներին: Կանչում է Ռոստամին, Քաւուսին և Արմէն իշխանին: Ա՛ռ, առ տես: (Նայակները յանձնում է նրան): Հաւատա, Էլի հաւատա քո Սիաւուշին, որդուդ պէս էիր սիրում նրան: ԱՖՐԱՍԻԱԲ Ամէն ինչ տեսայ, ամէն ինչ պարզ է: Բերել տուր նրան այստեղ, մորթիր իմ առաջ, որ սիրտս հովանայ: (Դարսիվազն ուզում է գնալ, թափով ներս է մըտնում Փարանգիսը):

14.

ԱՖՐԱՍԻԱԲ, ԳԱՐՍԻՎԱԶ, ՖԱՐԱՆԳԻՍ Եհ Զինիորներ

ՖԱՐԱՆԳԻՍ (Աֆրասիաբին) Ո՞ւր է իմ ամուսինը, ինչ ես արել իմ ամուսնուն, յետ տուր ինձ նրան, անարդար հայր, անարժան թագաւոր. Ի՞նչ է արել նա քեզ:

ԱՖՐԱՍԻԱԲ Քո ամուսինը մի նենգ դաւադիր է, մի ստոր ապերախտ, որ իմ հացը կերաւ և ինձ դաւաճանեց:

ՖԱՐԱՆԳԻՍ Սուտ է, նա քեզ չի դաւաճանել, քեզ խաբել են, յետ տուր ինձ նրան:

ԱՖՐԱՍԻԱԲ Նա պիտի մեռնի. Եթէ շատ խօսես, դու էլ կը մեռնես, քեզ էլ մեռցնել կը տամ:

ՖԱՐԱՆԳԻՍ Ա՛խ, դաժան մարդ, դաժան հայր, ինչու ես ուզում

ինձ դժբախտացնել որբ թողնել իմ զաւակին: Բայց
եթէ դու քո ձեռքը թաթախես նրա արեան մէջ, Ռոս-
տամը կը գայ, քո երկերը քարուքանդ կանի, կաւերի
ու քամուն կը տայ: Ետ տուր ինձ իմ Սիաւոշին, դու
իրաւունք չունես նրա կեանքը խորտակելու:

ԱֆրԱՄԻԱԲ Տարէք սրան այստեղից:

**ՖԱՐԱՆԳԻՍ Խղճա ինձ խղճա իմ զաւակին, անհայր մի թող նը-
րան, որբ մի թող նըրան:**

ԱֆրԱՄԻԱԲ (Դաժան) Տարէք սրան այստեղից, նա խենթացել է.
տարէք, փակէք մի սենեակում: (Երկու զինւորներ
քարշ տալով դուրս են տանում Փարանգիսին):

**ՖԱՐԱՆԳԻՍ Անգութ արքայ, ես ուրանում եմ քեզ, դու իմ հայ-
րը չես:**

15.

ԱֆրԱՄԻԱԲ ԵՒ ԳԱՐՄԻԿԱԶ

**ԳԱՐՄԻԿԱԶ Գունատւեցիր, արքայ, չը լինի՞ թէ զղացիր: Եթէ
խնայես նրան, միևնոյն է, նա քեզ չի խնայի:**

**ԱֆրԱՄԻԱԲ Ոչ, ոչ, բերել տուր այստեղ, բերել տուր վերջաց-
նենք: (Գարսիվազը դուրս է գնում եւ վերադառնում
է. նրան հետեւում են Սիաւոշը՝ շղթայակապ եւ
թուրանցի երկու զինւորներ):**

16.

ԱֆրԱՄԻԱԲ, ՍԻԱԻՈՒՇ, ԳԱՐՄԻԿԱԶ, ԶԻՆԻՈՐՆԵՐ, ԱՊԱ ՍՈՒԴԱԲԷ
ԱֆրԱՄԻԱԲ (Սիաւոշին) Այդպէ՞ս փոխարինեցիր իմ քեզ արած

լաւութեանը:

ՍԻԱԻՈՒՇ Այդպէ՞ս պահեցիր դու քո երդումը:
**ԱֆրԱՄԻԱԲ ես քեզ հիւրընկալեցի, տաքացրի քեզ իմ կրծքի վւ-
րայ, որ վերջն ինձ զաւաճանի՞ս:**

ՍԻԱԻՈՒՇ Այստեղ միայն մի զաւաճան կայ:

ԳԱՐՄԻԿԱԶ Եւ ովէ է այդ:

**ՍԻԱԻՈՒՇ Դու, հրէշ ծերուկ, դու: Դու սեացրիր Աֆրասիաթին իմ
առջն, դու սեացրիր ինձ նրա առջն:**

ԳԱՐՄԻԿԱԶ Տեսնում ես, արքայ:

**ԱֆրԱՄԻԱԲ Դաւաղրութեանդ փաստերն այստեղ են, ուրիշն մի
մեղաղրիր, դաւաղրիր, դու անարդ ապերախտ:**

**ՍԻԱԻՈՒՇ Դաւաճանին հաւատացողն ինքն էլ զաւաճան է հո-
գով: Իմ արեան փոխարէն արիւն է պահանջւելու, ար-
քայ, յորդառատ Զէյնունի չափ արիւն:**

**ԳԱՐՄԻԿԱԶ Այս, ի հարէք, դու արդէն գերել ես: Ցոյց տուր, ար-
քայ, փաստերն աչքերը խրիր:**

**ԱֆրԱՄԻԱԲ (Ցոյց տալով նամակները) Նայիր, տես զաւաճա-
նութեանդ պատկերը: Ճանաչնում ես քո սև կնիքը:**

**ՍԻԱԻՈՒՇ (Նայում է ապշած, ապա կատաղած թափահարում
է շղթաները եւ առաջանում դէպի Գարսիվազը) Սրա
է շղթաները եւ առաջանում դէպի Գարսիվազը (Յար-
սարքածն է, այս հմուտ դաւաղրի գործն է: (Յար-
ծակում է Գարսիվազի վրայ) Ա՛խ, թուրանցի,
ստոր թուրանցի, թուրանցի աւաղակ:**

ԳԱՐՄԻԿԱԶ Արքայ...

**ԱֆրԱՄԻԱԲ Զարկ, երբ նա հայնոյում է, զարկ, թող լոի: (Գար-
սիվազը դաշոյն իշեցնում է Սիաւոշի կրծքին, որը
օրորւելով ընկնում է գետին):**

ՍԻԱԻՈՒՇ Ստոր թուրանցի... (Արագ ներս է սլանում Սուղարէն

եւ Գարսիվազի ծեռքից խլում է դաշոյնը):

ՍՈՒԴԱԲԵ ես քեզ ասացի հալածիր, ես քեզ չասացի սպանիր.
իմ էր նա և իմ ձեռքով պիտի ընկնէր: Եւ դու կար-
ծեցիր, որ ես քեզ կը սիրմա, եթէ նրան սպանես: Ար-
քայ, Սիաւուշն անմեղ էր, այս ստորն էր գաւադիրը:
(Դաշոյնի հարսածն արագ իջեցնում է Գարսիվազի
կրծքին եւ նրան զետին է տապալում: Բոլորը մնա-
ցել են առջած. Աֆրասիաբը սարսափահար ծեռները
բարձրացրել է վեր ու մնացել է քարացած: Սուդա-
բէն կունում, զրկում է Սիաւուշի զլուխն ու լալիս է:
Սիաւուշը բացում է աչքերը, նայում է նրան եւ
կամաց շնչում է Սուլտանէ... Սուլտանէ... եւ մեռնում է:
Կայծակը շանթում է մի քանի անգամ, որոտը գո-
ռում եւ տեսարանը թաղում է խաւարի մէջ):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ի

Վ Ե Բ Զ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ



Եազդան — Բարւոյ Աստւածը

Աճրիման — Չարւթեան Աստւածը

Համաւերան — Եմին

Բալիս — Բերդաքաղաք, որ գտնուում էր Թուրանի սահմանի մօտ
(այժմեան ոռւսական Թուրքեստան)

Էսթախը — Հին Իրանի մայրաքաղաքը

Քենդաղար — Հին Թուրանի մայրաքաղաքը

Սեփահբող — Սպարապետ

Զաբոլստան — Սիաւան. Ռոստամին պատկանող նահանգը

Սիաւուշկերտ — Սիաւուշի քաղաքը

Շարսան — Սիաւուշի պալատը

ՀՀ Ազգային գրադարան



NL0384279

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵԼԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ՍԻԱՀՈՒՇ ԵՒ ՍՈՒԴԱԲՔ» Դրամա 1 պատկերով և 4 արարով
իրաներէն և ֆրանսերէն լեզուներով

«ԳԱՐՄԵՆ» Դրամա հինգ արարով

ԳԻՆՆ Է 5 ՌԻԱԼ
ԱՐՏԱՍԱԶՄԱՆ 10 ՖՐ.

ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՅՑԵՆ.

Téhéran (Iran), av. Postkhaneh, Imprimerie «Moderne».